

ԴԱՅԵՆՏ Մ. Գ. ԱՎԱՅԵՎ.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ԽՈՏԱԴԱՇՏԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

631.58 | 4646

26-77 24 August, 15.

Герброве зоряне північне
південне

30/m 11/m 186
55 55

567

5570 888

28

6

Mer

1
1

卷之三

ԴԱՏԵՐԱ Մ. Գ. ԱՆԴՐԵԱՊ.

631
Ա-77

ԱՄՓՈՒԹ Հ 1961 թ.

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԽՈՏԱԴԱՇԱՑԻՆ ՍԻՄԵՈՆ

A 17925 4550



ՏՐԵՄԵԼԵՑՄԵՆ
ԵՐԵՎԱՆ
1942

Меры

Доктор М. Г. Агаев
ТРА ОПОЛЬНАЯ
СИСТЕМА ЗЕМЛЕДЕЛИЯ
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1942

ԱՌԱՋԱԲԱՆ

Երկրագործության խոտադաշտային սխստեմի ուսմունքը սերտորեն կապված է ակադեմիկ Վ. Ռ. ՎԻՃԱՄՄԻ անվան հետ :

Նա տեղում ուսմունասիրել է արևմտյան կապիտալիստական երկրների գյուղատնտեսության զարգացման պատմությունը, բննադատորեն վերամշակելով նրա նվաճումները. ուսմունասիրել է Ռուսաստանի և արտասահմանի մի շարք տնտեսությունների պրակտիկան, որոնք փորձում էին կիրառել երկրագործության խոտադաշտային սխստեմը :

Սակայն ակադեմիկ Վիճամսի ուսմունքը՝ երկրագործության խոտադաշտային սխստեմի մասին, չեր կարող նրմանավորվել նախկին—ցարական Ռուսաստանի գյուղատնտեսության լայն պրակտիկայում :

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռեզուլտյայի հաղթանակով և աշխարհում աշխալիստական գյուղատնտեսության խոշորագույն արտադրության ստեղծմամբ միայն հնարավոր դարձավ ակադեմիկ Վիճամսի երկրագործության խոտադաշտային սիստեմի ուսմունքի իրագործումը :

Երեւայի ուսմունքը մինչև Պրոլետարական Մեծ Ռեզուլտյան մեջ տեխնիկական նշանակություն ուներ, ապա մեր օրերակում նա ձեռք է բերել ժառանգաւոր տնտեսական խոշոր նշանակություն։ Սովորողների ու կոլխոզների պրակտիկայում ակադեմիկ Վիճամսի երկրագործության խոտադաշտային սխստեմի կիրառումը, ացիտալիտական երկրագործության ընդհանուր ֆոնի վրա, նոր, հզոր զենք կհանդիսանա բնության վրա ներազդելու տեսակետից։

1934 թվի նոյեմբերին մեր պարտիան և կառավարությունը նշեցին ակադեմիկ Վիճամսի աշխատանքների բաղաքական նշանակությունը՝ գյուղատնտեսության բնագավառում առանձնա-

պես աչքի ընկնող աշխատանքների համար պարզեատքելով
նրան Լենինի շքամշամով :

Գյուղատնտեսության հետագա գարգացման խնդիրների վերաբերյալ պարտիայի և կառավարության վերջին տարիների որաշումներն ամենայն ակնհայտությամբ ցույց են տալիս, որ ակադեմիկ Վ. իլյամսի ուսմունքը՝ երկրագործության խոտադաշտային սիստեմի մասին՝ ավելի ու ավելի է արմատանում առցիալիստական գյուղատնտեսության արտադրության պլանիրում:

Ակադեմիկ Վ. Ռ. Վիլյամսի ուսմունքն առաջադեմն է համաշխարհային գյուղատնտեսության քեռիքայի մեջ: Ընդհանուրացնելով գյուղատնտեսության համաշխարհային պլանիվկայում ինչոք լավագույնն է՝ ուղղակի ուսմունքն ամբողջությամբ համապատասխանում է սոցիալիստական շինարարության խընդիրներին:

Երկրագործության խոտադաշտային սիստեմը չը կարելի դիմել որպես սոսկ խոռ ցանելու եղանակ: Սոցիալիստական գյուղատնտեսության արտադրության պայմաններում երկրագործության խոտադաշտային սիստեմն այն հիմքն է, որի առկայությամբ արտահայտվում է ազգությունիկական միջոցառումների ամբողջ կոմպլեքսի նշանակությունը:

Ակադեմիկ Վ. իլյամսի ուսմունքը «չիմանալու» կամ այն ոչ լրիվ հասկանալու հետևանքով, երկրագործության խոտադաշտային սիստեմի կիրառման միջնորդ 1937 թվի փորձերում խոչոր սխալներ տեղի ունեցան: Դասակարգային թշնամին ձգում էր կասեցնել երկրագործության խոտադաշտային սիստեմի կիրառումը մեր երկրում: Վեստարաբական կերպով ոչնչացքեցին բազմաթյա խոտարույսերի սերմերի պաշարները: Երկար ժամանակ դիմադրություն էր ցույց տրվում խոտադաշտային ցանքաշրջանառության կիրառմանը:

Պետք է նիշտ գիտենալ այդ ուսմունքի տեխնիկական բռնվանդակությունը: Պետք է հասկանալ երկրագործության խոտադաշտային սիստեմի տեղն ու նշանակությունը գյուղատնտեսության բարդ արտադրության մեջ, նրա փոխադարձ կապել ազրությունների այլ սիստեմների հետ: Այդ իմանալն անհրաժեշտ է երկրագործության խոտադաշտային սիստեմի նիշտ իրագործման և նացք բնագավառում վենարարության հետեւամբները վերացնելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՎԻ ԵՎԵՐԳԻՄԱՅԻ ԿԱՊՈՒՄԸ – ԳՅՈՒՂԱՏՅԱՇՍՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԽԵԴԻԲՆ և

Այն ամենն, ինչ կատարվում է Հողի մակերեսույթի վրա,
կապված է արելի ազբեցության հետ, որը հանդիսանում է լույ-
սի և ջերմության ազբյուր :

Հողի մակերեսույթի վրա անվերջ հավաքվում է խոշոր քա-
նակությամբ արելի էներգիա : Այդ էներգիայի մեծ մասը դնում
է Հողի մակերեսույթը տաքացնելու վրա, որի անհամաշխափ տա-
քացումն առաջացնում է օդի և ջրի շարժում, լեռների քայլա-
յում, սասագալաշտերի դոյլացում և այլն : Քամին, ջուրը և
սառուցը ցածրաբի և օվկիանոսների ու ծովերի վրա բաղմա-
զան աշխատանք են կատարում : Սակայն դրանում չէ՝ արելի
դիմագոր նշանակությունը մեր մոլորակի համար : Առեն իր է-
ներգիայով մատակարարում է կյանքի արտահայտության բոլոր
տեսակները : Հողի մակերեսույթի վրա, ինչումն էլ որ արտա-
հայտվելիս լինի կյանքը՝ շարժում, մարսողություն, բազմա-
ցում, միտք և այլն—այդ բոլորն անպայման էներգիայի ծախ-
սում են պահանջում :

Մարդուն անհրաժեշտ էներգիա մատակարարելու գործում
գյուղատնտեսությունը բացառիկ տեղ է գրավում : Նա միակ
արտադրությունն է, որ մարդուն մատակարարում է անհրա-
ժեշտ և անփոխարինելի կենսական էներգիա :

Հողի մակերեսույթի վրա գյուղություն ունեցող բազմատեսակ
օրգանիզմներից միայն կանաչ բույսերն են կանում արելի է-
ներգիան և նրան վերածում օրգանական նյութի քանակած է-
ներգիայի : Կանաչ բույսի ստեղծած օրգանական նյութը մնա-
ցած բույր օրգանիզմների կողմից օգտագործվում է որպես է-
ներգիայի և սննդի աղբյուր : Այս տեսակետից կանաչ բույսը
դյուղատնտեսական արտադրության զիմանքը միջոցն է հանդի-
սանում : Այդ արտագրության սկզբնական նյութը՝ արելի էներ-

գիւան է, վերջնական արդյունքը—օրգանական նյութերի էներգիան :

Կանաչ բույսերի (բուսաբուծության) այդ նշանակությունը որոշում է գյուղատնտեսական արտադրության առաջին և գյուղավոր խնդիրը, այն է՝ արեփ լույսի գործոն էներգիան վերափոխել օրգանական նյութի թաքնված էներգիայի, որ անհրաժեշտ է մարդկության կենսագործունեության համար :

Դրա հետ միասին գյուղատնտեսական արտադրությունը մարդկությանը տալիս է այլ նյութեր ևս՝ հագուստի, կոշիկենի, շնչանյութերի և գառելանյութերի համար :

Արևի ճառավայթի էներգիան հավասարաչափ տարածվում է լուսավորվող ամբողջ մակերեսույթի վրա։ Նա չի կարող կենտրոնացված լինել սահմանափակ տեղում։ Այդ պատճառով ամբողջ երկիրը պետք է ծածկված լինի կանաչ բույսերով։

Գյուղատնտեսական արտադրությունը պետք է տարածված լինի ամբողջ երկրում։ Մեր լայնությունների վրա գաշտերում և մարդագետիններում կանաչ լույսերը չեն կարող ամբողջ տարբն աճել։ Զմեռը սահմանափակում է այդ հնարավորությունը։ Այդտեղից էլ առաջանում է բուսաբուծության սեղունականությունը։

Ի տարբերություն կապիտալիստական գյուղատնտեսությունից, սոցիալիստական գյուղատնտեսական արտադրությունը պետք է ունենա աշխատանքի ամենաբարձր արտադրողականություն, որպիսին անմատչելի է կապիտալիստական հասարակությանը։ Վ. Ի. Լենինը նշում էր՝ «աշխատանքի արտադրողականությունը վերջին հաշվով ամենակարեւորն է, ամենահիմնականը նոր հասարակակարգի հաղթանակի համար» (Հատուր 24, էջ 342)։

Բույսերի արտադրողականությունը շատ բանով կախված է արտաքին պայմաններից, որոնցում նրանք զարգանում են։

ՅՈՒՅՍԻ ԿԸՆԿՑԻ ՊԱՇՄԱՆՆԵՐԸ

Բույսի կյանքը—դա օրգանական նյութի անընդհատ ստեղծումն է։ Օրգանական նյութ ամեղծելու համար բույսը պահանջում է 4 պայման՝ լույս, ջերմություն, անունդ և ջուր։

Լույսն արեփ ճառավայթի գործոն էներգիան է։ Դա արտադրության ակղքնական նյութն է։ Կանաչ բույսն արեփ լույ-

սի էներդիխան վեր է ածում օրդանական նյութի թաքնված է-
ներգիխայի, դյուղատնտեսական արտադրության մթերքի: Ա-
ռանց արևի ճառագայթի լույսի էներդիխայի կանաչ բույսը չի
կարող օրդանական նյութ ստեղծել: Առանց լույսի բույսը չի
աղբում, բերք չի տալիս:

Բայց էներդիխայի մի ձեր կարող է վերափոխվել մի այլ
ձեր այն ժամանակ միայն, երբ աշխատանքի աղբյուր կա: Աշ-
խատանքի այլպիսի աղբյուր է ճառայում արևի ջերմությու-
նը—կանաչ բույսի աշխատանքային էներդիխան:

Ինչպես մեխանիկական շարժիչը կարիք է զգում աշխա-
տանքային էներդիխայի՝ ջերմության, նույնպես և կանաչ բույսի
աշխատանքի համար անհրաժեշտ է աշխատանքային էներդիխա-
տանքի ջերմություն:

Բույսերը լույս և ջերմություն կլանում են իրենց վե-
րերկրյա կամաչ մասերի միջոցով, առավելապես տերեներով:

Բույսը սնունդ է ստանում օդից և հողից: Բույսերի սննդի
ամենամեծ մասը կազմում է ածխածինը: Բույսերը այն կլա-
նում են օդից, որպես ածխաթթու գազ: Գազը մասնում է տե-
քելիների մեջ: Որպեսզի բույսը կարողանա ածխաթթու գազից
ածխածինն օդտագործել, պետք է նրան տարալուծի ածխածնի:
և թթվածնի: Տարալուծումը միայն լույսի տակ է կատար-
վում:

Հետեապես, բույսի գլխավոր բաղկացուցիչ մասի՝ ած-
խածնի յուրացումը բույսի կողմից, հնարավոր է միայն արե-
գակի լույսի առկայությամբ:

Հողից բույսին անցնող սնունդը կլանվում է արմատների
միջոցով: Այն պետք է լինի ջրի մեջ լուծվող զանազան հան-
քային աղերի ձևով: Սրան են վերաբերում աղոտ պարունակող
սելիտրաներն ու ամոնիակային աղերը: Հողի մեջ եղած աղերից
բույսը յուրացնում է ֆոսֆորը, կալիումը, կիրը, երկաթը, և
իր համար անհրաժեշտ սննդի բաղկացուցիչ այլ մասեր:

Բույսի մեջ մանող ածխաթթուն, ջուրը և աղերը նրա մեջ
վեր են ածվում (կազմում են) օրդանական նյութի մասնիկնե-
րի: Այդ կապն իրադում է այն էներդիխան, որպիսին կա-
նաչ բույսը ձևափոխել է արևի ճառագայթների էներդիխայից:
Այդ նույն էներդիխան օրդանական նյութի պարզ մասնիկներից
կապում է ավելի բարդ միացություններ՝ ինչպես օրինակ բո-
ղիտակուցները:

Բերք տալու համար բացի լույսից, ջերմությունից և սննդից, բույսին անհրաժեշտ է նաև ջուր: Նա բույսի մեջ պետք է մտնի անընդհատ հոսանքով: Բույսերի համար ջրի պահանջը որոշում է երկու հիմնական պատճառով:

Առաջին պատճառն այն է, որ բույսերի սնունդը, որպեսին նրանք կլանում են հողից՝ աղերի ձևով, կարող է յուրացվել միայն լուծված զրությամբ: Բույսերի՝ ջրի պահանջի երկրորդ պատճառը հետեւանք է նրա գոլորշիացման անհրաժեշտության: Կանաչ բույսն անընդհատ աշխատող օրգանիզմ է: Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր օրգանիզմ տաքանում է և իր աշխատող մասերի գոլացում է պահանջում: Բույսը նույնական էր անընդհատ աշխատանքի ընթացքում, մանավանդ ցերեկը, տաքանում է (արևի ջերմության անընդհատ հոսանքի ժամանակ): և դովացում է պահանջում: Այդ գոլացումը կատարվում է բույսի կանաչ օրգանների մեջ եղած ջրի գոլորշիացման միջոցով: Զրի գոլորշիացումը ինցիդում է նրա աշխատող մասերի՝ կանաչ տերեփների ջերմաստիճանը, այլապես բույսը «կայբավի»:

Այս երկու պատճառով բույսերն իրենց գարգացման ժամանակաշընառում մեծ քանակությամբ ջուր են գոլորշիացնում: Միջին հաշվով նրանք իրենց չոր վիճակի կշռից 600 անգամ ավելի ջուր են գոլորշիացնում:

Զրի գոլորշիացման չափը տարբեր բույսերի մոտ տարբեր մեծությամբ է արտահայտվում: Այդ չափը կախված է բույսի աշխատանքի բարգությունից: Որքան բարդ է ստեղծվող օրդանական նյութի բաղադրությունն, այնքան ավելի մեծ աշխատանք է կատարում բույսը, հետևապես և ավելի չափ ջուր է գոլորշիացնում:

Այդ պատճառով լույսը, ջերմությունը, սնունդը և ջուրը բույսերի կյանքի անհրաժեշտ պայմաններն են՝ բերք ստեղծելու համար: Նրանք բույրն էլ միասնակալ անհրաժեշտ են բույսերին և մեկը՝ մյուսով չեն կարող փոխարինվել: Լույսը, ջերմությունը, սնունդը և ջուրը պեսք է տրվեն բույսին միաժամանակ և նրանց մաքրիմայլ պահանջի չափով: Այդ դործոններից որևէ մեկի պակասը անմիջապես անդրադառնում է բերքատը վության վրա:

Կանաչ բույսերի կյանքի տեսական հիմունքներին տիրապետություն և արտադրության պրակտիկայում նրանց մտածված ու հմտաբար կիրառելը սոցիալիստական աշխատանքի բարձր ար-

տաղբողականության, բարձր ու կայուն բերքի և տարեկան Տմիլիարդ փութ հացահատիկ արտադրելու առթիվ ժողովությունների ստանուրդ ընկեր ՍՅԱՀԻՆԻ կողմից առաջադրված լողունդի կենսագործման ուղղությամբ տարվող պայքարի հաջող լուծման նախապայմանն է հանդիսանում:

Մեր սոցիալիստական զյուղատնտեսության արտադրությունը ընթանում է միասնական ժողովրդա-տնտեսական պլանով: Հետեարար, կանաչ բույսերի աշխատանքի համար մենք կարող ենք և պետք է ստեղծենք այնպիսի պայմաններ, որի հետեանքով նրանց արտադրողականությունը իրոք որ ամենաբարձրը լինի:

ԽՈՒՍԱԲՈՒՆԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԵՌԱՎԱՏՆԵՑՄԱՆ ԱՐՑՈՂԲՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ «ՃԵԽ»

Կանաչ բույսերի մշակումը կոչվում է բուսաբուծություն: Դա զյուղատնտեսական արտադրության առաջին և ելակետային «ցեխն է»: Կենդանի կանաչ բույսը յուրահատուկ «արտադրության միջոց է», նա միաժամանակ նույն արդ արտադրության արդյունքն է: Կանաչ բույսը արտադրության մեջ, մեծ մասմբ, մեկ տարուց պակաս է ծառայում: Ցուրաքանչյուր ամռան վերջին կամ աշնան սկզբին ամբողջ բույսը կամ նրա կանաչ մասերը մեռնում են: Փահպանվում են միայն սերմերը բույսի հետագա կյանք կրողները:

Որպես արտադրության արդյունք, բույսը բաղկացած է երկու անհավասարաչափ մասից: Բերքի մի մասը—պլանային մթերքն է (ապրանքային արտադրանք), որ կազմում է ամբողջ բույսի քաշի մոտավորապես մեկ քառորդը: Բերքի արդ մասը ծառայում է մարդու համար որպես սննդի աղբյուր կամ անառնակեր և կամ հումք՝ տեխնիկական վերամշակման համար:

Բերքի մյուս մասը՝ ոչ-պլանային կամ ոչ-ապրանքային արտադրանքը բուսաբուծության կողմնակի արդյունքն ու բերքի վերամշակման տականքն է: Բերքի արդ մասը արտադրության մեջ կուտակվում է որպես թափոն, ծղուտ (հարդ), արմատապալարապտուղների տերևներ ու ցողուններ, մղեղ, քուսպ, մղախոտեր, հնձատեղի մնացորդներ, բերքահավաքից հետո հողի մեջ մնացող արմատներ և այլն:

Օրգանական նյութի այդ մեծ քանակությունն անպետք է մարդու անմիջական գործածման համար, մինչդեռ նրա ստեղծ-

ման վրա ծախսված է ջուր, պարարտանյութ, արտադրության միջոցներ և աշխատանք: Նրանց մեջ ահագին քանակությամբ կուտակված է արեկի ձևափոխված էներգիա: Միանդամայն ակնհայտ է, որ իր մթերքի մոռ երեք քառորդ մասը մարդու անմիջական գործածման համար անպետք ձևով բաց թողնող արտադրությունը արդյունավետ համարվել չի կարող: Այդպիսի քանակությամբ թափոնի կուտակումն ուժեղ չափով իջնում է ամբողջ դյուզատնտեսական արտադրության աշխատանքի արտադրողականությունը:

Սակայն այդ գեռ բոլորը չեն: Բուռարուծության թափոնը, ինչպես և յուրաքանչյուր օրգանական նյութ, բաղկացած է համեմատաբար քիչ թվով քիմիական տարրերից: Դրանցից գլխավորներն են՝ ածխածինը, թթվածինը, ջրածինը, աղուրը, ֆոսֆորը, կալիումը, ծծումբը, կալցիումը, մաղնեղիումը և երկաթը: Բացի թթվածնից, այլ բոլոր տարրերը կաղմում են հողի կեղեկի մեջի կըսի չնչին մասը: Այդ վաստը խիստ կարեոր է գյուղատնտեսական արտադրությունը ձիչտ կաղմակերպելու համար:

Ենթադրենք, որ բուռարուծության թափոնները մնալու են առանց քայլքայման: Այդ դեպքում նրանց ամեն տարրա դոյանալին ու կուռակվելին անխուսափելիորեն շատ ծանր հետևանք ներ: Կունենային: Բույսերի սնումն հանդիսացող հանքային բուլոր աղերը կդառնային մեռած օրգանական նյութ, որը կանաչ բույսերի սննդի համար բոլորովին անպետք է: Հանքային աղերի պակասությունը անհնար կդարձներ կանաչ բույսերի կողմից արեկի ճառագայթի էներգիայի յուրացումը: Երանք կդադարեցնեին իրենց գոյությունը: Կղաղաքեր մարդկության համար անհրաժեշտ էներգիայի ճեափոխումը: Բույսի հետ միասին հողի մակերեսությունը կդերանար նաև կյանքը:

Բնության մեջ կենդանի օրգանական նյութի գոյացումը սերտ կերպով կապված է մեռած օրգանական նյութի բայքայման հետ: Ազրած բոլոր կանաչ բույսերը, բուռարուծության և բերքի սկզբնական վերամշակման բոլոր տականքները քայլքայմում են այնպես, ինչպես քայլքայմում են մեռած բոլոր օրդանիքները:

Մեռած օրգանական նյութի քայլքայման հետեւանքով ստացվում են հանքային պարզ միացություններ, որոնք առաջ մտնում էին մարդկանց, կենդանիների և բույսերի կաղմի մեջ: Մեռած

օրդանական նյութի քայլայման պրոցեսը կոչվում է նրա բար-
կացուցիչ մասերի միներալիզացիա:

Օրդանական նյութը կարող է կուտակվել հողի մակերևույ-
թի վրա: Այդ գեպքում որպես տականքներ մնում են՝ ծղու-
(գարման), խոզան, տերևներ, մոլախոտեր, մղեղ և այլն: Այ-
նուհետև բույսերի նախնական վերամշակումից հետո կուտակ-
վում են հետեւյալ տականքները՝ քուսպ, թեփ, շաքարի ու ըս-
պիրոտի վերամշակման մնացորդներ և այլն:

Բուսաբուծության տականքներ կարող են դատվել և հողի
մեջ: Դրանք հնձի մնացորդներն են—բերքահավաքից հետո հողի
մեջ մնացած վերերկրյաց ընձյուղներն ու արմատները:

Հողի վրա կուտակվող բուսականության տականքների քայ-
լայման անհրաժեշտությունը միանդամայն պարզ է:

Այդ տականքների քայլայման ամենապարզ ձևը—դա նրանց
այլելն է: Մեռած օրդանական նյութն այդ գեպքում կվերած-
վեր մոխրի (հանքային աղեր) և դակերի (ջրի գոլորշներ, ած-
խաթթու և այլն): Պրակտիկայում հաճախակի դործադրում են
այլ միջոցը, այլելով դաշտի խոզանն ու ծղուուր:

Որքան և պարզ է բուսականության տականքների քայլայ-
ման այդ եղանակը, այնուամենայնիվ նաև պետք է անպետք հա-
ժարովի սոցիալիստական գյուղատնտեսության արտադրության
համար: Նախ և առաջ այրման ժամանակ օրդանական նյութի
թաքնված էներգիան բոլորովին անօգուտ ցնդում է օդի մեջ,
կամ վերափոխվում է ջերմության: Բացի դրանից, այրվելիս,
օրդանական մնացորդների ամենաարժեքավոր բաղկացուցիչ մա-
սը՝ աղոտը, ցնդում է օդի մեջ: Հետևապես, բույսի միջոցով
հողից վերցրած աղոտը չի վերադարձվում հողին և արդյունքը
լինում է այն, որ հողն աղքատանում է աղոտով:

Վերջապես, տականքներն այրելիս, կերպող օրդանական
նյութից դոյցանում են հանքային աղեր—սողա և պտուաշ, որոն-
ցից հողը հեշտությամբ կազուն է զատնում: Վերջին իր հեր-
թին ավելացնում է հողի մշակումների քանակը, վատացնում է
բույսերի՝ ջրով ու մնալով մատակարարումը և որպես այդ
բոլորի արդյունք, իջեցնում է բերքն ու աշխատանքի արտա-
դրողականությունը:

Չնայած տնտեսական ամեն կարգի նկատառումների, դաշ-
տում մնացած բուսականության տականքների այրելը պետք է
համարվի գիշատիչ և սովորողների ու կոլխոզների համար ան-

պետք եղանակի : Միայն բացառիկ դեպքերում կարելի է դիմել
դաշտում և ած օրդանական նյութերի մեջ մասսայի , օրինակ
մոլախոտերի այրմանը , երբ նրանց սիլոսացնել չե կարելի :

Հողի մակերեսույթի վրա կուտակվող բուսականության տա-
կանքների քայլայման երկրորդ եղանակն ավելի բարդ է : Այդ
եղանակը՝ բուսականության տականքները հողի մեջ վարձն է :

Եթե տականքները արմատապտուղներ , կանաչ տերեներ և
ցողուններ են , առա ամռան վերջին կամ աշնան սկզբին դրանք
հողի մեջ վարելով՝ կարելի է օգտագործել որպես պարարտա-
նյութ :

Տակայն տականքների բաղկացուցիչ մասերը տարալուծման
ժամանակ վերածվելով պարզ հանքային աղերի՝ բույսերի
սննդի , դյուրին կերպով լուծելի են դասուում բնական ջրի մեջ :
Աշնան անձրմեներից նրանք հողից լիմացվում են : Եվ ահա նորից
տակա է աշխատանքի արտադրողականության իջեցումը :

Ավելի վատ է լինում , երբ հողի մեջ վարում են ծղոտր ,
մղեղը և կաղամբի կոթունները : Նոր վարած փուխր հողի մեջ
օդին աղատ է թափանցում :

Այդ պարմաններում բակտերիաները սկսում են արագ կեր-
պով քայլայել ծղոտը և այլն : Բայց այդ ժամանակ բակտե-
րիաներին անհրաժեշտ է աղոտ : Ծղոտի մղեղի մեջ նա շատ քիչ
է : Այդ գեղղումը բակտերիաներն ստիպված են օգտագործել հո-
ղի մեջ եղած աղերի և նույնիսկ հումուսի աղոտը :

Այդ պատճառով քիչ քանակությամբ աղոտ պարունակող
տականքները հողի մեջ վարելուց հետո , հողում պակասում է
բույսերի աղոտային սննդի քանակը :

Այդ պակասումն այնքան ավելի նշանակալից է , որքան ա-
վելի շատ են հողի մեջ վարած նման տականքները : Հողի մեջ
բույսերի աղոտային սննդի քանակի պակասումն անխուսափելիո-
րեն իջեցնում է բերքատվությունը : Որպեսզի այդ տեղի չունե-
նա , անհրաժեշտ է լինում ավելացնել աղոտային պարարտաց-
ման դոզաները : Հետեւապես , բուսականության տականքների
քայլայման երկրորդ եղանակը նույնպես անպետք է : Նա նույն-
պես գյուղատնտեսական արտադրության մեջ իջեցնում է աշ-
խատանքի արտադրողականությունը :

Ա.Ն.Ս.Մ.Ա.ՊԱ.ՀՈՒԹԵՑՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԳԵՇՈՂԱԾՆՑԱԿԱՅՆ
Ա.ՐՏԱ.ԴՐՈՒԹԵՑՈՆ ԵՐԿՐՈՐԴԻ «ՑԵԽ»

Բուսականության ոչ ապրանքային տականքների օդուա-
ղործման ավելի կատարելագործված եղանակը պետք է համա-
րել նրանց այլ ձևերի օրդանական նյութերի վերածելը, ըստ
որում, հատկապես այնպիսի ձևերի, որոնք հնարավորություն
կտան դրանց օդուագործելու պարենավորման կամ վերամշակ-
ման համար:

Բուսականության ոչ պլանային մթերքներից—պլանային
արտագրանքների այլպիսի վերածումը հնարավոր է միայն
դյուզատնեսական կենդանիների միջոցով, որոնք այդ տա-
կանքները վերամշակում են (ծղոսը, մղեղը, պալարապտուղ-
ների տերեներն ու ցողունները, քուապը, թեփը և այլն) մասի,
ձարպի, բրդի, կազիի ու անասնապահության այլ մթերքների
և գոմազրի, որպես պարարտանյութ:

Անասնապահության զարգացման հետ, որպես բանող ուժ,
դյուզատնեսությունը միաժամանակ ստանում է անասուն:

Հողի մակերեսին կուտակվող բուսականության տականք-
ները կարելի է ստորաբաժանել չորս խմբի:

Տականքների առաջին խմբին են պատկանում՝ բամբակենու,
ծիսախոտի, արևածաղկի, սերմացու արմատապտուղների ցո-
ղունները և այլն: Տականքների այդ խումբն իր մեջ մեծ քա-
նակությամբ փայտանյութ է պարունակում, որը բույսին ամ-
րության է տալիս: Այդ պատճառով նման տականքները որպես
անասնակեր—անարժեք են: Երանք կարող են օդուագործվել որ-
պես վառելանյութ կամ չինանյութերի հումք և կամ կոմպոսի-
տիչոցով վերածվել պարարտանյութի:

Տականքների 2-րդ խմբին են պատկանում ծղոտը և մղեղը:
Տականքների այդ տեսակն ըստ իր քանակի ամենից առատն է:
Նա պղոտի շատ չնչին քանակություն ունի: Ծղոտը և մղեղը
առավելապես բաղկացած են անաղոտ օրդանական նյութերից:
Դարնանացանի ծղոտը և մղեղը պետք է օդուագործվեն որպես
ոչ աղոտային կեր, աշնանացանի ծղոտը՝ որպես ցամքար, ըն-
դեղենների ծղոտը և մղեղը որպես աղոտային կեր:

Տականքների երրորդ խմբին են դասվում արմատապտուղների
ու պալարապտուղների տերեններն ու ցողուններն և այլ տա-
կանքները: Բայց իրենց որպես նրանք մոտենում են երկրորդ

խմբի տականքներին, տարբերվելով նրանցից միայն ջրի մեծ պարունակությամբ։ Այդ տականքները նույնությամբ պահպանվել չեն կարող և պետք է ենթարկվեն կամ արհեստական չուրացման կամ սկզբանական չուրացման։

Տականքների 4-րդ խումբը—խոտացրած կերերն են՝ քուսպը, թեփը և այլն։ Դրանք բոլորն էլ մեծ քանակությամբ աղոտ են պարունակում։ Կենդանիների սննդառության գործում անազոտ և աղոտ պարունակող նյութերը տարբեր նշանակություն ունեն։ Որպես անասնակեր օգտագործելիս՝ անազոտ բուսական նյութերը վեր են ածվում ջերմության։ Միայն աղոտ պարունակող նյութերը կարող են տալ դիմամիկ էներգիա, որպիսին անհրաժեշտ է կենդանիների աճման և բազմացման համար։

Սակայն բուսաբուծության աղոտ չպարունակող տականքներն աղոտայինների վերամշակելու համար կարող են օգտագործել միայն որոճող կենդանիները՝ խոշոր ու մանր եղջերավոր անսունները և ուղարկություն ուղարկությունները։

Նրանք ունեն բարդ ստամոքս, որի մեջ կենակցում են բաղմանվածի միկրոօրգանիզմներ, գլխարկություն ստորին, ոչ կանաչ բույսեր։

Միայն նրանք ընդունակ են անազոտ բուսական նյութը վեր ածելու աղոտ պարունակող օրգանական նյութի։ Որոճող կենդանու ստամոքսում ապրող միկրոօրգանիզմներն այդ աշխատանքը կարող են կատարել, եթե նրանք անհրաժեշտ քանակությամբ աղոտ պարունակող կեր ստանան։

Զիերը, խողերը, ճակարները և թաշունները պարզ ստամոքս ունեն։ Նրանց մոտ ստորին—ոչ կանաչ օրգանիզմները մարսողությանը չեն մասնակցում։ Այդ սկատճառությունը անընդունակ են անազոտ բուսական տականքներն անասնապահության թանկարժեք մթերքների վերածելու։ Նրանք կարող են սնվել միայն խոտացրած կերերով։ Ոչ-աղոտային կերի նշանակությունը պարզ ստամոքս ունեցող կենդանիների սննդի մեջ հանդում է միայն կենդանու մարմնի ջերմաստիճանի պահպանմանը։

Ահա թե ինչու ձիաբուծությունը, խողաբուծությունը, ճակարաբուծությունը և թոչնաբուծությունը զյուղատնտեսական արտադրության մեջ կարող են լինել որպես ինքնուրույն ճյուղ։

Բուսաբուծությունը նրանցում գրավվում է օժանդակ «ցեխ»-ի

դրություն, այն ժամանակ, երբ խոշոր ու մանր եղջերավոր անսառունների զարգացումը հանդիսանում է օժանդակ «ցեխ»՝ դլխավոր—բուսաբուծական «ցեխին» կեց:

Կենդանիների նորմալ զարգացման և նրանց առավելագույն մթերատվության համար տրվող կերի մեջ անպայման պետք է վիտամիններ մտնեն: Դրանք հասուկ նյութեր են, առավելապես չափակուցներ: Նրանց պակասության կամ բացակայության պեկում գաղարում է կենդանիների աճն ու բազմացումը: Բացի դրանից, ուժեղ չափով ենթակա են լինում հիվանդությունների: Վիտամին ամենից շատ պարունակվում է արոտի և չոր կանաչ կերի մեջ: Այդ պատճառով առանց վիտամինային կանաչ կերի՝ չի կարող պրոդուկտիվ անասնապահություն լինել:

Անասնապահության կանաչ կերի բազան պետք է կազմի դյուզատնտեսական արտադրության պարտագիր բաղկացուցիչ մասը:

Վերն ասածից կարելի է եղրակացնել, որ անասնապահությունը անխղելիորեն կազմված է բուսաբուծության հետ: Առանց անասնապահության, բուսաբուծության նպատակահարմար կազմակերպումն անհնարին է: Անասնապահությունը կաղմում է դյուզատնտեսական արտադրության երկրորդ «ցեխի»: Նա պարստադիր է և որակապես համասրազդոր է բուսաբուծության «ցեխ»-ին:

Որպես արտադրություն, անասնապահությունն ունի այնպիսի առանձնահատկություններ, որոնք մոտ են բուսաբուծության առանձնահատկություններին: Անասուններն իրենց կերած նյութերի մոտավորապես միայն մեկ քառորդին են վերամշակում պլանային արժեքավոր մթերքի: Այդ նյութերի մնացած երեք քառորդը փոխվում է անասնապահության թափթփուկների ածխաթթվի, ջրի և դլխակորապես՝ դռմաղրի:

Գոմազդը պարունակում է բույսերի անդի համար բաղկացուցիչ բույս մասերը: Հատկապես նրա մեջ շատ է աղոսը բույսերի անդի ավելի արժեքավոր մասը: Բայց կանաչ բույսը չի կարող օդապործել գոմազդը, երբ բույսի սննդի բաղկացուցիչ մասերը նրա մեջ գտնվում են օրդանական նյութերի ձևով:

ԵՐԿՐԱԴԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՎԵՍ ԴԵՌԻՎԱՏՆԵԽԱԿԱՆ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ «ՑԵԽ»

Գոմաղբն անպայման պետք է քայքայվի մինչև Հանքային պարզ միացությունների աստիճանի։ Այդ խնդիրը կատարում է դյուլատնուեսական արտադրության երրորդ «ցեխ»՝ երկրագործությունը։ Նրա վրա է դրվում նաև բուսաբուծության այն տականքների քայքայումը, որոնք չեն կարող օգտագործվել անասնապահության «ցեխում»՝ ինչպիսիք են խողանը, բերքահավաքից հետո մնացած արժատները և այլն։

Երկրագործությունն օգտագործում է նաև կենդանի օրգանիզմները։ Դրանք—ստորին, ոչ կանաչ բույսերն են, չողի միկրոօրդանիզմները։ Դրանք քայքայում են հողի մեջ կուտակվող օրգանական նյութերը, նրա մեջ մացվող գոմաղբը և այլ օրգանական պարարտանյութերն ու նրանց բաղկացուցիչ մասերը վեր են ածում կանաչ բույսերի սնման համար յուրացվող ձերի։ Բույսերի այդ սնունդը օգտագործվում է բուսաբուծության «ցեխում»։

Երկրագործության «ցեխ»-ի արտադրական նշանակությունը ոչ մի կերպ չի կարելի թերազնահատուել։ Նա օգտագործում է անասնապահության և բուսաբուծության «ցեխ»-երի տականքները, դրանով իսկ բարձրացնում է անասնապահության և բուսաբուծության աշխատանքի արտադրողականությունը։

Հետեւապես, չողի մակերեսույթի վրա կուտակվող մեռած օրգանական նյութերի քայքայումը տեղի է ունենում երկրագործության օդնությամբ։

Երկրագործության «ցեխ»-ի աշխատանքը որոշում է գյուղատնտեսական արտադրության երրորդ խնդիրը։ Այդ խնդիրը՝ բուսաբուծության և անասնապահության տականքների բնական քայքայմանն ուղղություն տալին է՝ կանաչ բույսերին սնունդ մտակարարելու համար։

Մեռած օրգանական նյութի քայքայման տեսական և արտադրական նշանակությունը համասարժեք է՝ կենդանի օրգանական նյութ ստեղծելուն։ Առանց օրգանական նյութի քայքայման—օրգանական նյութի ստեղծումն անհնարին է, հետեւապես մարդկության սննդի և նրա տեխնիկական արտադրությունների համար հումքի ստեղծումը՝ նույնպես հնարավոր չէ։

ԴՅՈՒՂԱՏԵՍԵՍԱԿԱՆ ԱՐՑՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՐԵԲ «ՃԵԽԵՐԻ»,
ԱՆԽԶԵԼԻՌՈՒԹՅՈՒՆԸ

Դյուղատնտեսական արտադրությունը—դա մարդկային հասարակության բարդ ազգեցությունն է բնության վրա՝ օրդանական նյութի թաքնված էներգիա ստանալու նպաստակով:

Նա հիմնված է կանաչ բույսերի, կենդանիների և միկրոօրդանիվճռների կուլտուրայի վրա: Դրա համապատասխան, նա բաղկացած է երեք «ցեխ»-ից՝ բուսաբուծական, անասնապահական և երկրագործական: Այդ «ցեխերն» անխզելի են, փոխադարձարար կազմված են միմյանց հետ և փոխադարձարար պայմանագործական: Նրանց համակցությունը մարդկային հասարակության ողջ դյուղատնտեսական արտադրության միասնական

կորիզն է:

5/792 Ժողովրդի թշնամիները փորձում էին աղավաղել դյուղատնտեսական արտադրության կազմակերպման այդ միակ ճիշտ միմքը: Դրա համար նրանք ձգտում էին ստեղծել չափազանց ժամանակի փայտացած ձեռնարկություններ, բուսաբուծությունն անջառելով անանապահությունից:

Սոցիալիստական դյուղատնտեսության արտադրության կազմակերպման նման ճանապարհը ուղղված էր սոցիալիստական շինարարության վիմեցմանը ՍՍՌՄ-ում: Պարտիան ու կուսակարությունը հայտաբերեցին նրա վնասարարական էությունը և վճռականորեն լիկվիդացիայի ենթարկեցին այն:

Կապիտալիստական դյուղատնտեսությունը չի կարող նպատակահարմար ձևով կազմակերպված լինել: Արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը ժխառում է դիտության և տեխնիկայի առաջավոր նվաճումների կերպուման հնարավորությունը:

Այդպես չէ մեր սոցիալիստական պայմաններում: Պրոլետարիատի գիկտատուրան վերացրեց քաղաքական, տնտեսական և տեխնիկական այն բոլոր պատճենները, որոնք խանդարում էին բարձր արտադրողականության սոցիալիստական դյուղատնտեսության արտադրություն կազմակերպելու գործին: Այսարհում սովորագիրն ու կոլուղային միահի խոշորագույն արտադրությունը, զինված նորագույն տեխնիկայով, որոշեց նրա չտեսնված ծաղկման հնարավորությունը: Ստախանովականների կողմից ստացվող բերքատվությունն արդեն գերազանցել է համաշխարհային բոլոր ցուցանիշները:



Ստախանովականների վորձը յուց է տալիս , որ բարձր
բերքը պետք է դառնա ընդհանուր երեսոյթ՝ սովորողների յու-
րաքանչյուր բաժանմունք , կովսողների յուրաքանչյուր ըրիդագ-
պետք է հասնի ստախանովականների կողմից ստացված բեր-
քատվության : Սակայն այդ բերքատվությունն ևս սահմանային
չէ . նա պետք է է՛լ ավելի բարձրանա :

Դրա համար անհրաժեշտ է է՛լ ավելի զինվել թեորիայով ,
տէրապետել բուշելիովին , մինչև վերջ յուրացնել գյուղատնտե-
սական արտադրության տեխնիկան և այն ճիշտ կիրառել :

ԲՈՒՅԱՄԵՐԻ՝ ԶՐԻ ԵՎ ՍՆՆԴԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀՈՂՈՒՄ

ԹՈՒՍՍ.ԲՈԽ.ԾՈՒ.Ա.Ա.Ա. ՈՐԵՆ.ՔԸ

Հենց որ դարձանալին արևի ճառապայթների տակ բացվում է հողի թեկուղ մի փոքր կտոր, նա արագ ծածկվում է բույսերի կանաչ գորսությունով։ Լույսի, ջերմության, մննդի և ջրի միաժամանակ հոսանքը գեղի բույսը ապահովում են նրա զարդացման հնարավորությունը։ Կանաչ բույսի այդ հատկությունը՝ զարգանալ միայն իր կյանքի բոլոր պայմանների (Փակտորների) միաժամանակ առկայության դեպքում, կազմում է բուսաբուծության հմտնական օրենքը, կամ ըստ հին արտահայտության՝ «երկրագործության օրենքը»։ Բույսերի կյանքի բոլոր ֆակտորներն անպայման համապոր են և անփոխարինելի։ Հետևապես, բերքի մեծությունը կախված է նրանից, թե բույսերի պրոդուկտիվ աշխատանքի համար ինչ չափումը լրիվ են արամացրված բոլոր պայմանները։ Կանաչ բույսերի կյանքի բոլոր ֆակտորների (լույսի, ջերմության, մննդի և ջրի) վրա միաժամանակ կատարած աղղեցությունը կազմում է բերքատվության անընդհատ, անսահման բարձրացման ընդհանուր տեխնիկական պայմանը։

Հասկանալի է, որ մարդկային հասարակության զարգացման դանապան աստիճաններում մարդու աղղեցությունը բույսերի կյանքի պայմանների վրա տարբեր է և կախված է վիտության ու տեխնիկայի մակարդակից։ Մեր երկրի սոցիալիստական գյուղատնտեսության արտադրության զարդարման պայմանները բերքատվության անընդհատ բարձրացման անսահման հնարավորություններ են տալիս։

Երբ մենք աղղում ենք բույսի կյանքի միայն մեկ պայմանի, օրինակ ջրի վրա, անփոփոխ թողնելով մնացած բոլոր պայմանները, ապա բերքն սկզբում կակսի բարձրացմակ, իսկ

Հետո՝ ուժեղ լիջնել։ Այդ պայմանի ամենասուժեղ արտահայտության գեղքում բույսը կկործանվի։ Իսկ բերքի բարձրանալու գեղքում՝ երբէք հաղասարաչափ հավելում չի լինի։ Հնայած ջրի հավասարաչափ ավելացմանը, բերքի յուրաքանչյուր նոր հավելում նախորդից միշտ ցած կլինի։

Այդ գըությունը պարզ լուսաբանված է Հերթելի փորձում։ Մյուս հավասար պայմանների գեղքում, ջրի հավասարաչափ ավելացումը 10 տոկոսով, յուրաքանչյուր փորձանոթության տակիս է զարու բերքի հետևյալ հավելումը։

Հողի խոնավությունը (տոկոսներով)	0	5	10	20	30	40	60	80	100
Քարու չոր մասսայի հողի երեսի բերքը (գեցիգբամ)	0	1	63	146	190	217	227	197	0
Բերքի հավելումը յուրաքանչյուր 10 տոկ. ջրի ավելացման գեղքում (գեցիգբամ)	—	—	+124	+83	+44	+27	+5	-15	-99

Վերջին տողում շատ պարզ արտահայտված է բերքի հավելումների նվազումը՝ ջրի յուրաքանչյուր հաղասարաչափ ավելացման հանգեցող, երբ հողի մեջ բույսի կյանքի բռլոր մնացած պայմանները պահպանված են անփոփոխ գրությամբ։

Հետևաբար, երբ մենք մշակում ենք բույսը և փոխում ենք նրա կյանքի միայն մեկ պայմանը—անփոփոխ թողնելով ըուրացածները, մենք չենք կարող զգալի չափով բարձրացնել բերքը։ Նա դառնում է սահմանային։ Ամենաբարձր բերքն ստացվում է միայն կիսով չափ մասակարարելու, կամ հողի մեջ մնացած ֆակտորները եռ փոփոխելու գեղքում։ Այլապես հետագա բռլոր ավելացումներն իջեցնում են բերքը։

Բույսերի կյանքի պայմանների վրա ոչ ճիշտ ներառելու հետևանքով, բերքի իջեցման երեսութը բուրժուական գիտնականները դարձրել էին «քնության օրենք»։ այսպես կոչված—«հողի նվազող բերքիսպաթյան օրենք»։ «Բնության օրենքների» վրա ճիմնիկելն անհրաժեշտ է տիրապետող գասակարգին՝ բուրժուագիտային, ժողովրդական մասսաներին խարելու և դյուզում դասակարգային պայքարը քողարկելու համար։

ՀԱՂԻ ԹԵՐԹԻՌԻԹՅՈՒՆ, ԱՆԿԱՄՊԱՆ, ԹՈՒՐՖՈՒԽԱՎԱՆ, «ՕՐԵՆՔՆ»
ԱՆՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարքսը և Լենինը իրենց աշխատություններում ցույց են տվել «Հողի բերիության անկման օրենքի» ամբողջ սհանկությունը։ 1901 թվին Լենինը դրում էր — Այսպիսով՝ «Հողի բերիության անկման օրենքը» բոլորովին կիրառելի չէ այն դեպքերում, եթե տեխնիկան առաջադիմում է, եթե արտադրության եղանակները վերափոխվում են։ Նա ունի միայն խիստ հարաբերական և պայմանական կիրառում այն դեպքերում, եթե տեխնիկան մնում է անփոփոխ։ Ահա թե ինչու, ոչ Մարքսը, ոչ էլ մարքսիստները չեն խոսում։ այդ «օրենքի» մասին, այլ դրա մասին աղաղակում են միայն բուրժուական դիտության ներկայացուցիչները» (Վ. Ի. Լենին, երկեր հ. IV, էջ 181)։

Հենց որ մենք սկսենք ազգել բույսի կյանքի բոլոր չորս ֆակտորի վրա—բերքն անշենունը կուսի բարձրանալ։ Այդ եղբակացությունը խիստ կարենը է բուսաբուծության ճիշտ կադմակերպման, գյուղատնտեսական արտադրության արդյունավետությունը բարձրացնելու տեսակետից։ Բույսերի կյանքի ֆակտորների համազորության օրենքի ճիշտ երադորժումը, գյուղատնտեսական արտադրության ուացիոնալ կազմակերպման ելակեան է հանդիսանում։

«Հողի բերիության անկման օրենքը» դուրս էր բերված փորձերից, սակայն փորձերը կատարել են կոպիտ սխալներով։ Այսոեղից ընականաբար սխալ էր նրանց եղբակացությունը, ոչ ճիշտ և ինքն «օրենքը»։ Բուրժուական փորձերի այդ սխալների հայտաբերումը պատկանում է ակադեմիկ վ. Ռ. Վելյամսին։

Երբ փորձերում փոխում են բույսի կյանքի որևէ մեկ պայմանը միայն, առաջ ատելը կարծում են, որ նրա կյանքի մնացած բոլոր պայմանները մնում են անփոփոխ։ Դրանումն է այդ փորձերի գլխավոր և կոպիտ սխալը։ Խոկապես, երբ օրինակ փորձում տվելացնում են միայն ջրի քանակությունը, ապա դրանով փաստորեն միաժամանակ փոխում են կանաչ բույսի կողմից յուրացվող սննդի քանակությունը՝ պակասեցման իմաստով։

Նման պակասեցման պատճառը բավականին պարզ է։ Զուրն անցնելով հողի մեջ, բանում է նրա մասնիկների միջի խոշոր և մանր տարածությունները, միաժամանակ վանելով օդը։ Հողի մեջ, որքան շատ է ջուրն, այնքան քիչ է օդը։ Հողի մասնիկ-

ների միջի բոլոր տարածությունները ջրով լցվելիս նրանից ամ-
բողջովին դուրս է վանվում օդը: Երբ հողում շատ օդ կա, նրա
մեջ շատ է նաև կանաչ բույսերին մատչելի սնունդը: Ընդ-
հակառակը, երբ հողում օդը քիչ է կամ բոլորովին բացակա-
յում է, առա նրա մեջ բույսերին մատչելի սնունդը քիչ է կամ
բոլորովին չկա:

Դաշտային հողերում հանդիպում են մեծ քանակությամբ
միկրոօրդանիզմներ, գլխավորապես բակտերիաներ: Մեկ հեկ-
տար տարածության հողի 20 ամ խորության շերտի մեջ գտն-
վում են ամենաքիչը 3·000 000 000 000 000 միկրոօրդանիզմներ:

Հողում ապրում են երկու տիպի բակտերիաներ, ո-
րոնցից առաջինը չնչելու համար օդի հոսանքի կարիք է
զգում: Այդ օդը պետք է պարունակի թթվածնի աղատ գաղ: Այդպիսի բակտերիաները կոչվում են աերոբ, այսինքն օդի ա-
ղատ հոսանքի դեպքում ապրողներ: Նրանք քայլայում են հողի
մեռած օրդանական նյութը, երբ նրա մեջ օդ է լինում: Նման
քայլայման արդյունքն են հանքային աղերը—կանաչ բույսերի
պատրաստի սնունդը: Քայլայումը զնում է արագ և անընդ-
հատ:

Հողի մյուս բակտերիաները ոչ միայն օդի աղատ թթվածննե
կարիք չեն դդում, այլ և թթվածննը նրանց համար նույնիսկ
վնասակար է: Այդպիսի բակտերիաները կոչվում են աներոբ,
այսինքն՝ առանց օդի թթվածնի ապրողներ: Նրանք նույնպես
քայլայում են հողի մեռած օրդանական նյութը, բայց առանց
թթվածնի ներկայության: Այդ դեպքում մեռած օրդանական
նյութից և բույսերի յուրացվող սննդից գոյանում են տարբեր
միացություններ, որոնք կանաչ բույսերի համար, որպես
սնունդ, բոլորովին անպետք են:

Հետևաբար՝ հողի մեջ եղած օդի քանակությունը որոշում է
հողի միջի բակտերիաների կարքի տարբերությունը: Իր հեր-
թին հողի բակտերիաների կարքից է կախված կանաչ բույսերին
պիտանի սննդի քանակությունը: Հողի մեջ որքան շատ օդ կա,
այնքան շատ է նրա մեջ կանաչ բույսերի սնունդը: Ընդհակա-
ռակն, որքան քիչ է հողի միջի օդն, այնքան քիչ է նրա մեջ
բույսերի սնունդը:

Այստեղից եղակացություն, երբ հողի մեջ փոխվում է
միայն ջրի քանակը, նրա մեջ միաժամանակ փոխվում է և կո-
ռաչ բույսերի կողմից յուրացվող սննդի քանակը:

Բայց այդ փոփոխությունները տեղի են ունենում հակառակ հարաբերությամբ, այսինքն, հողի մեջ ջուրը որքան շատ է, այնքան քիչ է սնունդը և ընդհակառակը; Հողի այս դրության դեպքում, երբ նրա մեջ ջուրը շատ է, բայց սնունդը քիչ և ընդհակառակը՝ երբ սնունդը շատ է, բայց ջուրը քիչ, առաջանում է ջրի և յուրացվող սննդի անտարգոնիզմ: Դա չափազանց վնասակար է բույսի զարգացման համար: Շատ փորձերի կողիում սխալը հենց այն է, որ նրանցում չի եղել միատեսակ աղդեցություն բույսերի կյանքի բոլոր Փակտարների վրա:

Ոչ ճիշտ փորձը սիսալ եղբակացությունների է բերում: Նման եղբակացությունները ոչ թե «հողի բերբության անկման օրենքի» արդյունք են, այլ հետևանք՝ բույսերի կյանքի պայմանների վրա ոչ ճիշտ աղդեցության:

ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՍՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՐԱՌՈՒ ԽՈՒՄՔԸ

«Հողի բերբության անկման օրենքի» վերլուծումը մեկ անդամ ևս մեզ համոզում է այն բանում, որ բերքի մեծությունը կախում ունի նրանից, թե որքանով լրիվ են բավարարված բույսերի կյանքի բոլոր պայմանները: Այդ պայմաններից մի խումբը մեր անմիջական ներազդեցության հնարավորությունից դուրս է դառնվում: Դա՝ արկի լայսը և ջերմությունն է, որոնք բույսի վրա աղդում են ուղղակի՝ անմիջականորեն: Այդ պատճառով մենք միայն ընտրության (սելեկցիայի) օգնությունը կարող ենք ստեղծել բույսերի այնպիսի նոր տեսակներ, որոնք արեի ձառագայթների էներգիայի կազելու ավելի մեծ ընդունակություն ունենան:

Մնացած երկու պայմանները՝ ջուրը և մոխրային ու աղդտային սնունդը աղդում են բույսի վրա անուղղակի ճանապարհով՝ հողից անցնելով բույսին, միայն վերջինիս արմատների միջոցով: Դա մեզ լրիվ հնարավորություն է տալիս ցանկացած հարաբերությամբ փոխել հողից բույսին անցնող ջրի և սննդի հասանքը:

ՀՅՈՒԽ ԲԵՐԲՈՒՅՈՒԹՅՈՒՆԸ

Անման և զարգացման ամբողջ ժամանակաշրջանում բույսներին ջրով, մոխրային ու աղդուային սննդով միաժամանակ, ամենամեծ քանակությամբ և անընդհատ մատակարարելու ունակությունը՝ կոչվում է հողի բերբություն:

Հողի բերրիությունը — գյուղատնտեսական արտադրության կենացքարոնական խնդիրն է: Որքան բարձր է հողի բերրիությունը, բույսերն այնքան լրիվ են օգտագործում լույսը, ջերմությունն ու ածխաթթուն, որքան արդյունավետ է բույսի աշխատանքը, այնքան բարձր է բերքը:

Հասարակ գիտողությունը պարզ կեսով ցույց է տալիս, որ միենալու հողամասը միշտ միատեսակ բերրիություն չի ունենում: Նույնիսկ միմյանց կից գտնվող առանձին հողակառները հաճախ ունենում են տարբեր բերրիություն:

Հետեւարար, հողի բերրիությունն անընդհատ փոխվում է, ինչպես բարձրացման, նույնպես և ավելի հաճախ՝ անկմանը ուղղությամբ: Այդ փոփոխությունների էության ճիշտ հասկանալուց է կախված մեր կարողությունը՝ ուղղելու հողի բերրիության զարգացումը սոցիալիստական շինարարության պահանջների համաձայն:

Կուլտուրական բույսերի, անասունների, մեքենաների և դորժեքների հետ միաժամանակ հողն արտադրության կարևորագույն միջոց է հանդիսանում:

Սակայն հողը զգալի չափով տարբերվում է արտադրության մյուս միջոցներից:

Վատ սերմերը, նվազ արդյունավետ անասունները, մաշված և չկատարելազորժված մեքենաները, ցածրորակ պարարպած կարող են փոխարինվել տեսակավոր սերմերով, նոր բարձր արտադրողականությամբ տոհմային անասուններով, նոր բարելավված մեքենաներով, արդյունաբերական արտադրության հանքային պարարտանյութերով:


Նույնիսկ ամենալավ խնամքի գեպքում մեքենան մաշվում է: Բանող և արտադրող անասունը նույնպես «մաշվում»: Ճերանում և մեռնում է: Մինչդեռ հողի ճիշտ օգտագործման դեպքում նա չի վատանում և չի մաշվում, այլ բարելավվում է: Որպես արտադրական միջոց, հողի առանձնահատկությունները որոշեցին այն, որ նրա բերրիության հարցը սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության համար վճռական զարժագալ:

ՀՕՂԻ ԲԵՐՐԻՈՒԹՅԱՆ ԿԱԽԱՌԵՄ Ն.Բ. ՍՏՐՈՒՏՈՒԹՅՈՒՆԸ

Հողի բերրիության աստիճանը որոշվում է նրանով, թէ հողը բանչ չափով է ընդունակ բույսին միաժամանակ ապահով:

վելու ջրով և յուրացվող սննդով: Թե մեկը և թե մյուսը հողի
մեջ պետք է լինեն ամենամեծ քանակությամբ: Հողի այդ ըն-
դունակությունը կախված է նրա ստրուկտուրային վիճակից,
այսինքն՝ այն մասնիկների փոխադարձ դասավորումից, որոն-
ցից կազմված է հողը:

Ստրուկտուրայի տեսակետից յուրաքանչյուր հող կարող է
լինել միմյանց հակառակ երկու դրությամբ: Եթե հողը գոյաց-
նող բոլոր մասնիկները միացած են միմյանց 1-ից—մինչև 10
միլիմետր տրամագիծ ունեցող առանձին կնճիկներով, նման
հողը կոչվում է կնճկային (ստրուկտուրային) (նկար 1): Կըն-



Անջատ-մասնի- Կնճկային Լուսավոր
կային ստրուկտուրա ստրուկտուրա ստրուկտուրա

Նկար 1. Հողի ստրուկտուրայի գանգան ձևերը:

ձիկները նրա մեջ կապված են կենդանի բույսերի արմատներով:

Այն դեպքում, եթե հողի մասսան կազմված է այնպիսի ան-
ջատ մասնիկներից, որոնք միացված չեն 1-ից—10 միլիմետրա-
նոց կնճիկներով, ապա նման հողը կոչվում է անջատ-մասնի-
կային (ոչ ստրուկտուրային) (նկար 1): Նման հողի առանձին
մասնիկները դասավորված են փուփր կամ սերտ կերպով:
Թրջելուց՝ նրանք միանում և վեր են ածվում համատարած
մասսայի: Կենդանի բույսերի արմատները հողի այդ մասսային
չեն կապակցում:

Նայած նման հողի մասնիկների փուփր կամ սերտ դասավոր-
վելուն, նրան անվանում են փոշիացած կամ կոշտու հող
(նկ. 1): Հողի կնճկային և անջատ-մասնիկային ստրուկտու-
րայի մեջ գոյություն ունեն բազմաթիվ փոխանցումներ:

Ամենաբարձր բերբիությունը հնարավոր է միայն կնճկային
ստրուկտուրա ունեցող հողում:

Եթե անձրև է գալիս կամ ձյունը հալվում է, ստրուկտու-

բային հողի վարելաշերտը կլանում է տարվա տեղումների ամբողջ ջուրը։ Զուրն արագ հոսում է կնձիկների մեջ եղած լայն անցքերով։ Նա թրջում է կնձիկներին և վայրկյանապես ծծվում նրանց մեջ։

Կնձիկների մեջ թափանցած ջուրը մնում է բուրովվին անշարժ, որովհետեւ անցքերի միջով ջուրը մեկ կնձիկի միջից չի կարող մյուսի մեջ անցնել։

Ուժեղ անձրև տեղալու կամ ձյան հալվելու դեպքում վարելաշերտի բուրը կնձիկները կարող են ջրով հագենալ։ Այդ դեպքում ջրի ազատ մնացորդը ծծվում է ենթահողի մեջ, Զորանալ կարող են վերին չերտի կնձիկների 2—3 շարքը միայն։ 1—10 միլիմետր խոշորությամբ կնձիկների վերին չերտի չորանալու և ենթահողի խորքը ծծվելու հետևանքով տեղի ունեցած ջրի կորուսար ամբողջ տարվա բուրը տեղումների 15%-ից չի գերազանցում։ Հետեւարար, կնձիկյին հողում բույսերի տրամադրության տակ մնում է տարեկան տեղումների ամբողջ քառակի 85%-ը։ Զրի այդ պաշարը մեծ է և կայտն։

Ջրից բացի, բույսերը պահանջում են նաև սնունդ։ Նա պետք է լինի ջրի մեջ լուծվող հանքային աղերի ձևով։ Բույսերի սննդի պահանջոր պաշարը հողում գտնվում է ջրի մեջ չլուծվող օրդանական նյութերի ձևով (արդատների մեռած մնացորդներ, հումուս, գոմաղը և այլն)։ Այդ պատճառով բույսերի սննդի լուծամար հողի մեռած օրդանական նյութը պետք է քայլքայիլի։ Այդ քայլքայումն իրականացնում են օդի ներկայությամբ ապրող բակտերիաները։ Այդ պահանջները բավարարում է կնձիկյին հողը, որը ջրի հետ միաժամանակ պարունակում է և օդ (կնձիկների արանքում)։ Գտնվելով յուրաքանչյուր, կնձիկի մակերեսին, բակտերիաները քայլքայում են մեռած օրդանական նյութը և անընդհատ գոյացնում են կանաչ բույսերի կողմից յուրացվող սնունդը։ Այսպիսով, կնձիկյին հողի մեջ միաժամանակ և շատ ջուր կա և բույսերի համար յուրացվող շատ սնունդ։ Երա մեջ չկա և չի էլ կարող լինել ջրի և յուրացվող սննդի անտորոնիդմի երեսություն։ Այդպիսի հողի բերքը բարձր է լինում և կայտն։

Տիմիրյագեի անվան գյուղատնտեսական ակադեմիայի փորձադաշտի կնձիկյին տարուկտուրա ունեցող հողում, ակադեմիկի Վ. Բ. Վիլյամսը դեռ անցյալ դարի վերջում ստանում էր հացահատիկի շատ բարձր բերք։ Այսպես՝ աշնան տարեկանի միջին բերքը

20 տարվա ընթացքում (1893 թ. մինչև 1912 թիվը) եղել է մեկ հետապնդական 66 ցենտներ։ Տարեկան ամենացածր բերքը 1 հետապնդական էր այդ 20 տարվա ընթացքում կազմել է 62 ցենտներ, ամենաբարձրը 70 ցենտներ։

Սորուկառութային հողի կնճիկները պետք է լինեն կայուն, այսինքն ջրի մեջ չցրվեն։ Եթե կնճիկները ցրվում են ջրի մեջ, անձրևը լվանում է նրանց։ Կնճիկների լվացված մասնիկները լցնում են մնացած կնճիկների բոլոր անցքերը։ Այն ժամանակ ամբողջ հողը համաստրած ցեխի է վերածվում, զրկվում է կնճկայնությունից և դառնում է անշատ-մասնիկային հող։ Զուրը նման հողի մեջ շատ դանդաղ է թափանցում, որովհետեւ հողի վերին շերտն արագ է լցվում և հենց դրանով էլ դժվարացնում է ջրի թափանցումը վարելաշերտի մասսայի մեջ։ Անառուկառուր հողի մեջ ջուրն անցնում է միայն շատ մանր (մաղական) անցքերով։ Զուրն այդ անցքերով հողի մեջ թափանցում է անընդհատ դանդաղելով։ Այդ պատճառով անձրևի ջրի գլխավոր մասսան հողի մեջ չի թափանցում, այլ դուրս է հոսում։

Գարնանային հալվող ձյան ջուրն ամբողջովին հոսում է անստրուկտուր հողի մակերեսից, որովհետեւ նրա մասնիկների միջի ամենամանր անցքերն աշնանից լցված են լինում ջրով։ Զմեռը ջուրը նրանց մեջ սառչում է և փակում այդ անցքերը։

Հողի ամենամանր անցքերի ձմռան փակվելն էլ ավելի են ուժեղացնում ջրի վեր բարձրացող գոլորշիները։ Գոլորշին ձմեռը բարձրանում է հողի չստած շերտերից և հասնեով սառած շերտին՝ սառչում, դառնում է սառույց։ Հենց որ այդ գոլորշին հողի հաջի մեջ վեր է ածվում սառույցի, ստորին շերտից նրա փոխարեն բարձրանում է գոլորշունոր հոսանք։ Այս երկույթը տեղի է ունենալ ամբողջ ձմեռը, մինչև որ հողը գարնանը հալում է և նրա միջի սառույցը դառնում է ջուր։ Դրանից տեղի է ունենալ դարձրանային հայտնի ձյունահալքը։ Ջրով լրիվ հագեցված հողը այլևս չի կարող լիր մեջ նոր ջուր ընդունել, ուստի և այդ ջուրը հոսում, անցնում է հողի մակերեսով։

Անառուկառուր հոդն իր մեջ ջրի պաշար կարող է հավաքել տարեկան տեղումների 15%-ից ոչ ավելին։ Ջրի այդ պաշարը չափազանց քիչ է բույսերին մատակարարելու համար։ Բացի դրանից, ջրի այդ պաշարն անսարուկտուր հողի մեջ շատ անկայուն է։ Անձրևից հետո հողի չորս գործադրություն

սկսվում է ուժեղ գոլորչիացում: Նման անստրուկտուր հողի մեջ բույսերին անհրաժեշտ ջրի պաշարը միայն հաճախակի անձրեցների միջոցով է լրացվում:

Սակայն հաճախ տեղացող անձրեների դեպքում էլ անստրուկտուր հողի բերքը բարձր լինել չի կարող: Եթե այդպիսի հողը բավականաչափ խսնավ է, ջուրը նրա մեջ զբաղեցնում է հողի բոլոր մասնիկների միջև եղած անցքերը: Նման հողում օդի համար տեղ չի մնում: Բուսական մնացորդները, հումուսը, գոմաղբը և այլն նրա մեջ քայլայիլում են անակըռը բակտերիաների միջոցով, որպիսի պայմաններում բակտերիաները բույսերի համար անհրաժեշտ սննդով դոյցնել չեն կարող: Դեռ ավելին, նրանք հանքային պարարտանյութերը վեր են ածում բույսերի կողմից չյուրացվող միացությունների: Այդ պատճառով էլ, եթե նման դրությունը երկար է տևում, ապա սննդի պակասության հետեանքով բույսերը «չնչանում» «վիկում» են: Եթե անստրուկտուր հողը չոր է, նրա մեջ օդն ազատ կերպով է անցնում: Հողի մեռած օրգանական նյութերը քայլայիլում են՝ օդի թթվածնի ներկայությամբ ապրող բակտերիաների կողմից, որի հետեանքով դոյցնում է մեծ քանակությամբ բույսերի ողմից յուրացվող սննդով: Բայց բույսերը այն օդապղոթել չեն կարող, որովհետեւ պակասում է ջուրը: Եթե նման դրությունը երկար է տևում, ապա ջրի և սննդի պակասության հետեանքով բույսը «այրվում» «չնչանում» է: Հետեաբար անստրուկտուր հողի մեջ բույսերին ջրով և սննդով մատակարարելու պայմանները միատեսակ անբարենպաստ են թե չուրության և թե հորդ անձրեների դեպքում: Այդ պատճառով անստրուկտուր հողի բերրիությունը ցածր է լինում:

Անստրուկտուր հողը բույսերին միաժամանակ չի կարող ապահովել ջրով և սննդով: Գրանում է նրա գլխավոր արտադրական պակասությունը: Անստրուկտուր հողի բերքի չափը կախված է եղանակից, ամռան անձրեների հաճախակիությունից:

Հողի անստրուկտուր լինելու հետեանքով տնտեսության կրած անբարենպաստ և ծանր հետեանքների չափը չսկայական է: Տեղումների ջուրը չի կարող լրիվ թափանցել անստրուկտուր հողի մասսայի մեջ: Նրա մեծ մասը հոսում է դեպի գետերը: Նա բույսի սննդի համար կորչում է: Հողի միջի ջուրը համարյա չի ծծվում մայրական շերտի խորքը: Զորանում են աղ-

բյուրները, ջրհորները, սպառվում են ստորերկրյա ջրերը։ Հոսանքի ժամանակ ջուրը հեշտությամբ լվանում է փոշիացած հողը, հեղեղատներ են դոյանում, լվացվում է վարելաշերտը։ Զուբը մեծ քանակությամբ հոսում է հովհանները։ Գետերը հորդանում են և նրանց հունը լցվում է ավազով, առաջացնելով խորդուրորդություններ։ Ամռանը գետերը թույլ են սնվում ստորերկրյա և աղբյուրի ջրերով։ Նրանք ուժեղ կերպով ծանծաղանում են։ Վատանում են նավազնացության պայմանները։

Անատրուկտուր հողի անջատ մանր մասնիկները հեշտությամբ քամատար են լինում։ Այդ պատճառով նրա վրա չառ հաճախ քամին մի տեղից ցանքերը քըում է, իսկ մի այլ տեղ կուտակիում չ Ամպիկ ազգեցությունից մատղաշ ծիլերը «կտրատվում» են։ Արմատավզիկները կամ թփակալման հանդույցները մերկանում են։ Հաճախակի բույսերը ոչնչանում են արմատի վրա։

Բացի դրանից, անձրեներից և ձյան հալվելոց հետո անստրուկտուր հողը հեշտությամբ կպչում, կեղեվակալում է, որի փիբեցման համար պահանջվում են լրացուցիչ մշակումներ։

Անատրուկտուր հողն աչքի է ընկնում իր կողչունությամբ։ Նրա այլ հատկությունն արտահայտվում է իր ամենամանր մասնիկների ուժեղ կապակցվելու նորհիմ։ Այդպիսի հողը վարելու, լրացուցիչ ջանքեր են դորձադրվում նրա կապակցվածությունը հաղթահարելու համար։

Հողամասը վարելիս, միջին հաշվով հողաշերտը բարձրացվում է 40 սանտիմետրով։ Նույն չափով էլ նա տեղափոխվում է դեպի աջ։ Մեկ հեկտար տարածությունը 20 սմ խորությամբ վարելու դեպքում հողի վարելաշերտը միջին հաշվով կշռում է 3.000.000 կիլոգրամ։ Վարելաշերտը 40 սմ դեպի վեր և 40 սմ դեպի աջ չարժելու համար պահանջվում է 2.400.000 կիլոգրամութեար*^{*)} աշխատանք ($0,4 \text{ մ} + 0,4 \text{ մ} = 0,8 \text{ մ}$, $0,8 \times 3.000.000 \text{ կգ} = 2.400.000$ կգրմ)։ Այդպիսի աշխատանք ծախսվում է միայն դյուրին կերպով կնձիկների վերածվող հողը վարելիս, նրա կշռը հաղթահարելու համար։

Անատրուկտուր հող վարելիս ջանք է թափվում ոչ միայն

*.) Մեկ կիլոգրամը մեկ մետր բարձրացնելու համար կատարած աշխատանքը՝ կոչվում է մեկ կիլոլրամումետր աշխատանք։

Հողի կը լուր, այլև նրա կապակցվածությունը հաղթահարելու համար։ Հողի կապակցվածությունը կախված է նրա փոշացած լինելու և խոնավության աստիճանից։ Անստրուկտուր հող գարելիս, կապակցվածությունը հաղթահարելու համար աշխատանքն աճում է 5,10 և նույնիսկ 15 անդամ ավելի (սեահողային աղուտներ)։ Հետեւարար նման հողը վարելու համար պահանջվում է 12,24 և նույնիսկ 36 միլիոն կիլոգրամովներ աշխատանք, մինչդեռ 20—30 միլիոն կիլոգրամովներ աշխատանք կատարելու համար գությաները հարմարեցված չեն։ Այլպիսի լարվածության դեպքում նրանք կոտրվում են, որպակտուր տեղապուրություն :

Այսպիսով, անստրուկտուր հողը մշակելիս, անարդյունավետ կերպով հսկայական աշխատանք և վասելանյութ է ծախսվում։ Իսկ եթե նկատի ունենանք մեր երկրում եղած անստրուկտուր հողերի մեծ տարածությունները, — ապա պարզ կլինի, թե որքան մեծ է անարդյունավետ աշխատանքի ծախսումը գյուղատնտեսության մեջ։ Միայն անստրուկտուր հողերը ստրուկտուրային դարձնելու հետեւանքով ուժեղ կերպով կը բարձրանա սովորապային և կոլխոզային գաշտերի բերքատվությունը և է՛լ ավելի կը բարձրանա սոցիալիստական աշխատանքի արտադրողականությունը :

Սոցիալիզմի երկրում անստրուկտուր հող լինել չի կարող։ Կուլտուրական-ստրուկտուրային հողի համար մղվող պայքարը մեր երկրի բոլոր սովորողների ու կոլխոզների կենսական խռնդիրն է, չետևապես արտադրական տեսակետից կուլտուրական հողի ամենակարենը հատկությունը նրա կայունության մեջ է, այսինքն՝ կնձիկների այնպիսի հատկությունը օժտված լինելու մեջ, որով նրանք կարողանան զիմարել ըլլի լվացող աղբեցությանը։ Այդ հատկությունը կնձիկները ունենում են միայն այն դեպքում, եթե կնձիկներ կազմող հողի մասնիկները միմյանց հետ կապակցվում են ջրում անլուծելի որևէ նյութով։ Որպես այդպիսի նյութ՝ հողի կնձիկների ցեմենտ, հանդիսանում է հումուրը, նա առաջանաւմ է բարկտերի հաների միջցով, հողի բուսական մնացորդները քայլայիլու ընթացքում։ Բայց որքան էլ կայուն լինեն հողի կնձիկները, այնուամենայնիվ ժամանակի ընթացքում նրանք ևս քայլայիլում են:

ԱՆՁԵԱԾԻՆ ՍԵՐՈԽԱՏՈԽԱՅԻ ԳԱՅԵԲԱԾՄԱՆ ԵՎ ՀՈՂԻ
ԿԱՅՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԿՐԹՅԱՅԻՆ ՊԱՏՃԱՌԱՅՆԵՐԸ

Յուրաքանչյուր հող աշնանը կորցնում է իր երեսի չերտի կնձկայնությունն ու կայունությունը: Բացի դժանից, 6-7 տարի անընդհատ միամյա բույսեր մշակելիս, ամբողջ վարելաշերտը կորցնում է իր ստրուկտուրան և կայունությունը:

Դաշտի վրա չարդվում են տրակտորներ, ձիեր, եղներ, սայլեր, մարդիկ, մեքենաներ և այլն: Այդ ծանրությունն առեղելով ստրուկտուրային հողի կնձիկների վրա, հողի մակերեսից քայլքայում է նրանց: Բույսերի մշակման ժամանակ, տարվա ընթացքում, հողի կնձիկների քայլքայում միջին խորությունը հասում է 10 սմ:

Հողի՝ ձիերով և եղներով մշակելը փոխարինելով տրակտորային մշակումով զգալիորեն պահանջնում է ստրուկտուրային հողի կնձիկների քայլքայումը:

Հասկապես այդ տեսակետից անհրաժեշտ է նշել թրթուրավոր տրակտորի աշխատանքը: Առաջին հայցքից կարող է թվալ, որ նա իր հոկայական ծանրությամբ կքայլքայի հողի ամբողջ ստրուկտուրան: Իրապես նա քայլքայում է հինգ անդամ պահան, քան ձիով մշակելու դեպքում:

Թրթուրավոր տրակտորի ծանրության ճնշումը՝ նրա մեկ քառակուրի սանտիմետր հենման մակերեսի վրա՝ նույնիսկ որոշ չափով պակաս է մարդու ոտքի ճնշումից: Հետևաբար, սովորաբար կույզների և կոլխոզների գաշտերում թրթուրավոր տրակտորի տշխատեցնելը կաղմանկերպական և տեխնիկական այլ ճնշենակարգություններից բացի, ագրոտեխնիկական խոչըն նշանակություն ունի:

Այդ մեքենան ավելի քիչ է քայլքայում հողի կնձկային ստրուկտուրան, քան այլ չարժիշները: Դրանով էլ նրա կիրառումը հանդիսանում է բարձր բերքի համար մղվող պայքարի ոլորմաններից մեկը:

Տեղացող անձրենները և ձյան ջրերը նույնական քայլքայում են հողի ստրուկտուրան: Դա հետևանք է նրա, որ անձրիկ և ձյան ջրերը ամոնիակային սղեր են բերում: Նրանք փոխում են հումուսի հատկությունները՝ ջրի մեջ տարալուծելի դարձնելով տյու: Այդ պատճառով հողի վարելաշերտն իր ստրուկտուրան կորցնում է, միջին հաշվով, մոտ 10 սմ խորության վրա:

Վերջապես, հումուսը քայլքայվում է բերքի արտադրության ժամանակ: Դա բացատրվում է նրանով, որ հողը մշակելիս

մինք նրան փխրացնում ենք և զեսլի նա ուժեղացնում օդի հո-
սանքը։ Դրանից ուժեղանում է բակտերիաների կենսունակու-
թյունը, որոնք քայքայում են հողի հումուսը, հասցնելով այն
մինչև հանքային աղերի։

Այսպիսով, բերքի ստացումն անհնարին է, առանց հողի
կնձկային ստրուկտուրայի քայքայման և հումուսի պաշարի
ծախսման։ Այսաղից եղբակացություն՝ արտադրությունը նը-
պատակահարմար կերպով շարունակել չի կարելի, եթե հումու-
սի ծախսը չի լրացվում և քայքայումը չի վերականգնվում։

Խ-62 ԵՐԱԲԸՆՈՒԹՅՈՒՆ ՍԻՄՏԵՄԸ

Գյուղատնտեսական արտադրությունը պարտադիր կերպով
ընդդրկում է այնպիսի միջոցառումներ, որոնք հողի մեջ ստեղ-
ծում են հումուսի անհրաժեշտ պաշար՝ կայուն կնձկային
ստրուկտուրան վերականգնելու համար։

Հողի հումուսի պաշարի նորոգման, կամ հողի կայուն
կնձկային ստրուկտուրայի վերականգնման սիստեմը՝ կոչվում է
երկրագործության սիստեմ։

Հաճախ երկրագործության սիստեմն ընդունում են որպես
տնտեսության սիստեմ։ Դա կոպիտ սխալ է։ Երկրագործության
սիստեմը ագրոտեխնիկական հասկացողություն է, իսկ տնտե-
սության սիստեմը՝ մարդկության հասարակական կառուցված-
քի արդյունքն է։ Մեր երկրում տնտեսության սիստեմը սոցիա-
լիստական է, պլանային է։ Արագածամանյան երկրներում նա
կապիտալիստական է։ Դա էկոնոմիկական հասկացողություն է։

Նախորդ ասածից դժվար չէ տեսնել, որ դյուրատնտեսա-
կան արտադրության մեջ երկրագործության սիստեմը պետք է
ունենա ամենախոչըն նշանակությունը։

Երկրագործության սիստեմից է կախված հողի բերքիու-
թյունը, իսկ հողի բերքիությունը՝ բարձր բերք ստանալու
դորձում առաջատար օգակն է, որովհետեւ նրանից է կախված
գյուղատնտեսական արտադրության աշխատանքի արտադրու-
կանությունը։

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԻՍՏԵՄԸ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԻՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ

Երկրագործության խամային սխատեմը.— Բույսերի մշակման ժամանակ հողն անխուսափելիորեն կորցնում է իր բերրիության զվարկոր պարբանը՝ կնձկային ստրուկտուրան։ Այդ երկույթին մարդկությունը հանդիպեց երկրագործության ամենավաղ շրջանում։ Այն ժամանակ նրա դեմ պայքարի միջոցը շատ հասարակ էր։ Երբ հողը դադարում էր բերք տալուց, այդպիսին թողնվում էր, և բույսերն աճեցվում էին նոր հողամասում, որն առաջ չէր մշակվել։ Հենց որ նոր հողամասն էլ սկսում էր բերքն իջեցնել, նորից ընտրում էին առաջներում չմշակված որևէ այլ հողամաս։

Դա «քոչվորական երկրագործության» շրջանն էր, երբ հողը մասնավոր սեփականություն չէր։ Խամ հող որոնող նախնագարյան հողագործն աղաս կերպով կարող էր անդափոխվել նրա վրա։

Այն սխատեմը, որի ժամանակ պարբերաբար մշակության մեջ են մտնում «խամ»^{*)} հողամասեր, կոչվում է երկրագործության խամային սխատեմ։

Երկրագործության խամանային սխատեմը.— Հողի մասնավոր սեփականություն առաջանալու հետ միաժամանակ, խամային սխատեմի կիրառումը անհնարին դարձավ։ Հողն ամրացվում էր տոհմերին, ցեղերին, կալվածատերերին։ Հողագործը դառնում էր հողատեր։ Ցուրաքանչյուր հողատիրության ներսում աճում էր բնակչության թիվը։ Հողատիրություններն աս-

^{*)} Տվյալ զետքում «խամ» ասելով պետք է հասկանալ այնպիսի հողամաս, որի վրա մարդկային ամենավրիմիտիվ արտադրական ներգործությունն անդամ բացակայել է։ Ման. խմբ.

տիճանաբար մանրանում էին: Խամ Հողերը հետդհետե պակասում էին: Ակամայից տոփալված էին վերադառնալ այնպիսի Հողերի մշակության, որպիսիք առաջ մշակվել էին, բայց հետազայում թողնված էին, որպես բերքությունը կորցրած Հողեր:

Թողնված Հողերը «Հանգստի» ժամանակաշրջանում այս կամ այն չափով վերականգնում էին բերքիության պայմանները: Նման վերականգնումը տեղի էր ունենում այդպիսի Հողերում վայրի խոտեր կամ ծառեր աճելու չնորհիվ: Կուտակվում էր հումուսի նոր պաշար և հողի կարուն կնձկային սուրուկտուրա էր սաեղծվում: Այդ ձեռով «Հանգստացած» Հողամասեր—խոպաններ վարելիս նբանցից այնպիսի բերք էր ստացվում, ինչպես խամ Հողերից:

Այն սխտեմը, որի ժամանակ պարբերաբար մշակության մեջ են ընդգրկվել «Հանգստացած» Հողամասեր,—կոչվել է Երկրագործության խոպանային սխտեմ: Աստիճանաբար նա փոխարինվել է Երկրագործության խամային սխտեմին:

Երկրագործության խամային և խոպանային սխտեմների ժամանակ, հողի կորցրած բերքիության վերանորոգումը տեղի էր ունենում մարդու ուղղակի աղղեցությունից անկախ: Հողի բերքիությունը վերականգնում էր ընությունը:

Պրակտիկան ապացուցել է, որ հողը որքան երկար ժամանակ է գտնվել խոպան գրության մեջ, այնքան լրիվ կերպով է վերականգնվել նրա բերքիությունը:

Այդպիսի խոպանները որքան բազմամյա էին լինում, նրանց բուսական կազմն այնքան ավելի մոտ էր լինում խամ տափառատանների կամ կուտական անտառների բուսականությանը:

Սակայն բնակչության բարձմանալու հետ միասին՝ յուրաքանչյուր հողատիբությունում ավելի ու ավելի էր կրծառվում հողի «Հանգստանալու» ժամանակաշրջանը:

Հողն ի վիճակի չէր բերքիության պայմանները վերականգնել, հասցնելով այն սկզբնական աստիճանին; Բնականաբար, հացահատիկների բերքն ուժեղ կերպով ընկնում էր: Միաժամանակ վատանում էր հատիկի որակը՝ նա մանրանում էր, սպիտակուցի պարունակությունը նվազում էր և ալելանում էր չղարգացած սերմերի քանակը: Բերքիության պայմանների նվազումը տեղի էր ունենում չնորհիվ այն բանի, որ հողը մշակում էր պրիմիտիվ այնպիսի գործիքներով, ինչպիսիք էին արո-

բԸ, «օմաչը», «սարանը», փողիւր և այլն, որոնց ազդեցության տակ հողն արագ փոշիանում էր, դաշտերն ուժեղ կերպով ծածկվում էին մոլախոտերով, իսկ ոռողվող հողերն աղիանում, ծածկվում էին աղաշերառով:

Երկրագործության խամային և խոպանային սխառմները տարածված էին այն ժամանակ, երբ մարդկային հասարակության արտադրական ուժերի զարդացման մակարդակը շատ ցածր էր: Նա չէր կարող ապահովել բերքի անընդհատ աճը: Մարդկանց աճող պահանջները զվախվորապես բավարարվում էին ի հաշիվ ցանքերի տարածության լայնացման: Սոցիալիստական արտադրության պայմաններում երկրագործության խամային ու խոպանային սխառեմները բոլորովին կիրառելի չեն: Արդյունաբերության, դիմության և տեխնիկայի զարգացման այժմյան մակարդակը մեղ համար ստեղծել է հողի բերրիության պայմանների վերականգնման ավելի կատարելազործված դղանակներ:

Երկրագործության խոպանային սխառեմի ժամանակ ցանքային տարածությունների լայնացման պահանջն առաջին հերթին լուծվում էր խոպանի տեսողության կրծատմամբ: Խոպանի տեսողությունն ամելի ու ավելի կրծատվելով, վերջապես հասալ մեկ կամ երկու տարվա: Միամյա հարոսը կոչվեց ցեղադաշտ կամ ցել:

Հարոսի տեսողությունը 1—2 տարի դարձնելու հետեւանքով միաժամանակ ստիպված եղան կրծատել դրանց վրա կատարվող ցանքի տեսողությունը: Եթե 20—40 տարի տեսողության խոպանի դեպքում հացահատիկների անընդհատ ցանքը տեսում էր 6—7 տարի, ապա հարոսը 1—2 տարի հասցնելով, հացահատիկները սկսեցին ցանել միենալույն տեղում 1—2 տարի, որով ստացվում էր երկրաշոյա և եռադաշտ ցանքաշրջանառություններ: Այն է —

Երկդաշտյա.—1) ցել 2) եղիպտացորեն (Ամերիկայում,
Կովկասում):

Կրկնակի երկդաշտյա.—1) ցել 2) բամբակ, 3) ցել,

4) եղիպտացորեն (Ամերիկայում):

Եռադաշտեր.— $\begin{cases} 1) \text{ ցել}, 2) \text{ տարեկան}, 3) \text{ վարսակ}, \\ 1) \text{ ցել}, 2) \text{ ցել}, 3) \text{ տարեկան}, \end{cases}$

$\begin{cases} 1) \text{ ցել}, 2) \text{ ցել}, 3) \text{ վարսակ} \end{cases}$ կամ գարի:

Հարոսի տեսղությունը մինչև 1 տարի հասցնելն իհարկե փոխեց նաև հողի բերբության պայմանների վերականգնման ուղղությամբ տարվադ պայքարի սիստեմը՝

Հարոսի համար թողնված դաշտը արագ կերպով ծածկվում է բուսականությամբ։ Բազմամյա հարոսի վրա վայրի բուսական ծածկոցը բաղմաթիվ անդամ փոփոխում է իր կազմը։ Նրա ծածկոցի տակ աստիճանաբար գոյանում է հողի հումուսի նոր, թարմ պաշտ, որն անչըստեշտ է հողի մանր մասնիկները միմյանց կապակցելու համար։

Հարոսի բազմամյա խոտերի ազգեցության տակ վերականգնվում է հողի կայտն կնձկային ստրուկտուրան։ Մոլախոտերն անհայտանում են։ Աղիացած հողն առաջինաբար կորցնում է աղը։ Սակայն միամյա հարոսից ելիք ժամանակ, հողում հումուսի պաշտը վերականգնման այդ գերին անցնում է մարդուն, նրա ակտիվ աղեցությանը։

ԵՐԻՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՅՆԴԱՅԻ ՍԹՐՈՒՏՈՒԹՅՈՒՆ

Ցելադաշտի հողում հումուսի պաշտը նորոգման երկու եղանակ՝ զոյտթյուն ունի։ Առաջին եղանակը ցելադաշտի մշտկումն է, նպաստակ ունենալով հին հումուսը վերափոխել այնպես, որպեսզի նա ընդունակ դառնա հողի մասնիկները միմյանց կողցնելու։ Երկրորդ եղանակի գեղքում հումուսի պաշտը կուտակումը աեղի է ունենում չքայքայված օրգանական նյութերը (գոմազը, առորֆ և այլն) հողի մեջ մտցնելով, որպիսիք հողում քայքայվելով վեր են ածվում հումուսի։

Առանց գոմանդի ցել՝ Զնայած նրան, որ հողում հումուսի կուտակման առաջին եղանակը տարածված է հատկապես սեահողային մարդերում, սակայն նա չի կարող ճիշտ համարվել երկու պատճառով՝

1. Հողում հումուսի կուտակումը կատարում են միայն օդի թթվածնի բացակայությամբ աղբողոք անակերորդ բակտերիաները։ Մինչդեռ ցել կատարելու ժամանակ դաշտը բաղմաթիվ անդամ մշակելու հետեւնքով (վար, կեզեի փիբեցում, մոլախոտերի ոչնչացում, նախացանքային մշակում) հողում, ընդհակասակն, ստեղծվում և պահպանվում են աերորդ պայմաններ, որոնց ժամանակ զարդանում են հումուս առաջացնելու անընդունակ բակտերիաները։ Բնդհակառակը, նրանք ուժեղ կերպով քայքայում են հին հումուսը։ Հետեարար, հողի ցե-

լային մշակումը նպաստում է ոչ թե հումուսի կուտակվելուն, այլ նրա քայլքայմանը:

2. Ցելի մշակմամբ անհնար է հին հումուսը վերածել նորի, որ ընդունակ լինի հողի մասնիկները միակցելու, որովհետև հումուսը—օդի թթվածնի բացակայությամբ աղբող բակտերիաների կենսազործունեության արդյունք է: Գոյմաղբով չպարարտացվող ցելի մեջ թարմ հումուս առաջացնելու համար, այդ բակտերիաները պետք է օգտագործենին իրենց միջնորդ առաջացրած հին հումուսը: Խոկ այդ նշանակում է, որ բակտերիաները պետք է օգտագործենին իրենց սեփական արտադրածը, որը բոլորովին անհնարին է: Օրգանիզմի արտադրածը նրա համար ուժեղ թույն է հանդիսանում:

Այդ օրգանիզմների արտադրածը կարող է օգտագործվել միայն հակառակ խմբի օրգանիզմների կողմէց: Օրինակ՝ մարդիկ և կենդանիները արտադրում են ածխաթթու, որպեսին նրանց համար մահացու թույն է հանդիսանում, մինչդեռ կանաչ բույսերի համար, ընդհակառակը, նա անհրաժեշտ :

Հետեարար, մշային հողի մշակման միջոցով անհնարին է կապակցելու ընդունակությունը կորցրած հին հումուսը դարձնել թարմ, հողի կնճիկները միակցելու և նրանց կայունություն տալու ընդունակ հումուս:

Գոյմալբած ցել—Հողի մեջ հումուս կուտակելու երկրորդ եղանակը, ի հաշիվ գոմաղբ կամ տորֆ մտցնելու, կանաչ պարարտացման և այլ միջոցով, ինչպես և առաջին եղանակը, նույնպես անպետք է, դարձյալ երկու պատճառով:

1. Այդ գեղպետմ հողի մեջ վարվող օրգանական նյութին միաժամանակ առաջադրվում է երկու պահանջ, նախ՝ գոմաղբը պետք է հումուսի աղբյուրը հանդիսանա, երկրորդ՝ նապետք է սննդի աղբյուրը ծառայի մշակող բույսերին:

Այդ երկու պահանջը փոխադարձաբար հակառակ են և մեկը մյուսին բացասում են: Որպեսզի գոմաղբն օգտագործվի հողում եղած հումուսը վերականգնելու նպաստակով, այն պետք է զնել այնպիսի պայմաններում, որի դեպքում օդի թթվածինը չանցնի հողի մեջ: Մյուս կողմէց, որպեսզի գոմաղբից ստացվի բույսերի համար յուրացվող սնունդ, նա պետք է լինի հակառակ պայմաններում՝ օդի ազատ կերպով պետք է անցնի հողի մեջ: Առաջին պահանջը գործնականորեն անիրազործելի է: Գոմաղբը հողի մեջ մտցնելը կապված է այն վարելու հետ,

այսինքն՝ հողի մեջ օդի աղաստ կերպով անցնելու պայմաններ ստեղծելու հետ։ Այդ պայմաններում օրգանական նյութին արագ կերպով վեր է ածվում հանքային պարզ աղերի։

2. Հողի մասսայի հետ զոմազրի և այլ օրգանական նյութերի հավասարաշափ խառնումը նրանց արագ քայլայտում է առաջացնում։

Որպեսզի զոմազր մտցնելու ժամանակ հողում հումուս կուտակվի, անհրաժեշտ է այն մտցնել հարյուրավայր տոններով։ Այսպես օրինակ՝ գայլուկի և կանեփի ցանքերում ու չերմոցներում հումուս կուտակվում է։ Այդ դեպքերում միանգամբ միշտ մտցնում են մինչեւ 1300 տոնն զոմազր։ Հողի վերին չերտում օրգանական նյութի այսպիսի մեծ քանակություն լինելու դեպքում, բակտերիաները կլանում են ամբողջ թթվածինը (որը ցած չի անցնում) և դրանից հետո միայն, հումուս կուտակող բակտերիաների կենսազործումնեության համար պայմաններ են ստեղծվում։

Հասկանալի է, որ ցելազատում այդպիսի մեծ քանակությունը զոմազր մտցնելու անհնարին է։ Նույնիսկ հեկտարին 40-ական տոնն զոմազր մտցնելու, չի հաջողվում զոմազրով միաժամանակ պարարտացնել բոլոր գաշտերը։ Այդ պայմաններում հողում կարող է կուտակվել շատ շնչին քանակությամբ հումուս։ Նույնիսկ փոքր քանակությամբ հումուս կուտակելու հնարավորությունը սահմանափակվում է զոմազրը հողի հետ խառնելու տեխնիկական թերություններով։ Գոմազրը հողի խառնելու առանձին կառուտանքով։ Արքան խոչը են նրա մեջ է մտցվում առանձին կառուտանքով։ Յուրաքանչյուր կտորները, այնքան զանգաղ է քայլայիլում։ Յուրաքանչյուր կտորի մակերեսից զոմազրը քայլայիլում է բակտերիաների միջոցով՝ ողի ներկայությամբ։ Կատորի հերթում քայլայիլում տեղի է ունենում անաերոր բակտերիաների միջոցով, որտեղ դոյլանում է հումուս։ Բայց այդ հումուսը կայուն չէ, նա հեշտությամբ ցրվում է ջրի մեջ։

Գոմազրը շատ լավ մանրացնում և հողի հետ է խառնում ֆրեզեր մեքենան^{*)}։ Գոմազրը ֆրեզերով մտցնելուց 10—15 օր

*) Ֆրեզեր մեքենան ինքնաշարժ մեքենա է, հողի մշակման համար նա կազմված է շարժիչից և թմբուկից, որը մեկ բազեում կատարում է մոտավորապես 180 պատյառ թմբուկին ամրացված են կեռիկներ, որոնք մշակվող շերտի ամբողջ խորության վրա անջատում են փոքր քանակությամբ հող և այն ուժեղ փոշիացնում են։

Հետո, հողում նրա հետքն անդամ գտնել չի կարելի: Գոմազբն ամբողջությամբ քայլայլում է: Հումուսի պաշարը վերա- կանգնելու համար դաշտերը զոմազր և այլ օրդանական նյու- թեր մացնելը անհրաժեշտ արդյունք չի տալիս: Հողի մեջ մտցրած և վարած օրդանական նյութը մի կողմից՝ օգոս- դործում են բակտերիաները, որպես նրանց էներգիայի և անդի աղբյուր, իսկ մյուս կողմից՝ բակտերիաները քայլայլում են այդ օրդանական նյութը և այն դարձնում են կուլտուրա- կան բույսերի համար յուրացվող մնանդ:

Հետևապես, թե պարագատացված և թե ջպարարտացված ցելի կիրառումը թույլ չի տալիս հողում նորոգելու հումուսի նոր պաշար, որպիսին անհրաժեշտ է հողի կայուն կանձկային ստրոկատուրա վերականգնելու համար: Այդ պատճառով երկ- րադործության ցելային սխառեմը չի կարող ապահովել կայուն ու բարձր բերք: Ինչպես ցույց են տալիս պրակտիկան և փոր- ձերը, այդ գեղքում բերքը ոչ միայն չի բարձրանում, այլ հաճախ լնինում է:

Դա ավելի համոզիչ կերպով ցույց է տալիս Անդիայի մոտամստեղի փորձակայանը: Նա փորձեր է կատարում 90-ից ավելի տարիների ընթացքում: Միշարք հարցերի թվում կայտանը 76 տարվա ընթացքում ուսումնասիրում էր աշնանացանի բեր- քատվությունը երկդաշտյան ցանքաշղթանառության դեպքում (ցելցորեն): Ցելը չի պարարտացվում: ցորենի բերքը սիսե- մատիկորեն լնինում է:

Մի այլ փորձում նույն կայանը ուսումնասիրել է ցորենի բերքատվությունը, միենույն դաշտում այն ցանելով 1844 թ. մինչև 1932 թիվը: Յորենի համար ամեն տարի մտցվում էր՝ 35 տոնն զոմազր: Զնայած դրան, չհաջողվեց բարձրացնել ցորե- նի բերքը, ընդհակառակը՝ նա իջավ: Այդ փորձերը խոսում են այն մասին, որ երկրագործության ցելային սիստեմի ժա- մանակ անընդհատ, տարեցտարի բարձրացնել բերքը, նույնիսկ ամեն տարի զոմազր մտցնելով—անհնարին է:

Մարդկային հասարակության աճող պահանջներն այդ դեպքում բավարարվում էին գլխավորապես ցանքի տարածու- թյունները լայնացնելով: Եռադաշտու ավելի մեծ ծալալում էր ստանում:

Եռագաշտ ցանքաշղթանառության դեպքում առավելապես մշակում էին հասկավոր հացահատիկներ (ցորեն, տարեկան,

վարսակ, գարի): Տեխնիկական կուլտուրաներն, արմատա-
սղությները, կարտոֆիլը, կաղամբը, ընդեղենները և կերա-
խոտերը մշակվում էին ցանքաշրջանառությունից դուրս դանը-
ված և տնամերձ հողամասերում:

Հետեւաբար, դաշտավարությունը հացահատիկային էր:
Հին և միջին դարերի ու ճորտատիրական իրավունքի ժամա-
նակաշրջանի հացահատիկային տնտեսության սպառողական
ուղղությունը համապատասխանում էր մարդկային հասարա-
կության արտադրական ուժերի զարգացման ցածր մակար-
դակին:

ԵՐԿՐԱԴԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՊՏԱԱՓՈԽԱԾԲԿ ԱԽՍՏԵՄԸ

Զարդացող կապիտալիզմը չէր կարող բավարպվել դյու-
դասնտեսության սպառողական ուղղությամբ՝ երկրագործու-
թյան ցելային սխառեմով: Նա դյուզատնտեսությունը շրջեց
մասսայական ապրանքային արտադրության ուղին: Եսադաշտ
հացահատիկային ցանքաշրջանառությունը տատիճանարար
փոխվեց պաղապախային ցանքաշրջանառության: Պաղափոխա-
յին ցանքաշրջանառության հիմքում գրված էր կուլտուրական
բույսերի հաջորդականությունը: Տեխնիկական բույսերը, ըն-
դեղենները և կերախոտերը միանցին ցանել ցանքաշրջանառու-
թյան դաշտերում: Ցանքաշրջանառության մեջ մանող կուլտու-
րաների թիվն ավելացավ:

Պաղափոխային ցանքաշրջանառություն մտցնելը ցույց
տվեց, որ որոշ բույսեր (թիթեռնածաղկավորներին պատկանող
կերախոտերը, ընդեղենները և շարքահերկ արմատապուղեն-
երը) հողը լավացնում են, իսկ մյոււները—բոլոր հացահատիկ-
ներն ու աելանիկական կուլտուրաները՝ նրան աղքատաց-
նում են:

Դրան համապատասխան, պաղափոխային ցանքաշրջանա-
ռությունը կառուցվում էր այսպես.—այն բույսերը, որոնք
աղքատացնում էին հողը, պետք է դրանցնեին վարելահողի
ամբողջ տարածության կեսից ոչ ավելին: Մնացած կեսը պետք
է ցանվեր հողը լավացնող բույսերով: Ցանքաշրջանառության
մեջ շարքահերկ բույսեր մոցնելով, քիչ աղբուժված դաշտե-
րում ցելը վերացվեց:

18-րդ դարի վերջում Անդիկայում լայն չափով տարածվեց
այսպես կոչված նորֆուկյան պտղափոխային ցանքաշրջանա-

ոռւթյունը: Նրա մեջ մտնում էին չորս կուլտուրա հետեւալ հաջորդականությամբ՝ երեքնուկ, աշնան ցորեն, կերի շուշ-դամ՝ գոմաղրի պարարտացմամբ և գարեջրի երկշարքային դարի: Գարու տակ ցանովում էր երեքնուկը:

Երեքնուկը լավացնում էր հողը, հարստացնում էր նրան աղոտով, հողի խոր շերտերից վարելաշերտի մեջ տեղափոխելով բույսերին անհրաժեշտ մնունդը: Շարքահերկ բույսը հողը լավացնում էր նրանով, որ պահանջում էր ուժեղ միջարքային մշակում: Այն ժամանակվա կարծիքով, նման մշակումը ավելացնում էր սննդի գոյացում ի հաշիվ հողի հողմնահարման: Նոր նույնական օգնեց մոլախոտերի դեմ պայքարելու գործին:

Այդպիսի պտղափոխային ցանքաշրջանառությունը միաժամանակ նպաստում էր բուսաբուծության և անասնապահության աղբանքայնության բարձրացմանը:

Պաղափոխային ցանքաշրջանառության մեջ ուժեղ աղբոտված հողերում ցելը պահպանվում էր: Այդ ցանքաշրջանառության մեջ ցել և շարքահերկ բույսեր լինելու պատճառով, նաև կոչվեց ցելաշարքահերկային ցանքաշրջանառություն:

Այսպիսով, պտղափոխային և ցելաշարքահերկ ցանքաշրջանառություններն սկիզբ դրեցին արհեստական կերպույտերի ցանքի տարածության ստեղծման, դաշտավարության ու անասնապահության մեջ ավելի սերտ կապ ստեղծելուն և հնարավորություն տվեցին ցանքաշրջանառության մեջ բույսերի հաջորդականության կարդ սահմանել:

Ստեղծվեց ցանքաշրջանառության մեջ մտնող նախորդների մասին ուսմունքը: Հետագայում մշակված նբա հիմունքները մինչեւ այժմ էլ մասամբ չեն կորցրել իրենց նշանակությունը:

Այդ դրական մոմենտների հետ միաժամանակ, ցելաշարքահերկ ցանքաշրջանառությունները ունեն նաև մեծ թերություններ: Կորցրած հումուսի վերանորոգման տեխնիկայով և հողի կայուն կնծկային ստրուկտուրայի վերականգնման եղանակով նրանք բացարձակապես ոչնչով չեն տարբերվում երկրագործության եղանակաշատյա ցելային սիստեմից:

Ինչպես եղանակաշատյա և երկդաշտյա ցանքաշրջանառություններում, նույնպես և բաղմաղաշտյա պտղափոխային ու ցելաշարքահերկ ցանքաշրջանառություններում, կնծկային ստրուկտուրայի կորցրած կայունությունը վերականգնելու փորձը

սահմանափակվում էր չպարաբռտացրած ցելերի և չարքահերկ
դաշտերի մշակմամբ միայն, կամ հումուս դոյանալու համար
գոմաղը և այլ օրգանական նյութեր մտցնելով։ Հետեւարար,
պտղափոխային և ցելաշարքահերկ բոլոր ցանքաշընանառու-
թյունները հանդիսանում են երկրագործության ցելային սիստե-
մի հետազա զարդացումը, նրա բոլոր թերություններով։

Երկրագործության ցելային սիստեմի ամենահիմնական թե-
րությունն այն է, որ նա չի ապահովում հողի բերրիության
դիմավոր պայմանի՝ նրա կայուն կնձկային ստրուկտուրայի
վերականգնումը։ Բայց էության երկրագործության ցելային
սիստեմում՝ երկրագործության սիստեմ չկա։ Նա չի կարող
տարեցտարի ապահովել բերքի բարձրացումը, հետեւագես և
աղբոտեխնիկական բաղա ծառայել՝ բարձր և կայուն բերք բո-
տանալու համար։

Ընդհակառակն, անստրուկտուր հողերի բերքն ուժեղ կեր-
պով տատանվում է և մեծ չափով կափամած է եղանակի պայ-
մաններից։ Այդ պայմաններում բույսեր մշակելու ստիւլամ են
լինում հոկայական աշխատանք կատարել, որպեսզի հողը պահ-
պի փուխր վիճակում և բույսերն ապահովեն ջրով ու մննդով։

Երկրագործության ցելային սիստեմի 2-րդ խոչը թերու-
թյունը պետք է համարել այն, որ պտղափոխային և ցելա-
շարքահերկ ցանքաշընանառությունները հնարավորություն չու-
նեն անհրաժեշտ չափով ապահովելու անասնակերի խնդրի լու-
ծումը։

Դեռ ավելին, հողի օգտագործման գիշատիչ և չկատարելա-
գործված եղանակները կապիտալիզմի ժամանակ և առաջատար
տեխնիկայի ու ազրոտեխնիկայի կիրառման սահմանափակ հնա-
րավորությունները պայմանավորում էին մարդադեմինների ու
արոտավայրերի ուժեղ վարելը։ Կրծատվում էր անասնակերի
բնական տարածությունը։ Արոտավայրերի ոչ-չափավոր և ան-
կազմակերպ օգտագործման հետևանքով, նրանք արագ կերպով
դառնում էին «թափաված հողեր»։ Անասունը տեղափոխվում էր
անտառները։ Ոչ-չափավոր արածացնելլ խիստ կերպով վատաց-
նում էր անտառի բնական նորոգումը։ Արագանում էր անտառ-
ների ոչնչացումը։

Անասնակերի բնական տարածությունների կրծատմամբ
անասունների կերպամնում ալելանում էր կալսման մնացորդ-

ները (դարձան, մղեղ, ծղում)։ Անասնապահության մթերատը—վությունն արագ ընկնում էր։

Անտառների ոչչացումն իր հերթին առաջացնում էր դաշտերի և գետերի ջրի ուժիմի ուժեղ փոփոխություն։ Ուժեղանում էր գետերի հեղեղման քայլքայիչ աշխատանքը։ Հաճախակի էր դառնում երաշտը։

Այսպես, սերտ կերպով իրար էին հյուսվում դյուզատնտեսության կապիտալիստական պայմանների օրդանական արատները և երկրագործության ցելային սիստեմի ազգութեանիկական թերությունները։

Դժվար չէ եզրակացնել, որ երկրագործության ցելային սիստեմը, որպես հողի բարձր բերրիության համար պայքարի ազգութեանիկապես անկարող սիստեմ, բոլորովին անհամատեղելի է սոցիալիստական շինարարության պահանջների հետ։ Այդ դրությունը հատկապես ցայտուն արտահայտություն դտավ ՍՍՌՄ Հողժողկոմատի և ՍՍՌՄ Սովորողժողկոմատի հանձնաժողովի «Ճիշտ ցանքաշրջանառություններ մտցնելու մասին» նախադում։

ՅԵԼ ՈՐՊԵՍ ՄՈԼՅԱՅՈՏԵՐԻ ԴԵՄ ՊԱՅԹԱՐԻ ՄԻԶՈՅ

Ժխտելով երկրագործության ցելային սիստեմի կիրառումը սովորողների ու կոլխոզների պրակտիկայում, միենալոյն ժամանակ չի կարելի ժխտել ցելի կիրառումը։ Ցելը ազգութեանիկան միջոցառումը, Է՝ մոլախոտերի դեմ պայքարելու համար։ Դրանում է կայանում ցելագաշտի հիմնական խնդիրը։ Հետեւ վապես, պետք է պարզ կերպով տարբերել երկրագործության ցելային սիստեմը ցելից։ Ցելը՝ պայքարի միջոց է հողի ազրոտության դեմ։ Դա ազրոտեանիկական միջոցառում է։ Երկրագործության ցելային սիստեմը—հողի կայուն կնճկային ստրուկտուրան վերականգնելու անկարող մի փորձ է։ Նա, ով ցիոնիում է այս երկու միջոցառումները, վետ է հասցնում սոցիալիստական դյուզատնտեսության արտադրությանը։

Այն մասին, թե ո՞ր ցելն է ավելի լավ, ո՞րտեղ և ի՞նչպես կիրառել դրանց—մոլախոտերի դեմ պայքարելու համար, կիսումի ստորին։

Վեր նշված էր, թե անասնապահությունը դյուզատնուն-
ուության զարգացման գործում ինչ մեծ նշանակություն ունի:
Գյուղատնտեսության ճիշտ կազմակերպումն առանց ահասնա-
պահության—հնարավոր չէ: Հիբրավի, Եթե հետեւնք դյու-
ղատնտեսության զարգացման պատմությանը, ամենուրեք դրսե-
վորվում է դաշտերի բերքատվության և տնտեսության եկամտա-
բերության սերտ կապն անասնապահության առկայության հետ:
Որտեղ եղել է դաշտերի ցած բերքատվությունը և տնտեսության
ցած եկամտաբերությունն, սովորաբար այնտեղ էլ անասնապա-
հությունը գտնվել է անկման վիճակում:

Անասնապահության զարգացումը միշտ կապված է կերա-
բույսերի տարածության առկայության հետ: Որոշ գեղքերում
նա լրիվ բավարարվել է կերաբույսերի բնական տարածու-
թյունների խոսով և արոտավայրերով: Այլ գեղքերում անաս-
նակերի հարցի սրություննը հասել է ծայրահեղության: Զքավոր
և միջակ դժուդացիության քայլայումը կալվածատերերի, բե-
կերի ու կուլակների կողմից մարդագետինների և արոտավայրե-
րի խլումը նրանցից, ավյալ հոգատիրության բոլոր հողերի
վարելը—այսպիսիք էին կերային հարցի սրության զիխավոր
պատճառները:

Կերաբույսերի տարածության ստեղծման ամենահին և ա-
մենահասարակ եղանակը՝ դաշտային խոտացանությունն էր:
Այդ եղանակն ստացավ գաշտային խոտացանության անուն:
Դաշտային խոտացանության ամենահին կուլտուրան առվյուտն
էր: Դաշտային խոտացանությունը և առվույտը հայտնի էին
արևելքի ամենահնագույն երկրներում՝ Զինաստանում, Հնդկաս-
տանում, Արաբիայում և այլ երկրներում: Այդ երկրներից
նրանք մուտք գործեցին Միջին Ասիա, Հին Եգիպտոս, ասպա-
հունաստան, Իտալիա և Իսպանիա: Եղրողայի հյուսիսային
պետություններում տարածվեց կարմիր երեքնուկը: Շատ ավելի
ուշ դաշտային խոտացանության մեջ մտցվեցին հացազդի կերա-
բույսեր՝ տիմոֆեևկա, Փրանսիական ռայդը և այլն:

Համարյա բոլոր ժողովուրդների դաշտային խոտացանու-
թյան մեջ առվույտի և երեքնուկի լայն տարածման պատճառ-
ները. շատ հասարակ են: Այդ խոտերը պատկանում են թիթեռ-
նածաղկավորների ընտանիքին, որոնք ընդունակ են իրենց ար-

մատների վրա ապլող, այսպէս կոչված, պալարային բակտերիաների օնությամբ օդի ազատ ազուան օգտագործել:

Կւանելով օդի ազուաը, նրանք գոյացնում են սպիտակուցային բարդ միացություններ: Դրանով բոլոր թիթեռնածաղկավորները ապիտակուցային նյութերի մեջ պարունակությամբ, տալիս են բարձրորակ կեր:

Բացի դրանից, թիթեռնածաղկավորները մեռնելով, հողում թողնում են ազուտով հարուստ կերային մնացորդներ: Այդ պատճառով բոլոր թիթեռնածաղկավորները հողը հարստացնում են ազուտով և դրանով իսկ բարձրացնում նրա բերրիությունը:

Առվույաը և երեք նուկը բազմամյա խոտեր են: Յանվելով մեկ անգամ, նրանք ընդունակ են բերք տալու մի քանի տարի շարունակ:

Թվարկած այդ հատկությունների շնորհիվ, դաշտային խոտացանության մեջ առաջին տեղը զբավեցին առվույաը և երեքնուկը:

ԵՐԿԱՐ.ԳՈՐԾԱԽԹՅԱՆ,
ԽՈՏԱ.ԳԱՀՏԱ.ՑՏԱ.ՑԻՆ
ՍԻՄԵՈՎԸ

Երկար տարիներ մարդկությունը դաշտերում կերպախոտեր էր ցանում անսանակեր ստանալու նպատակով: Միայն անցած դարում պարզ և լրիվ կերպով բացահայտվեցին թիթեռնածաղկավորների ու հացազգիների դրական ազ-



Նկ. 2. Թիթեռնածաղկավորների արմատների պալարները լցված բակտերիաներով, որոնք յուրացնում են օդի ազատ ազուաը:

վեցության հետևանքները բերքի բարձրացման վրա: Ապացուցվեց, որ դաշտերում այդ խոտաբույսերի մշակումը շատ ուժեղ կերպով փոխում է հողի բերրիության պայմանները: Այդ խո-

տերը հողում հումուսի մէծ պաշար են կուտակում և վերականցնում են հողի կայուն կնձկային ստրուկտուրան :

Այսպիսով, բազմամյա խոտերը, իրենց կերային արժանիքների հետ միասին, ունեն նաև ագրոտեխնիկական նշանակություն՝ հողի բերրիության բարձրացման իմաստով :

Դաշտային խոտացանությունը պատմականորեն վերաճեց երկրագործության խոտադաշտային սխատեմի : Այդ ժամանականից երկրագործության խոտադաշտային սխատեմը սկսեց կերասովել գլուխություն, մինչդեռ առաջ, սկիզբ առնելով արեվելյան հնագույն երկներում, նա կերասովում էր տարերայ-նորեն :

Այսպիսով, մթերատու անասնապահության դարձացման և նրա համար կանաչ կերի կայուն բազայի ստեղծման անհրաժեշտությունը երկրագործության խոտադաշտային սխատեմի դարձացման ելակետը հանդիսացան :

Երկրագործության խոտադաշտային սխատեմն իր այժմյան դարձացմանը միաժամանակ լուծում է գյուղատնտեսական արտադրության երկու խոշոր խնդիրը —

1. Հողի կայուն կնձկային ստրուկտուրայի վերականգնում :
2. Կերի բազայի ստեղծում մթերատու անասնապահության համար :

Այս երկու խնդիրը իրար հետ չպետք է շփոթել : Ոյն կարծիքը, թե երկրագործության խոտադաշտային սխատեմը և դաշտային խոտացանությունը միենույն բանն են, բացարձակապես սխալ է : Եթե զաշտային խոտացանությունը գլխավորապես ուղղված է անասնակերի խնդիրի լուծմանը, ապա երկրագործության խոտադաշտային սխատեմի նպատակն է միաժամանակ բարձրացնել հողի բերրիության պայմանները և ստեղծել կերաբույրի տարածություն : Դաշտային խոտացանությունը մտնում է երկրագործության խոտադաշտային սխատեմի մեջ՝ որպես նրա բարկացուցիչ մասը : Հողի կայուն կնձկային ստրուկտուրայի վերականգնումն անխմատ է, առանց բազմամյա կերախոտերի խառը ցանքի :

Երկրագործության խոտադաշտային սխատեմը բաղկացած է ագրոտեխնիկական չորս անբաժան տարրերից, այն է — երկու ցանքաշըլանառությունների սխատեմից, հողի մշակման սխատեմից, բույսերի պարարտացման սխատեմից և գյուղատնտեսական

նշանակություն ունեցող ծառատնկման ու դաշտապաշտպան անտառային չերտերի կուլտուրայի սիստեմից :

Այսպիսով, երկրագործության խոտագաշտային սիստեմը, սոցբնական գյուղատնտեսության արտադրության ազգութեանիկական հիմքն է, որի հիման վրա հողի մշակությունը, բույսերի պարաբռացումը, կուլտուրաների հաջորդականությունը և այլն կարող են տալ տնտեսական և տեխնիկական ամենաբարձր էֆեկտը: Նա սովորվային ու կոլխոզային դաշտերի բերքիության պայմանների բարձրացման, բերքատվության և սոցիալատական աշխատանքի արտադրողականության անընդհատ աճման աղբոտեխնիկական հզոր միջոց է:

Սովորված առ կոլխոզներն ու կոլխոզներն իրենց արտադրության պրակտիկայում պետք է կիրառեն երկրագործության խոտագաշտային սիստեմ :

Ժողովրդի թշնամիները համար կերպով ձգտում էին դանդաղեցնել երկրագործության խոտագաշտային սիստեմի արմատավորումը առվարդագույների ու կոլխոզների դաշտերում:

Դրա համար նրանք ոչնչացնում էին բազմամյա խոտարույսերի սերմերն ու վնասաբարություններն խեղաթյուրում էին ցանքաշրջանառություններն ընդհանրապես և խոտագաշտային ցանքաշրջանառությունը՝ մասնավորապես:

Բայց արոցկեխտական-բուժաբինյան անարդված կույտը և մարդկության ամեն մի նեխվածք երրե՛ք չի կարող շրջել սույնառություններն ընդհանրապես և խոտագաշտային ցանքաշրջանառությունը՝ մասնավորապես:

Երկրագործության խոտագաշտային սիստեմի բոլշևիկյան կիրառումը սոցիալատական դաշտերում մեղ կօգնի ոչնչացներ և արագ կերպով լիկվիդացիայի ենթարկելու այդ վնասաբարության հետևանքները:

ԽՈՏԱԴԱՇԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԽՈՏԱԴԱՇՏԱՅԻՆ
ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Երկրագործության խոստադաշտային սփառեմի ցանքալիջան
նառության մեջ վճռական դերը պատկանում է խոստադաշտերին :
Նրանց ազգութեանիկորեն ճիշտ կազմակերպելուց է կախված հո-
գի բերրիության պարմաների վերականգնման և բարձրացման
հաջողությունը, բերքատվության բարձրացման համար մզվող
պայքարի հաջողությունը :


Աստաղաշտային ցանքաշըանառությունը ակտվում է խոտա-
դաշտերով:

Առաջին հայացքից կարող է թվալ, որ միենույնն է, թի ինչ խոսեր պետք է ցանել խոտագաշտում՝ միամյա թե բադ-մամյա, թիթեռնածաղկավորներ թե հացազգիներ, կամ արդերկուսի խառնուրդը։ Իրականության մեջ ամեն ինչ կախված է նրանից, թե ինչ խոսեր են ցանվում խոտագաշտում։

Խոշոր տարբերություն է նկատվում միամյա և բազմամյա խոսերի մեջ: Այդ տարբերությունը պարզ կերպով ընդունվում է՝ ակսած նրանց թփակալումից և հատկապես՝ լավաբառահայտված է՝ հայոց պատմությունների վրա:

Միայնակ հացագիների քփակալման առանձնահատկությունները .— Երբ հացազիների սերմն ընկնում է խոնավության, օդի և ջերմության նպաստավոր պայմանների մեջ, նա ծլում է : Միայնակ հացազիների ծլելուն անմիջապես հաջորդում է նրանց

Թփակալումը (նկ. 3) : Թփակալման էությունն այն է, որ առաջանում են հնթահողային նոր ցողուններ՝ իրենց թփակալման հանդույցներով։ Վերջիններոց հաջորդականորեն զարգանում են նոր ցողուններ՝ իրենց թփակալման հանդույցներով։ Յուրաքանչյուր թփակալման հանդույց ինքուրույն կերպով կաղմում է վերերկիցա ցողուն և ճյուղավորվող արմատներ (նկ. 4)։ Միամյա հացաղղիների թփակալումը կարծ ժամանակ է տեսմէն թփակալման կարծ տեսղությունը երկու աղղեցության արդյունք է՝ բնության և մարդկանց կողմից երկար ժամանակ նրանց մշակելու։ Հողադորձը շահագրդուկած էր ունենալ կարճ ժամանակամիջոցում թփակալվող բույսեր, այդ պատճառով




Նկ. 3. Կուլտուրական հացաղղիների թփակալման հանդույցի գոյացման սկիզբը՝ ա) սերմը, բ) երկրորդ կարգի արմատները, գ) թփակալման հանդույցը, դ) երրորդ կարգի արմատի առաջանալը և հողի մակերևույթը:

Նկ. 4. Հացաղղիների թփակալումը ա) սերմը, բ) երկրորդական արմատները, գ) թփակալման հանդույցները, դ) արմատները, ե) վերերկիցա ցողունները:

ընտրում էր կարճ ժամանակամիջոցում թփակալվող հացահամբիկներ :

Ներավի, եթե թփակալումը ենթադրենք տեսքը 20 օր, ապա հացահամբիկների հասունացման ժամանակ զաշտը խայտարդետ կլիներ : Հացահամբակիների ցանքերը կազմված կլինեին բոլորով մինչ հասունացած և մեծ քանակությամբ կիսահաս բույսերից : Բույսերի անհավասար հասունացումը չափազանց կղթվարացներ երանց բերքահավաքը : Ավելի վաղ բերքահավաքի գեղքում, բերքի կորուսան անխուսափելի կլինի, ոչ լրիվ հասունացած բույսեր հնձելու հետևանքով : Ավելի ուշ բերքահավաքի գեղքում կորուսառը տեղի կունենար գերհասունացած հատիկների թափելու հետևանքով :

Միամյա բույսերի մեխնելու ժամանակը — Միամյա հացաղ-




Նկ. 5. Բաղմամյա խոտաբույսի ծրւում՝ ա) սերմը, բ) երկրորդական արմատը, գ) թփակալման հանգույցը, դ) արմատները, ե) առաջին տերերը զ) երկրորդ տերերը, հ) հաղի մակերեսը:

Խոտի և բաղմամյա այլ հացազգիների սերմերի ծրւմը տեղի է ունենում նույն ձևով, ինչպես միամյա հացազգիներինը բայց զարգացման մեջած ստաղիաներում տեղի են ունենում մեծ փոփոխություններ :

Քիների բոլոր ցողունները կամ համենայն դեպքում նրանց մեծամասնությունը սերմ տալիս է ցանքի տարում: Սերմերի հասունացման հետ միաժամանակ նրանց թե պաղաքերող և թե ոչ-պաղաքեր բոլոր ցողունները ամբողջ արմատների հետ միասին չորանում և մեռնում են: Դա տեղի է ունենում ամառը: Կենդանի են մնում միայն սերմերը: Նույն ձևով են զարգանում և միամյա թիթեռնածածկավորները: Միայն նրանց մոտ բացակայող թփակալման հանդույցների փոխարեն զարգանում է արմատավզիկը:

Բազմամյա խոտաբույսերի թփակալման առանձնահատկությունները: — Տիմոֆեևիայի, Ժիտնյակի, շյուղախոտի, ողնա-

Բազմամյա հացաղղիների թփակալումը սկսվում է ոչ թե ծլելուց անմիջապես հետո, բնչութեա միամյա հացաղղիներինը, այլ միայն երկար ընդմիջումից հետո։ Բազմամյա հացաղղու սերմի ծլելու ժամանակ գոյանում է թփակալման մեկ գլխավոր հանգույց, որից զարգանում է մեկ ծաղկող և պտղաբերող ցողուն (նկ. 5)։ Թփակալումը, այսինքն ցողունների նոր սերունդների առաջացումը սկսում է գլխավոր ցողունի ծաղկելու ժամանակաշրջանի սկզբից և շարունակվում է ընդհուալ մինչեւ



Նկ. 6. Բազմամյա հացաղղու թփակալումը. ա—սերմը, բ—երկբորդական արմատները, ը—թփակալման գլխավոր (առաջին) հանգույցը, զ, ե և գ—թփակալման հանգույցները, ը—արմատները, է—ստորերկրյա միջնանցաւցային տարածությունները.

ձմռան սկիզբը։ Մինչեւ ծաղկելը, ծլած բույսի մեջ՝ նրա գլխավոր ցողունի չիմքում կուտակվում է սննդանյութի ամբողջ պաշարը, գոյացնելով սոխանման հաստացումներ։ Այդ պահեստի նյութի հաշվին արագ կերպով զարդանում է ծլած սերմից գոյացած զլիսավոր ցողունը։ Հետագայում նա ծաղկում է և առաջացնում է հասունացած սերմեր։

Բազմամյա հացաղղիների թփակալումը՝ նրանց կյանքի հաջորդ տարիներում էլ սկսում է նրանց ծաղկման հետ միաժամանակ (նկ. 6)։ Հետևաբար, բազմամյա հացաղղիների ցողուններ դոյցացնելու ընդունակությունը անսահմանափակ է։ Պատահական չէ, որ մարզագետինները և բազմամյա հացաղղի-

ների խոտհարքային տավիաստաններն ընդհուպ մինչեւ ձմեռ կանաչում են :

Բազմամյա խոտաբույսերի մեռմելու ժամանակը .— Սերմերի հասունանալուց հետո բաղմամյա հացաղդիների պաղպարերող ցողունները միանդամից չեն մեռնում, ինչպես միամյա հացաղդիներինը: Նրանք իրենց կենսունակությունը պահպանում են մինչև կայսուն սառնամանիքների սկսվելը: Զմեռը մեռնում են չպաղպերող ցողունների բոլոր տերենները, բացառությամբ բարակաստիկի և տափաստանային վարսակի: Մեռնում են նույնպես ստորերկրյա այն ցողունները, որոնք մինչև ձմեռվասկսվելը չեն կարողացել բավականաչափ պահևստանյութ կուտակել՝ սառչելուց պաշտպանվելու համար:

Բաղմամյա հացաղդիների մնացած բոլոր ցողունները ձմեռնում են :

Հաջորդ տարին, վաղ գարնանը, նախորդ տարում գոյացած և ձմեռած բոլոր ցողունները տալիս են նոր բնձյուղներ: Հետագայում խոտաբույսերը ծաղկում և բերք են տալիս: Ծաղկման հետ միաժամանակ բաղմամյա հացաղդու յուրաքանչյուր ցողուն սկսում է թփակալել: Թփակալումը տեղի է ունենում մինչև ձմեռան սկիզբը:

Նույն ձեռվ են զարդանում նաև բաղմամյա թիթեռնածաղկավորները: Սակայն նրանք չունեն թփակալման համեստոցներ: Թփակալման հանգույցի գերը բաղմամյա թիթեռնածաղկավորների, ինչպես և միամյա հացաղդիների մոտ կատարում է արմատավզիկը: Նրանից աճում է զլսավոր արմատը, որ ապրում է նույնքան տարի, որքան և բույսը: Դրանից բացի, արմատավզիկից ամեն տարի զարդանում են վերերկրյա բնձյուղներ և երկրորդական արմատներ, որոնց կյանքի տեսդունը թյունը մեկ տարի է:

Ասածից ողարդ է, որ միամյա և բաղմամյա խոտաբույսերի զարդացման մեջ զոյտոթյուն ունի մեծ տարբերություն: Միամյա զարդացման մեջ զոյտոթյուն ունի մեծ տարբերություն: Միամյա խոտաբույսերի թփակալումը և ցողունների զոյտացումը տեղի է ունենում սերմը ծլելուց անմիջապես հետո, մինչդեռ բաղմամյա խոտաբույսերինը երկարատև ընդմիջումից հետո, միայն ծաղկման հետ միաժամանակ: Միամյա խոտաբույսերի թփակալելուն ու ցողունների արձակելը կարճատև է, իսկ բաղմամյա խոտաբույսերինը երկարատև, մինչև ձմեռան սկիզբը:

Միամյա խոտարույսերը մեռնում են ամառը և բաղմանում՝
Են միայն սերմերով: Բազմամյա խոտարույսերը մեռնում են
ձմեռը և բաղմանում են սերմերով ու ստորերկրյա արմատ-
ներով:

Միամյա և բաղմամյա խոտարույսերի զարդացման նկատ-
մամբ թվարկած առանձնահատկությունները տարբեր ձևով են
ազդում դյուղատնտեսական արտադրության ազբուելիության վրա:

Միամյա խոտարույսերը հողի մեջ հումուսի պաշարը չեն
վերականգնում: Միամյա բույսերի հնձից հետո խողանային
մնացորդների մեռած մասսան ամուսնը կուտակվում է հողի
մեջ: Այդ ժամանակ նրա մեջ դտնվում է ջրի շատ քիչ քանա-
կություն, հետևաբար և օդի մեծ քանակություն: Այդ պատ-
ճառով օրգանական նյութի քայլքայումը կատարվում է արագ
և ամբողջությամբ:

Միամյա բույսերի սերմերը հասունանալուց 15—20 օր հե-
տո, նրանց արմատների մնացորդները անհնարին է դանել հողի
մեջ: Քայլքայումը տեղի է ունենում լրիվ՝ մինչև բույսերի յու-
րացման համար պետքական ածխաթթու գաղի, ջրի և հան-
քային պարզ աղերի գոյացումը:

Միամյամանակ գոյանում է բակտերիաների կենսագործու-
նեության արդյունքը՝ հումուսը: Սակայն հողի ամառային չո-
րության պայմաններում հումուսային թթվուտին չեղութացնում
է այն ամյակը, որ արմատների քայլքայվելու ժամանակ առա-
ջանում է օդի լրիվ հոսանքի ազդեցության տակ: Բնդսմին, նա-
և նույնպես բակաերիաների կողմից քայլքայլում և վեր է ած-
վում հանքային աղերի, ջրի, ածխաթթու գաղի և ամիակի:

Հետևաբար, հողի կայուն կնձկային ստրուկտուրան վերա-
կագնելու համար միամյա խոտաերն անընդունակ են հողում
հումուս կուտակելու: Ընդհակառակը, նրանց զարդացումը պա-
հանջում է հողի հումուսի անընդհատ քայլքայումը: Այդ պատ-
ճառով միամյա խոտերը չեն կարող երկրագործության խոտա-
դաշտային սիստեմի խոտադաշտի կազմի մեջ լինել, երբ հար-
կավոր է միամյամանակ լուծել երկու տնտեսական խնդիր՝ վե-
րականգնել հողի կայուն կնձկային ստրուկտուրան և կանաչ կեր
ստանալ:

Միամյա կերախոտերը կարող են խոտադաշտի կազմի մեջ
մտնել այն գեպքում միայն, երբ նման դաշտից մեկ խնդիր

լուծում է պահանջվում՝ տնտեսության մեջ ավելացնել կանաչ կերի քանակը:

Բազմաբայա խոտարույսերը հողի մեջ վերականգնում են հումուսի պաշարը. — Միանդամյան այլ պայմաններում է դաշնվում բազմամյա խոտարույսերի մեռած օրգանական նյութի մասսան: Այդ մասսան կուտակվում է ձմռան սկզբին, պտղաբերող ցողունների և նրանց բույր արմատների մեռնելուց հետո: Ցած չերմաստիճանի և հողում ջրի բացակայության դեպքում, ձմեռվա ընթացքում, բուսական մնացորդները չեն կարող քայլայլել:

Գարնանը, խոտադաշտի հողի մեջ մեծ քանակությամբ չուր է պարունակվում: Բաղմամյա խոտարույսերով զբաղված հողի ամբողջ ծակուտիճները լցված են լինում ջրով: Օդ, հետեւապես և թթվածին նրա մեջ չի լինում: Մեռած բուսական մնացորդների քայլքայումը նման հողում տեղի է ունենում դարնանը՝ անաերորդ բակտերիաների ազդեցության տակ:

Այդ բակտերիաներն օրգանական նյութը քայլքայում են շատ գանգաղ, ընդամենք նրանք չուտով բոլորովին դադարեցնում են իրենց գործունեությունը, որովհետեւ հողում կուտակվում է նրանց համար վնասակար իրենց արտադրանքը:


Գարնանը, հողի առաքնալու հետ զուգընթաց, ուժեղանում է նրա միջից ջրի գուրբշիացումը: Այդ ժամանակ հողի վերին շերտն անցնող օդը ուժեղացնում է աերորդ բակտերիաների գործունեությունը: Նրանք ամբողջությամբ կլանում են այդ օդը, մեռած օրգանական մնացորդների քայլքայման ժամանակ այն օկտիացիանելու համար: Խոտադաշտի հողի մասսայի մեջ օդի թթվածինը չի կարող ներթափանցել: Այդ պատճառով, նույնիւ ամառը, խոտադաշտի հողի մասսայի մեջ բազմամյա խոտարույսերի օրգանական մնացորդները չեն քայլքայվում: Ձմռան սկզբին հողի մեջ դարձյալ մեռնում են բազմամյա հացազդիների պտղաբերող ցողունների ստորերկրյա մասերը: Հաջորդ տարվա դարնանը, մեռած օրգանական մնացորդների քայլքայումը տեղի է ունենում նույն կարգով, ինչպես նախորդ տարում, սակայն ավելի ուժեղ, որովհետեւ քանի շատ են բուսական մնացորդները հողի մասայում, օդի թթվածինը հողի մակերեսից այնքան ավելի ուժեղ է կլանվում: Այդ պայմաններում, բակտերիաների կողմից օրգանական մնացորդների քայլքայմանը անխուսափելիորեն զուգակցում է հողի հումուսի դոյացումը:

Բապէմայլա խոտաբույսերի դաշտում նա չի կարող քայլայիլել։
Բաղմացյա խոտաբույսեր ցանած հողում անպայման մեռած օրդանական նյութ է կուտակվում, ըստ որում այդ կուտակումը տարեց-տարի ավելանում է։

ԱՍ.ՈՒ. ԲԱԶԱՐԱՄՅԱ. ԽՈՏՈ.ԲՈՒԿԵՎՈՐԻ ՄՃԱԿԱՆԹ-ՅՈՒ
ՆԵՐՆԵԱ.ԿՈՒԹՅՈՒՆՔ

Խոտադաշտում բազմամյա խոտաքրույսերի կուլտուրայի պարտադիր լինելը կազմում է երկրագործության խոտադաշտային սխտեմի խոտադաշտի միջու կազմակերպման ազրութիւնիկական առաջնությունը :

Սակայն Հողի բերրիության պայմանների վերականգնման Արարացացման համար ոչ բոլոր բազմամյա խոտաբույսերը կարող են հալասար չափով մասնակցել խոտադաշտի կարգի մեջ։ Հողի կայուն կնճկային ստրուկտուրան վերականգնելու հա-




Նկ. 7. Կոճղարմատային հացազգիների կաճղարմատների և արմատների բաշխման սխեման՝ ա) սերմը, բ) երկրորդական արմատները, գ) առաջին միջնադուցային տարածությունը, դ-ե) թփակալման հանդույցները, զ) երրորդ կարգի սրմատները, է) տերեապատաները, ը) կարճ ճյուղավորվող արմատները, թ) հողի մակերևույթը:

մար նախ և առաջ պետք է օգտագործվեն բազմամյա հացաղ-
գիներն ու բազմամյա թիթեռնածաղկավորները։ Բայց խոտա-
գաշտում նրանց նշանակությունը չափ տարբեր է։ Այդ տարբե-

բության դլխավլոր պատճառը հացազդիների և թիթեռնածաղկավորների արմատների առանձնահատկությունների մեջ է կայսում :

Հացազդի բաղմամյա խոտաբույսերը գլխավոր առանցքային արմատ չունեն: Նրանց արմատները բաղմաթիվ են, բարակ, ճյուղավորվող: Նման արմատները կոչվում են վնջային: Ընդհակառակը, թիթեռնածաղկավորների առանձքային արմատները քիչ ճյուղավորվող են, բայց բավականին երկար (մինչև 20 մետր):



Նկ. 8. Խիտ թփային հացազդիների թփի սխեման ա—բ—գ—դ—ե—զ) թփակտման հանգույցները. է) հողի մակերեսութիւն:

Բաղմամյա հացազդիների արմատների ձնշող մասսան դարպանում է հողի վերին շերտում՝ 20-սանտիմետր խորության վերաբար: Այդ խորության վրա նըանք շատ խիտ կերպով և հավասարչափ տարածվում են հողի մեջ: Նրանց մեռնելուց հետո հողի մեջ մնում են բուսական մեռած շատ մնացրդներ և հումուս:

Թիթեռնածաղկավորները հողի վերին շերտում չեն կարող կուտակել այդպիսի քանակությամբ օրգանական նյութեր: Նըանք կուտակում են ավելի քիչ, քան հացազդիները: Այդ

պատճառով հումուսի պաշարը հողում վերականգնվում է բաղմամյա հացազդիների մշակման ժամանակ:

Հողի կիմկային ստրուկտուրան վերականգնելու համար պետք է մշակել բազմամյա նոսր թփային հացազդիներ: Բարձամյա ամբողջ հացազդի խոտերը բաժանվում են երեք գլխավոր

խմբի, այս է — կոճղարմատավորներ, նոսրթփայիններ և խիտթփայիններ:

Կոճղարմատավոր բազմամյա հացաղղիններին պատկանում են այնպիսի խոտաբույսերը, ինչպես օրինակ՝ սողացող սիկախորը, անքիստ ցորնուկը, արլանդակը և այլն:


Դրանք չեն կարող սպագործվել հողի կնձկային ստրոկառուրան վերականգնելու համար, որովհետև սրանց արմատները մեծ մասամբ շատ կարծ են:

Բացի դրանից, խոտագաշալ վարելուց հետո նրանք ուժեղ կերպով վարակում են հողը, որոնց ոչնչացնելու համար շատ ջանքեր են պահանջվում (նկ. 7):

Խիտթփային բազմամյա հացաղղիններին են պատկանում այնպիսի խոտաբույսեր, ինչպես օրինակ մարգագետնուկը, սպիտակաբերիկը, բարակառուիկը, փետրախոտը և այլն:

Հողի կնձկային ստրոկառուրան վերականգնելու համար սրանք նույնակեն անպեսք են: Սրանց արմատները նույնակեն կարծ են և համարյա բոլորովին չեն ճյուղավորվում (նկ. 8): Բայց ամենաղլխավորն այն է, որ սրանք նորմալ կերպով կարող են զարգանալ այն դեպքում միայն, եթիւ հողի մեջ օրդանական նյութ շատ է կոտակված:

Հողի կնձկային ստրոկառուրան վերականգնելու համար ամենակատարելազործված բազմամյա հացաղղիններն են նոսրթփայինները: Այդպիսի հացաղղիններին են պատկանում մար-



Նկ. 9. Նոսրթփային հացաղղինների թփի սեփաման ա—բ—գ—թփակալման հանդույցները: գ—հ—կ) արմատները, է) հողի մակերեսույթը:

դաղետնային տիմոֆեևկան, ողնախոտը, մարդաղետնային չուղախոտը, լայնահասկ ժիտնյակը, Փրանսիական ռայլը և այլն: Սրանց արմատները բարակ են, շատ ճյուղավորումներ են տալիս և զարգացնում են բազմաթիվ մաղարմատներ:

Արմատների գլխալոր մասսան անցնում է Հողի մեջ՝ մինչեւ 30 սանտիմետր խորությամբ (նկ. 9):

Հողի կնձկային ստրուկտորայի գոյացումը՝ բարեւայաց կոսր քիային հացազգիների ազդեցուրյան տակ.— Իրենց զարդացման ընթացքում նոոր թիվային հացազգիների կենդանի արմատները խիտ ցանցով թափանցում են հողի վերին շերտի ամբողջ մասսայի մեջ: Նրանցից յուրաքանչյուրը ճնշում է գործում անստրուկտուր հողի մասսայի վրա, հեռացնում է նրա մասնիկները միմյանցից և նրանց՝ արմատի ամբողջ երկարությամբ խտացնում է: Ամեն տարի բակտերիաների գործունեության հետևանքով մեռնելով ու քայլքարիլով, արմատները հողի մեջ թողնում են զատարկ տարածություններ: Վերջիններս միմյանց հետ խճճված՝ արմատային ցողունների խիտ ցանց են կազմում, որից և պակասում է հողի միջմասնիկային հավասարաչափ կցման ուժը, այսինքն՝ հողի կազմակցվածությունը: Նման հողը հետև է վարել: Միաժամանակ մեծանում է հողի թափանցելիությունը ջրի և օդի համար:

Բակտերիաները բուսական մնացորդների քայլքայումից առաջացնում են թարմ հումուս: Օրդանական նյութի մասսայական կուտակման պայմաններում հումուսը պահպանվում է քայլքայումից և կուտակվում է հողում: Թարմ հումուսը արտադրական շատ կարևոր հատկություն ունի: Թափանցելով արմատային մաղանոթների մեջ նա միացնում է անստրուկտուր հողի բաժնեբաժան մասնիկները:

Այսպիսով, բազմամյա խոտարույների ծածկոցի տակ, միաժամանակ զարգանում են հողի երկու հակառակ հատկություններ՝ հողի որոշ մասում արմատային մաղանոթների մեջ մեծանում է հողի կազմակցվածությունը, այլ մասերում՝ արմատային մաղանոթների մեջ նա միացնում է անստրուկտուր հողի բաժնեբաժան մասնիկները:

Վերջապես, անկախ դրանից, հողի մասսան ամբողջ ժամանակ գտնվում է որոշ շարժուն գրության մեջ: Այդ շարժման գլխալոր պատճառը գտնվում է հողի խոնավության փոփոխության մեջ:

Երբ հողը խոնավանում է, նրա ծավալը մեծանում է: Որքան հողի մեջ կավը շատ է, այնքան խոշոր է այդ մեծացումը: Բայց հատկապես դա նկատելի է այն ժամանակ, երբ հողի մեջ մեռած օրդանական նյութ շատ կա: Մեռած օրդանական նյութի ջուրը պահելու ընդունակությունը (ջրունակությունը) շատ մեծ է:

Օրդանական նյութն ընդունակ է ծծել և իր մեջ պահել իր չոր վիճակի կը ունի 5—10 անգամ ավելի ջուր: Հաղենալով ջրով, օրդանական մեացորդներն ուռչում են և էլ ավելի են փոխում. հողի ծավալը: Առաջանում է հողի «ուռչում», նրա մակերեսույթը թեթևակի բարձրանում է:

Չորանալիս հողի ծավալը վորքանում է: Նաև ծածկվում է ճեղքերով և որոշ չսփով նասում է: Ջրի սառչելը նույնպես փոխում է հողի մասսայի ծավալը: Երբ ջուրը սառչում է, սառուցի ծավալը մեծանում է 1/11-ով: Սառուցը ճիշտ է հողի մասնիկները, որոնց արանքում դունվել է ջուրը:

Հողի ծավալի այդ փոփոխություններն առաջնում են նրա կուտած մասսայի բաժանումը՝ 1—10 միլիմետր մեծության բաղադրթիվ առանձին հատվածների—կնճիկների:

Հողը ճեռք է բերում կնճկային ստրուկտորա: Այսպես՝ կենդանի արմատների, հումուսի և ծավալի փոփոխության միասնական առ միաժամանակ ներզործության տակ, անստրուկտոր, անջատ մասնիկային հողը վեր է ածվում ստրուկտորային կնճկային հողի:

Բարդամյա քիքեռածաղկավոր խոտարույսերը նույր քիային բազմամյա հացազգիների հետ խառը մշակելու նշանակությունը— Բայց միայն բազմամյա հացազգիների մշակությունը ստրուկտորային հողի կնճիկներին կայունության հասկություն չի կարող տալ: Դա բացատրվում է նրանով, որ հացազգիների արմատների քայլքայման ժամանակ հողում կուտակվում է մեծ քանակությամբ հումուս, որի ամրությունը, այսինքն՝ ջրի մեջ չցրվելու ընդունակությունը շատ փոքր է: Վարդած այդպիսի խոտաղաշտը ջրում արագ կերպով տարալուծվում է:

Հողի կնճկային ստրուկտորայի կայունությունը շատ է ուժեղանում, երբ բազմամյա նոսր թփային հացազգիների հետ միասին ցանքում են բազմամյա թիթեռնածաղկավորները: Դրա համար անհրաժեշտ են երկար արմատներ ունեցող թիթեռնածաղկավորներ (նկ. 10), որոնք հողի խորը շերտերից վերցնում

Են իրենց համար մեծ քանակությամբ անհրաժեշտ կիր։ Բազմամյա թիթեռնածաղկավորների արմատի վերևի մասում կուտակվում է մեծ քանակությամբ սննդանիություն, այդ թվում նաև սպիտակուցներ։ Վերջիններս իրենց մեջ խօսոր չափով ազգութ, ծծումը և կալցիումը են պարունակում։ Թիթեռնածաղկավորների բուսական մնացորդների քայլայման ժամանակ գոյանում են ազգային և ծծմբային թթվուտների կալցիումի աղեր։ Այդ աղերի կալցիումը հումուսին կայունության հատկությունն, այսինքն՝ ջրի մեջ չտարալութվելու ընդունակությունն է տալիս։

Ահա թե ինչու երկրագործության խոտագաշտային սիրածին անպայման պահանջում է, որպեսզի խոտաղաշտի խոտակաղմը բաղկացած լինի բաղմանմանը հաջարդի աղացաղիների խառնություն։

Խոտագաշտը 2—3 տարվա ընթացքում օդուտագործելու, ինուտի խառնությը պետք է բաղկացած լինի հացազգիների և թիթեռնածաղկավորների հավասար քանակությամբ ցողուններից։ Որպեսզի այդ պայմաններն ստեղծել, անհրաժեշտ է հաշվի առնել թիթեռնածաղկավորների և հացազգիների սերմերի կշռի տարրերությունը։ Օրինակ՝ տիմոֆեևելայի սերմերի ավելի



թեթև է, քան կարմիր երեքնուկի սերմը: Այդ պատճառով նրանց ընդհանուր խառնուրդի կը ուժի 2/3-ը պետք է կաղմէն երեքնուկի սերմերը, իսկ 1/3-ը՝ տիտոֆենկայինը:

Բազմամյա նոր թփային հացազգիների և խոր արմառային սիստեմ ունեցող բազմաբջա թիրենածաղկավորների անհրաժեշտ խառնուրդի մշակումը կազմում է երկրագործության խոտադաշտային սիստեմի խոտադաշտի նիշուն կազմակերպման ագրոտեխնիկական երկրորդ պահանջը: Այդ գեպերում հացազգիները կուտակում են հումուսը, իսկ թիրենածաղկավորները տալիս են նրան կայումուրյան հատկուրյուն:

Բոլոր նրանք, ովքեր գտնում են, որ միայն հացազգիների կամ միայն թիթենածաղկավորների մշակմամբ կարելի է իմաստ լրել չափով վերականգնել և բարձրացնել հողի բերրիության պարբանականությը—աղբոտեխնիկական կոռուս սիսալ են կատարում:

Աղբոտեխնիկական ավելի կոոպիտ սիսալ են թույլ տալիս նրանք, ովքեր փորձում են հողի բերրիության պայմանները վերականգնել և բարձրացնել միաժյա կերախոտերի, օրինակ՝ վիկ-վարսակի խառնուրդ մշակելով: Միամյա կերի հացազգիների և թիթենածաղկավորների խառնուրդի մշակումը ո՛չ մի առնչություն չունի երկրագործության խոտադաշտային սիստեմի աղբոտեխնիկական խնդիրների հետ: Նման ձեռնարկումը միայն ուղղված է կերի խնդրի լուծմանը: Միամյա բոլոր բույսերը անընդունակ են վերականգնելու հողի կայուն կնձկային ստրուկտուրան, ընդհակառակը՝ նրանց զարգացումը առաջացնում է հողի ստրուկտուրայի քայլայում:

Բազմամյա խոտաբույսերի խառը մշակման առավելությունները միայն հողի բերրիության պայմանների վերականգնման և բարձրացման աղբոտեխնիկական նպատակներով չեն սահմանափակվում: Բարձրացյա հացազգիների և թիթենածաղկավորների խառն մշակումը տնտեսական մեծ նշանակություն ունի: Հացազգիները թիթենածաղկավորներից տարբերվում են նաև նրանով, որ նրանց աճը տեղի է ունենում ոչ թե վերելի, այլ ամրագլ ցողունի յուրաքանչյուր միջնանդուցային տարածության ցածի մասում: Հետեւարար, հացազգիներն ունեն աճման մի քանի կետ: Դա նշանակում է, որ սննդային թթվ հացազգիների մոտ հավասարաչափ բաշխված է ամբողջ բույսի մեջ և հացազգիների ցողուններն ըստ իրենց կերային արժանիքների, չեն տարբերվում իրենց տերմիներից:

Թիրեննածաղկալորների ցողուններն անում են միայն իրենց վերի ծայրով: Նրանց ցածի, ավելի հին մասում գերակշռում են փայտացած թիջները: Կենդանի թիջները պահպանվում են միայն այդ ցողունների կեղմի մեջ: Այդ պատճառով թիթենածաղկալորների մեջ սննդանյութը բաշխված է անհավասարաչափ կերպով և նրանց ցողունների կերային որակը չափ ավելի ցածէ, քան տերեններինը: Դրանով է բացարձում այն հանդամանքը, որ ուշ հնձված թիթենածաղկալորների խոտով անսուններին կերակրելիս, չափ մնացորդ է մնում: Բայց դրանից, թիթենածաղկալորների տերենները հեշտությամբ են թափվում չորացնելու, տեղափոխելու, անասնակեր տալու ժամանակ և այլն: Թիթենածաղկալորները բազմամյա հացաղդիների հետ խառը մշակելիս, նրանց կերային որակը լավանում է: Դեռ ավելին, հացաղդիների և թիթենածաղկալորների խառնուրդը ստեղծում է խոտի բերքի կայունություն, թիթենածաղկալորներին ապահովում է պառկելուց, հեշտացնում է թիթենածաղկակալորների չորացնելու:

ԲԱԶՄԱՄՅԱ ԽՈՏՍՐՈՒԹՅՈՒՆԻ ՑԱՆԿԵԼՈՒ ԵՊԱՎԵՆԱԿԵՆՔ

Ցանքի տարին բազմամյա հացաղդիները անջրդի պայմաններում չափաղանց նոսր են լինում: Այդ տարին ծաղկող ցողունների թիջը համասար է ծլած սերմերի թիջն: Միայն ծաղկման հետ միաժամանակ է սկսվում թիթենակալում և նոր ցողունների ստացումը: Այդ պատճառով բոլոր բազմամյա հացաղդիների մաքուր ցանքը (առանց ծածկոցի) անջրդի պայմաններում, նրանց զարդացման առաջին տարում, բերք չի տալիս: Ամենաբարձր բերքը ավելի հաճախ լինում է նրանց կյանքի երրորդ տարում:

Բազմամյա հացաղդիների բնական այդ հատկությունները, ի հարկե, չեն կարող բավարարել մեր պահանջներին՝ նրանց զարդացման աեմպի տեսակետից: Սակայն գիտությունը ստեղծել է այնպիսի մեթոդներ, որ հնարավորություն է տալիս բազմամյա հացաղդիներից լրիվ հունձ սուանալ ստուգին տարում: Այդ մեթոդներից մեկը գործնականում արգեն ստուգված է: Նա հետևյալն է՝ կատարում են բազմամյա հացաղդիների ենթացանք: Այդ դեպքում բազմամյա հացաղդիները ցանկում են որևէ միամյա բույափ ծածկոցով, որպիսին հավաքվում է հնձելու կամ արմատահան անելու (փիտելու) միջոցով:

Բաղմամյա հացազգիների զարդացումն արագացնելու մյուս
Նղանակը՝ նրանց աերժերի յարովիզացիան է, սակայն այդ եղա-
նակը բաղմամյա հացազգիների նկատմամբ դեռ լրիվ մշակված
է: Այդ պատճառով նա այստեղ չի նկարագրվում:

Բաղմամյա հացազգիների ցանքի տարին՝ նրանց զարդաց-
ման առաջին տարին է: Բաղմամյա հացազգիների ցանքերի
2-րդ տարին, անջրդի պայմաններում, նրանց օգտագործման
առաջին տարին է: Այդ պատճառով անջրդի երկրագործության
մեջ խոտաբռւյսեր մշակելիս պետք է տարրերել ևնթացանքի
տարին և նրանց օդոտակործման տարիները:

Բաղմամյա հացազգիների մաքուր ցանքի, այսինքն՝ առանց
ծածկոցի ցանելու գեպքում, չոռովվող տնտեսությունը շատ
բան է կորցնում: Նախ և առաջ աննպատակահարմար կերպով
է օգտագործում հողային տարածությունը, որովհետեւ ցանքի
տարրում խոտը չափազանց նոսր է լինում: Խոտի նոսրությունն
առաջացնում է խոտագաշտի ուժեղ աղբոտվածություն: Մոլա-
խոտերի գեմ պայքարը թուլացնելու դեպքում, նրանք կարող են
վերջնականապես խեղդել ցանված խոտաբռւյսերը:

Տափաստանային շրջանների չոռովվող երկրագործության
պայմաններում շատերը առարկում են բաղմամյա հացազգիների
ևնթացանքի դեմ: Ընդ որում, որպես փաստ, բերում են ջրի
պակասությունը հողի մեջ:

Նման առարկություններն անհիմն են: Հողի մեջ ջրի պակա-
սությունը առաջանում է հողի անստրուկտուր վիճակի և նրա
մշակման սխալ մեթոդների կիրառման հետևանքով:

Հողը դարձնելով ատրուկտուրային, *դրանով իսկ մենք ջրի
պաշարը բավականաշափ ավելացնում ենք նրա մեջ:

Որովվող տնտեսություններում բաղմամյա խոտաբռւյսերը
կարող են մշակվել առանց ծածկոցի:

Աղբոտեխնիկայի խնդիրն այն է, որ շրջանների բնական ա-
ռանձնահատկությունները հաշվի առնելով հանդերձ, չխոնարհվի
բնության առաջ, այլ դիտության ամրող պաշարը և մեր սո-
ցիալիստական տեխնիկայի ամբողջ հզորությունը պլանային
կերպով ուղղի բնությունը վերափոխելու գործին:

ԲԱՂՄԱՄՅԱ ԽՈՏԱԲՌՈՒՅՈՒՆՔ ՑԱՆԿԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Խոտագաշտերի տնտեսական և աղբոտեխնիկական նշանա-
կությունը հատկապես բարձրանում է բաղմամյա հացազգիները

աշնանացանի ծածկույթով ցանելիս : Այդ հղանակով մենք բաղմայի աշազպիներին ստիպում ենք ագելի արդյունավետ կերպով զարգանալու և արագացնում ենք նրանցից ամենաբարձր բերք ստանալը :

Բազմամյա հացազգիները ցանվում են աշնանը՝ աշնանացանի ծածկույթով :

Աշնանացան հացարույսերի ծածկոցով ցանված բաղմամյա հացազգիները քիչ բերք են տալիս : Այդ բերքի չափին անհշան է, ուստի նա չի ազդում աշնանացան հացարույսերի չորացման վրա (նկ. 11) :

Աշնանացանը և բաղմամյա հացազգիները միանդամից ցանել չի կարելի, որովհետեւ նրանց սերմերն ունեն տարբեր մեծություն և կը ու, այդ պատճառով պահանջում են տարբեր խորության ցանք :

Աշնանացանի տակ աշնանից բարձրամյա հացազգիների ենթացանք կատարելիս, բազմամյա թիթեռնածաղկավորները աշնանացանի մեջ ցանվում են դարնանը—շարքացանով (աշնանացանը փոցինելուց հետո) կամ շաղացանով՝ (փոցինելուց առաջ) : Աշնանացանի ծածկոցի տակ թիթեռնածաղկավորներն այդ գեղքում զարդացնում են չնչին կանաչ մասսա, որպիսին աշնանացանի բերքահավաքին չի խանդարում : Խոտարույսերի խառնուրդն անջրդի պայմաններում հաջորդ տարում բարձր բերք է տալիս :

Բազմամյա խոտարույսերի խառնուրդի ցանքը աշնանացանի ծածկոցով, հանդիսանում է երկրագործուրյան խոտադաշտական սիստեմի խոտադաշտի ֆիշտ կազմակերպման ագրոսելինիկական երրորդ պահանջը :

Խոտարույսերի լավ զարդացման համար ծածկող բույսի տակ անհրաժեշտ է մոցնել գոմազրի և հանքային աղերի պարտապացում :

ԽՈՏԱԴԱՇՏԱԿԱՆ ԽՈՏԱՐՈՒՅՍԵՐ

Խոտադաշտերի խնամքը ծածկող բույսի բերքահավաքի տարում — Մածկող բույսի բերքահավաքից հետո, առաջին տարվա խոտադաշտը սովորաբար առանձին ոչ մի խնամք չի պահանջում : Սակայն որոշ մոմենտներ անհրաժեշտ է ի նկատի ունենալ :

Այսպես — Մածկող բույսի բերքահավաքի ժամանակ չի

Կարելի ծղոտը և խրձերը քաշելով փոխադրել, կամ խողանեացրել: Բացի այդ, խոտադաշտում թիթեռնածաղկավորներ ցա-



Նկ. 11. Աշնանացանի ծածկութեալ տիմոֆեևկայի աշ-
նան և զարնան ենթացանքի արդյունքները՝ ա—են-
թացանքը կատարված է 1935 թ. օգոստոսի 28-ին՝ տա-
րեկանի ցանքի հետ միաժամանակ. բ—նույն դաշտում
գարնանը, ձյունը հալվելուց հետո կատարված է են-
թացանք (Վլասովի փորձը).

Նելու տարվա աշնանը դաշտը փոցինելուց պետք է խուսափել:
Շատ երկարատև և տաք աշնանը խոտը կարող է գերածել:

Այդ գեղքում պետք է այն հնձել, բայց երբեք անասունները չարածացնել, նույնիսկ հողը սառելուց հետո:

Հնձված խոտը թարմ վիճակում չ' կարելի օդտագործել որպես անասնակեր, որովհետեւ նա լուծ է առաջացնում։ Հնձված խոտը կարելի է սիլոսացնել։

Խոտադաշտի գարնան խնամքը — Հաջորդ տարին, վաղ գարնանը խնամքով զննվում է խոտադաշտը։ Զրուսած հատվածներում հնարավորին չափ չուտ ցանվում է խոտի խառնուրդ, ամելի լավ է վեստերվորդան—խոտական (միամյա) սայդրասով, հակառակ գեղքում՝ այդ բաց մնացած տեղերը կրծածկվեն մոլախոտերով։

Պրակտիկայում բավականին լայն տարածված է խոտադաշտի գարնան փոցխումը, աշնանացանը փոցխելու նման։

Աշնանացան հացահատիկների գարնան փոցխումն, առկասմած, աշնանացան բույսերի խնամքի կարեռը միջոցառումն է։ Նա հնարավորություն է տալիս աշնանացանի դաշտը մաքրել ձմռան ընթացքում մեռած տերեններից, իսկ ամենագլխավորը՝ փերեցնել ձմեռվա ընթացքում ամրացած հողը։ Հողի փիսրեցումը կարեռը է հետեւյալ պատճառներով։

1. փուխր չերտը համարյա բոլորովին դադարեցնում է ջրեղությանը հողից (բացի բույսերի գոլորշիցնելուց), բնդ ամին, միաժամանակ լավանում է հողի մեջ ջուր ներթափանցելու պայմանները.

2. փուխր չերտը հետությամբ է անցկացնում թփակալման հանգույցների չնչառության համար անհրաժեշտ օդի թթվածինը.

3. փիսրեցված հողում, օդի թթվածնի ներկայությամբ ապրող բականիբանների միջոցով տեղի է ունենում օրդանական մեռած նյութի ուժեղ քայլքայում, որի հետևանքով կանաչ բույսերի համար առատ սնունդ է զոյցանում։

Աշնանացանը՝ գարնան ուժեղ կերպով թփակալվում է, մանավանդ ցորենը։ Զարդացման այդ սատղիայում աշնանացան բույսերը պետք է առահովված լինեն ջրով, սննդով և օդի թթվածինով։ Այդ պատճառով աշնանացանի գարնանային փոցխումը նրա խնամքի անհրաժեշտ միջոցն է հանդիսանում։

Մինչդեռ բաղմամյա խոտարույսերի զարգացումը միանդամյա լարբերվում է աշնանացան հացահատիկներից։ Բազմամյա հացազիները թփակալում են ոչ քի գարնանը, ինչպես աշնա-

հացանը, այլ ավելի ուշ՝ ծաղկման սկզբից մինչև ուշ աշունը։ Այստեղից էլ ջրի, սննդի և օդի թթվածնի նրանց պահանջման հասկապես ուժեղ է հենց այդ ժամանակ։ Հետևաբար, խոտադաշտը գարնանը փոցինելու կարիք չի գրաւմ։ գարնան փոցին ավելորդ է։

Խոտադաշտի գարնան փոցինելու վեճառը։— Խոտադաշտի դարնան փոցինելը վնաս է։ Այն սննդություն, որն ուժեղ կերպով դոյանում է փոցինելու հետևանքով, չի կարող օգտագործվել բաղմայա խոտարույսերի կողմից։ Բաղմայա խոտարույսերը դարնանը զարգանում են ի հաշիվ նախորդ տարին հացազգիների թիւակալման հանդուցներում, իսկ թիթեռնածաղկավորների մոտ՝ արբատավզիներում կուտակված պահեստի նյութի։ Բացի դրանից, գարնանը խոտադաշտում գերակշռում է վեր բարձրացող ջրի հոսանքը և հանկանալի է, որ այդ ժամանակ սննդություն չի կարող թափանցել ցած՝ գեղի արժատների ճյուղավորությունները։

Ջրի, սննդի և օդի թթվածնի այդ բարենպաստ պայմաններն օգտագործում են մոլախոտերը։ Այդ պատճառով, որպես կանոն, գարնանը փոցինած խոտադաշտերը ուժեղ կերպով ծածկվում են մոլախոտերով։

Խոտադաշտի գարնան փոցինումն անբռույլառելի է։ Դրանումն է կայանում երկրագործության խոտադաշտային սիստեմի խոտադաշտի նիշու կազմակերպման ագրոտեխնիկական չափբարդ պահանջը։

Պրակտիկայում շատ հաճախ խոտարույսերի դարնան փոցինումը կիրառվում է խողանի մնացորդները հեռացնելու նպատակով։ Դրա համար պետք է գործադրել ոչ թե զիգզագ փոցիք, այլ ձիափոցիք։

Զիգզագիքիք ստամբները հողը չեն փիրեցնում, այլ սահելով գաշտի մակերեսով, հարվաքում են խողանի և այլ մնացորդները։

Խոտադաշտի գարնան հարթեցումը։— Խոտադաշտային յուրաքանչյուր ցանքաշրջանառության մեջ խոտադաշտին միշտ նախորդում է միամյա բույսերի 5—7 տարվա մշակում։ Այդ ժամանակամիջոցում, դաշտերը յուրաքանչյուր տարի մշակված են լինում, մանավանդ այն դաշտերը, որոնք ցանված են եղել շատ պահանջերի կուլտուրաներով և ցել են եղել։ Այդ պատճառով

բազմամյա խոտաբույսերի ցանելու ժամանակ հողն ուժեղ կերպով փոշիացած է լինում:

Բազմամյա խոտաբույսերի առաջին տարվա ձմեռելուց հետո խոտադաշտի փոշիացած հողը չափ հաճախ «նստում» է: Դրա հետեւանքով հացազգիների թփակալման հանդույցները և թիթեռնածաղկավորների արմատավզիկները մնում են հողի մակերևույթի վրա:

Թփակալման մերկ հանդույցները և արմատավզիկները հաճախ ոչնչանում են գարնան ցրտահարություններից, իսկ անվնաս մնացածներն, այդ դեպքում, չեն կարող նորմալ կերպով զարդանալ: Բանը նրանումն է, որ թփակալման հանդույցները և արմատավզիկները պետք է միխաժամանակ առաջովված լինեն ջրի և օդի թթվածնի հասանքով: Պարզ է, որ թփակալման հանդույցների մերկ լինելու գեղքում, նրանք զրկված են իրենց համար մշտական և կայուն խոնավությունից: Սակայն խոնավության հետեւանքով՝ թփակալումը կանոն է առնում: Խնում է խոտադաշտի բերքատվությունը և գաշտը ծածկվում է մոլուստերով:

Որպեսզի կանխել այդ չափազանց անցկանելալի հետեւանքները, պրակտիկան մշակել է խոտադաշտի գարնան հարթեցում՝ գլանելու միջոցով:

Հարթեցումը կատարվում է վաղ գարնանը, բաց տարածություններում ենթացանք կատարելուց հետո: Գլանը չացազդիների թփակալման հանդույցները և թիթեռնածաղկավորների արմատավզիկները սեղմում է հողի մեջ: Գլանումից հետո խոտաբույսերն արագ կերպով սկսում են թփակալել և հողի ամբողջ մակերեսույթի վրա ստվեր առաջանել, որով խեղդում են մոլախատերին:

Հարթեցումը կատարվում է ձանր հարթ գլաններով: Հարթեցումից հետո փոցինել չել կարելի:

Հարթեցման անհրաժեշտությունը որոշվում է զարնանը խոտադաշտը մանրազնին դիտելուց հետո, ընդ որում այդ միջոցառումը չափարյա միջուկ կատարվում է խոտի օլոսագործման առաջին տարում: Բանցարանոցային և կերային ցանքաշըջանառություններում հարթեցման պահանջ կարող է ծաղել խոտաբույսերի երկրորդ և նույնիսկ երրորդ ձմեռումից հետո:

Խոտադաշտի գարնանային կրացումը կամ զիազացումը — խոտադաշտի գարնանային խնամքի եղանակներին պետք է դա-

սել նաև կրացումը կամ՝ դիմուացումը։ Կրացվում են թթու հո-
ղերը, զիմացվում՝ հիմքայինները։

Բույսերը չեն տանում ոչ բարձր թթու և ոչ էլ հիմքային
միջավայր։ Հողի մեջ կեր կամ դիմուացնելով, մենք լավաց-
նում ենք հողի բերրիության քիմիական պայմանները։ Բացի
դրանից, խոտադաշտի կրացումով վերացվում է ցանքաշղանա-
ռության մեջ միամյա գաշտային կուլտուրաներ ցանած հողերի
կրացնելու անհրաժեշտությունը, մանավանդ, որ բոլոր հասկա-
վուները, տեխնիկական կուլտուրաները, ինչպես նաև կարող-
քելը անմիջականորեն կրացում չեն պահանջում։

Կիրը մացվում է խոտարույսերի օգտագործման առաջին
տարվա դարնանը, երբ թիթեռնածագկավորները հասնում են
10—15 ամ բարձրության։ Կրացումը կատարվում է առավոտյան
ցողին և չի ծածկվում հողով։

Այսպիսով, խոտադաշտի առաջին տարվա օգտագործման
դարնան խնամքի միջոցառումներն են —խոզանային և այլն մնա-
ցորդների հեռացումը, խոտերի ենթացանքը բաց տարածու-
թյուններում, խոտադաշտի հարթեցումը և կրացումը կամ դիմ-
ացումը, երբ հողում նկատվում է թթվության բարձրացում
կամ հիմքայնություն։

ԽՈՏԱՐՈՒՅՍԵՐԻ ԺԱՄՄԱՆԱՑՈՒՅԹ

Եթե խոտարույսերը մակվում են որպես կեր, ապա նրանց
պետք է վաղ հնձել, ըստ որում անհրաժեշտ է հնձել մինչեւ
ծաղկելը, որովհետեւ խոտարույսերի ծաղկելուց հետո նրանց
քիմիական կազմը էապես փոխվում է։

Խոկապես, ծաղկումը գա բույսերի սեռական բազմացման
ստացիան է, և պահեստին անդանյութերի մեծ ծախսում է
պահանջում։ Ծաղկման վրա բույսը ծախսում է բոլոր չարժա-
կան սպիտակուցների կերը, ինչպես նաև բավականաչափ քա-
նակությամբ լուծվող ծարպեր և ածխաջրեր։

Բացի դրանից, կերի մեջ պակասում են ավելի արժեքավոր
շարժական սպիտակուցները, ճարպերը և ածխաջրերը։ Ծաղկ-
ման ժամանակից սկսած, բույսի մեջ ուժեղ կերպով զարդա-
նում է փայտացած թաղանթանյութը։ Նա ավելի մեծ չափով իջեց-
նում է խոտի կերային որակը։ Ահա թե ինչու, ծաղկման ժա-
մանակ, մանավանդ նրանից հետո հնձած խոտը, դասում են կո-
պիտ կերերի չարքը։

Որպեսզի այդ տեղի չունենա, որպես կանոն, խոտը պետք է հեծվի ծագկելուց առաջ, կոկոնակալման ժամանակ։ Խոտի կազմն ուժեղ կերպով փոխում է, նայած հնձիք ժամկետին։ Դա կարելի է տեսնել սիզախոտի վերաբերմամբ կատարած փորձից։ Մինչ ծաղկելը հնձած սիզախոտն իր կերարժեքով հավասարեցված է վարսակի հատիկին։ Մինչդեռ նույն խոտը ծաղկած ժամանակ հնձելիս, մոտենում է աշնանացան ցորենի ծղոտի որպես կին։

Վաղ հունձը զբաղվորեն բարձրացնում է խոտագաշտի ընդհանուր բերքը։ և դա հասկանալի է։ Վաղ հնձիք ժամանակ սպիտակուցները ծաղկման վրա չեն ծախսվում։ Նրանք պահպանվում են ցողունների և տերենների մեջ։

Մինչ ծաղկելը հավաքված բերքն իր կշռով 10—15%-ով ավել է լինում, քան լրիվ ծաղկման ժամանակ հավաքած բերքը։

Մի քանի պրակտիկների մեջ տարածված է այն կարծիքը, թե ավելի ուշ հունձն իր բերքատվությամբ բարձր է վաղ հնձից։ Այդ տեսակետը նրանք հաստատում են, հենցելով այն բանի վրա, որ հնձող մեքենան նոր ընդյուղներն են է կտրում։

Տվյալ դեպքում նրանք հաշվի չեն առնում, որ այդ ընձյուղները դեռ կարճ են և, բացի դրանից, չորացման, պահպանման ու կերպերելու ժամանակ հեշտությամբ թափվում են, ուստի այդպիսիք, որպես կեր, չեն օգտագործվում, այլ ընկնում են խոտի մանրունքների մեջ։

Բաղմանյա խոտաբույսերի վաղ հունձն երկու հունձ ունենալու հնարավորություն է տալիս, ըստ որում, Զբդ. հունձն իր կշռով համարյա հավասար է լինում պուածինին։ Դա նշանակում է, որ վաղ հնձիք դեպքում սոտացվում է երկու անգամ ավել և լավորակ խոտի բերք։

Այլ է ուշ կատարվող հունձը։ այդ ժամանակ խոտադաշտը շատ հաճախ և ուժեղ կերպով ծածկվում է բաղմանյա խոտաբույսերից շուտ հասնող մոլախոտերով։ Ուշ կատարված հունձ հաճախ գժվարացնում է խոտի չորացումը, նա զուգագիպում է ամստային անձրեների ժամանակաշրջանին։

Ուշ կատարված հնձիք գեղքում վատանում է բերքահավաքի որակը՝ խոտերը, մանալանդ թիթենածաղկավորները պահպիւմ են, ուժեղանում է տերեների փիլունությունը։ Վաղ հնձիք ավելի խոշոր արտադրական նշանակությունը կայանում է

բազմամյա խոտարույսերի սերմերի բերքատվության բարձրաց-
ման ժեղ:

Խոտարույսերի ուշ հնձիր դեպքում հյուսիսային, ոչ սեա-
հողային մարզերում մեծ մասամբ հնարավոր է միայն մեկ
հունձ ստանալ: Այդպես ուշ հնձած երեքնուկի սերմերը միշտ
էլ վարակված են լինում երկարակնճիթներով:

Այդ պատճառով բազմամյա խոտարույսերի մեկ հունձ կա-
տարելու դեպքում երեքնուկի սերմերի բերքը շատ քիչ է մի-
նում (հեկտարից 1—2 ցենտոներ):

Խոտարույսերի վաղ հունձն այդ մարզերում երկու հունձ
ստանալու հնարավորությունն է տալիս: Խոտադաշտը երկու ան-
դամ հնձելիք՝ երեքնուկի սերմերի վարակվածությունը բոլորո-
վին վերանում է, որով և բարձրանում է այդ սերմերի բեր-
քատվությունը:

Թիթեռնածագրկամլորների առաջին հնձիր ծաղկումը դուզա-
դիպում է երկարակնճիթավորների թուչքին: Այդ նկատառում-
ներով խոտադաշտի առաջին հունձն օգտագործում են միայն
որպես խոտ: Իսկ երեքնուկի սերմ ստանում են (խոտից օգտվե-
լու առաջին տարուց միսած) բացառապես Զ-րդ հնձից, որի
ծաղկումը զուգադիպում է իշամեղուների (երեքնուկը փոշո-
տողների) թուչքին:

Առաջին հունձը կատարվում է կոկոնակալման սկզբին:

Սերմի գոյացումն ուժեղացնելու համար, առաջին հնձից
հետո խոտադաշտը պարարտացվում է Փոսֆորային պարարտ-
այութերով (սուլբերֆոսֆատով): Խոտադաշտի ճիշտ կտղմա-
կերպման դեպքում, երկրորդ հնձից ստացված երեքնուկի սեր-
մի բերքը բարձրանում է, հասնելով հեկտարից 4—6 ցենտոների:

Բազմամյա խոտարույսերի սերմերը պետք է ստանալ ոչ թե
ցանքաջնարառությունից գուրք գտնվող առանձին սերմնարան-
ներից, այլ ցանքաշնառության կազմի մեջ մտնող խոտա-
դաշտով: Բազմամյա խոտարույսերի խառը ցանքի ժամանակ,
խոտադաշտում սերմ ստանալու համար բույսեր թողնելը՝ ոչ մի
կերպ չի խախտում երկրագործության խոտադաշտային սիս-
տեմի խնդիրները:

Բազմամյա խոտարույսերի մաքուր ցանքի լայնաշարք կու-
տուրան պետք է կիրառվի միայն սելեկցիայի աշխատանքնե-
րում՝ սելեկցիոն տեսակավոր սերմեր ստանալիս:

Խոստաղաշտի վաղ հունձը, բացի վերոհիշյալից, ունի ազրութեանիկական խոչոր նշանակություն։ Այդ նշանակությունը կայանում է նրանում, որ խոստաբույսերի հնձի քանակը կրկնապատճելիս, հողի մեջ, ուշ հնձի համեմատությամբ կուտակվում են ոչ պակառ, քան կրկնակի քանակությամբ մեռնող արմատներ։ Որքան շատ օրդանական մնացորդներ և հումուս է կուտակվում հողում, այնքան ավելի լավ է վերականգնվում հողի կնձկային ստրուկտուրան։ Հնձերի թիվն ավելացնելով, մենք արագացնում ենք մեր ներդործության տեմպը հողի վրա։

Սրանք են վաղ հնձի բարձաղան և բացառիկ կարեոր հետեւանքները։

Խոստաբույսերի վաղ, այսինքն՝ կլիննակալման ժամանակ (երբ երեքնութիւն մի ծաղիկ չկա) խունքը, հանդիսանում է երկրագործության խոտադաշտային սիստեմի խոտադաշտի նիշտ կազմակերպման ազդանելիկական 5-րդ պահանջը։

ԲԱԶՄԱՄԵԾՈՒԹՅՈՒՆ. ԽՈՏԱԲՈՒԿԵՄԵՐԻ ՓՈՑԽՈԽՄԸ ԵՎ. ՄՆՈՒՅՈՒՆԸ

Խոտհնձից հետո սկսում են ուժեղ կերպով առաջանալ բարձամյա հացազգիների նոր ընձյուղներ, իսկ թիթեռնածաղկավորների արմատավզիկների մեջ՝ սննդանյութեր կուտակվել։ Այդ ժամանակ խոստաբույսերը ջրի, սննդի և գետի թփակաւման հանդույցները օգի թթվածնի հոսանքի մեջ կարիք են դդում։ Որպեսզի բույսերի այդ պահանջը բավարարել, անհրաժեշտ է խոտադաշտը փոցինել։ Փոցիսումից հետո հողի փիրեցված մակերեսը նրան պաշտպանում է ջրի անարդյունավետ կորուստից և ուժեղացնում է ամառային անձեռների ներթափանցումը հողի մեջ։

Դրա հետ միաժամանակ ուժեղանում է կանաչ բույսերի կողմից յուրացվող սննդի զոյացման բակտերիալ պրոցեսը։

Այդ պատճառով յուրաքանչյուր հնձից հետո փոցխումը խոտադաշտի խնամքի պարտադիր պայմանն է հանդիսանում։ Փոցխումը կանոնական է երկու հետք՝ ատամնալոյն ծանր

բոցիով։ Բազմամյա խոտաբույսերի ստորերկրյա և վերերկրյա մասերի ուժեղ դարպացումն առավելացնեա կախված է նրանից, թե բույսերը ի՞նչ չափով առահովված են ջրի ու սննդի միաժամանակ մատակարարմամբ։ Այդ պատճառով յուրաքանչյուր

Հնձից հետո նրանց պետք է սնուցել ֆոռֆորական և կալիա-
կան հեշտ լուծելիք պարարտանյութերով:

Երնքնուկի խառնուրդային ցանքի սնուցման համար աղստա-
կան պարարտանյութեր չպետք է օգտագործել, որովհետև ավե-
լորդ լինելուց զատ, նրանք կարող են ճնշել թիթեռնածաղկա-
վորների զարգացումը: Պարարտանյութերը հողի մեջ մտցվում
են խոտհնձեց հետո՝ փոցիւելու միջոցով:

Խոտադաշտի այլ խնամքը՝ նրա յուրաքանչյուր հնձից
հետո, լիովին վերաբերում է խոտադաշտի այն խնամքին, որ
կատարվելու է յուրաքանչյուր անդամ արածացնելուց հետո:
Այս գեպքում փոցխումն անհրաժեշտ է, դաշտում մնացած ա-
նասունների աղբը մանրացնելու և հալասարաշափ ցրելու հա-
մար:

Յուրաքանչյուր հնձից և արածացնելուց հետո սնուցումը
և փոցխումը երկրագործուրյան խոտադաշտային պիտի ին-
չոտադաշտի նիշտ կազմակերպման ազգային համար 6-րդ
պահանջն է:

ԽՈՏԱԴԱՇՏԸ ՈՐՊԵՍ ԱՐՋԱՎԱՐԺԻ ՅՆՏԱԳՈՐԾՆԵՐ

Երբեք չպետք է աչքաթող անել, որ անասունների, մա-
նավանդ մանր եղբերագործ անասունների, առավել ևս տնային
թուչունների արածացնելը շատ ուժեղ կերպով քայլքայում է
հողի կնձկային ստրուկտորան և նրա կայունությունը:

Այլ պատճառով առաջին երկու տարվա օգտագործման ըն-
թացքում խոտադաշտը չպետք է դարձնել արոտավայրը. միայն
երրորդ տարվանից այնտեղ կարելի է անասուններ արածաց-
նել: Մինչ այդ, խոտադաշտի մակերեսի վրա խիս ձիմ է գո-
յանում, որը բավականաչափ առաձգականություն ունենալու
չնորհիվ, թուլացնում է անասունների սմբակների ճնշման աղ-
գեցությունը հողի վրա: Նման ձիմ չունեցող խոտադաշտի
առաջին երկու տարվա օգտագործման դեպքում, նույնիսկ չոր-
մասուային ժամանակ, անասուններն իրենց ծանրությամբ ամ-
րացնում են հողի վերին շերտը և դրանով խոկ ստեղծում բա-
ցասական պայմաններ բազմամյա խոտարույսերի զարդացման
ու հողի կնձկային ստրուկտորայի վերականգնման համար:

Միայն մերձֆերմային՝ հատկապես կերային ցանքաշրջա-

նառությունների գեղքում թույլատրելվ է անասունների (մաս-
ղաշների և խողերի) արածացումը՝ օգտագործման երկրորդ
առվազանից :

Նույն պատճառներով խոտադաշտերում վաղ գարնանը և
աշնանը անասուններ չպետք է արածացնել. աշնանային խոտա-
դետք է հնձվի: Երկրագործության խոտադաշտային սիստեմի
դարպացումը առվազուններում ու կոլտոզներում լրիվ կերպով
կվերացնի վաղ գարնան կերի պահառը: Դրանով խոկ կվերանա-
նաե անասուններին վաղ գարնանը արոտի դուրս բերելու ան-
հրաժեշտություն :

Զիաքարը մեքենաներով հնձելիս՝ ձիերը պետք է պայտած
լինեն:

Խոկ եթե հունձն ու խոտի տեղափոխումը կատարվում է
տրակտորներով, ապա ոչ միայն տրակտորներն, այլ և սայլե-
րը պետք է ապահովված լինեն թթվուրավոր անիվային հար-
մարանքով: Այլ տեսակի անիվները մեծ վնաս են հասցնում
խոտադրույթերին:

Խոտադաշտը որպես արքուավայր օգտագործելը՝ միայն օգ-
տագործման 3-րդ տարրամից սկսած՝ կազմում է երկրագոր-
ծության խոտադաշտային սիստեմի խոտադաշտի նիշտ կազմա-
կերպման ազդակության 7-րդ պահանջը:

ԽՈՏԱԴԱՇՏԸ Վ.Ս.ՐԵՆ.ՈՒ ԺԱՄՄԱՆԱԿ

Խոտադաշտի ագրոտեխնիկական ճիշտ կազմակերպման
վերջին հարցը՝ նրա վարելու ժամանակն է: Բայ արտադրա-
կան նշանակության արդ մոմենտը ոչ պակաս կարեռ է, քան
բոլոր վերը թվածները: Խոտադաշտի վարելու ժամանակի
ոչ ճիշտ ընտրությունը կարող է ի չիք դարձնել խոտադաշտի
աղբոտեխնիկական բոլոր նվաճումները: Խոտադաշտի գլխավոր
խնդիրն այն է, որպեսզի հողում հնարավորին չափ մեծ քանա-
կությամբ օրգանական նյութ կուտակի:

Այդ տեսակետից խոտադաշտի վաղ աշնանային վարը
միանդամայն անպետք է: Այդ գեղքում օրգանական նյութի
ուժեղ քայլայումն անխուսափելիորեն մի կողմից՝ հողի
կնձկային ստրուկտուրայի կայունությանը մեծ վնաս կպատ-
ճառի, խոկ մյուս կողմից՝ աշնանային և գարնանային ջրերի

ազդեցության տակ բույսերի սննդի ավելի թանկարժեք մասերը—ազոտային սննդանյութերը—խոշոր չափով կըլացվեն:

Որպեսզի օրգանական նյութերի աշնան քայլայումը նվազեցվի, խոտադաշտը պետք է վարել ուշ աշնանը, միաժամանակ խոտափելով կայուն սառնամանիքների ժամանակ վարելուց: Այստեղ, որտեղ հողը ձմռանը չեւ սառչում, վարը կարելի է ավելի ուշ կատարել, այն հաշվով սակայն, որ վարն ավարտվել նախքան երկարատև անձրևների սկսվելը: Խոտադաշտը պետք է վարել բացառապես մեծ թեքությամբ թեկությամբ ունեցող նախախոփիկավոր գութաններով: Մնացած բոլոր գութաններն անպետք են, որովհետեւ նրանք կուլտուրական վար ապահովել չեն կարող: Վարի խորությունը պետք է լինի 20 սմ*) ոչ պակաս:

Խոտադաշտի մշակման խնդիրների մասին, նրանց խիստ կարեռոր լինելու պատճառով, կիսումի հողի մշակման սիստեմ-ներին վերաբերող հատուկ դիմում:

Խոտադաշտի ուշ աշնան վարը—նախափախիկ ունեցած գութաններով—20 սմ*) ոչ պակաս խորարյամբ, հանդիսանում է երկրագործության խոտադաշտային սիստեմի խորադաշտի նիշտ կազմակերպման ագրուտեխնիկական 8-րդ պահանջը:

*) ՀԱՍԹ-ի պայմաններում՝ 25—30 սմ ոչ պակաս խորությամբ:
Ծանոթ. խմբ.

ՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ

Հողի մշակման տեխնիկան բաղկացած է մշակման ձևերից կամ եղանակներից։ Մշակման գործիքներով հողի վես ներգրածելու հետևողական միջնառումների ամբողջականությունը կազմում է հողի մշակման սիստեմը։

Երկրագործության խոտագաշտային սիստեմի լայն կիրառումը սովորողների ու կոլխոզների դաշտերում անհնարին է, առանց գիտականորեն հիմնավորված հողի մշակման։ Հողի այլպիսի մշակմանը վերաբերում են միջյանց հետ փոխադարձարար կազմված արտադրական մշակման երկու սիստեմներ, այն է՝

1. Հողի հիմնական կամ ցրտահերկի մշակման սիստեմ։
2. Հողի նախացանքային մշակման սիստեմ։

Նայած, թե ինչ հողեր են մշակվում՝ մարդագետիններ, խոտագաշտեր, այսինքն՝ ճիշով ծածկված կամ վարված «փուխիր» հողեր, ցրտահերկի մշակման սիստեմը բաժանվում է՝

- ա) ճմուտի մշակման սիստեմի և
 - բ) խողանի մշակման սիստեմի։
- Ճիշտ նույնական է, նայած նրան, թե ինչ բույսերի համար է կատարվում հողի նախացանքային մշակումը՝ դարնանացանի, թե աշնանացանի, նա իր հերթին բաժանվում է՝

ա) հողի նախացանքային մշակումն ուղարկանացանի համար և

բ) հողի նախացանքային մշակում աշնանացանի համար կամ ցելագաշտի մշակում։

Հողի մշակման ընդհանուր խորիրը հողի թերթիության պայմանների բարձրացումն է, որ նկատի ունի՝

1. Հողի վարելաշերտին տալ կնծկային ստրուկտուրա՝

1—10 միլիոնը միջին մեծությամբ, հողի ամենաքիչ փոշիաց-
ման պայմանով.

2. Հողը մաքրել մուտքառութից.
3. Ոչխացնել դաշտի նախորդ՝ ծածկոցի կենսունակու-
թյունը.

4. Հողն անվնաս դարձնել՝ նրա մեջ եղած վնասատու մե-
ջատներից:

Հողի մշակման սխառեմների և երկրագործության սխառեմ-
ների մեջ դոյություն ունի սերտ-փոխադարձ կազ:


ՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՃԻՆ ՍԻՍՏԵՄՆԵՐԸ

Ճմուտի մշակման սխառեմը՝ նմաշերտը շրջելու միջնով.—
Մշակման բոլոր եղանակները զարգացել են խոպան հողերի ճը-
մուտը մշակելու եղանակներից: Ճմուտի մշակման ամենահին
սխառեմը—դա ճմաշերտի շրջելն է: Նա հատուկ էր երկրագոր-
ծության խոպանային և հարոսային սխառեմներին:

Ճմաշերտի շրջումը կատարվում էր «սարանով»: Դա—լայն,
փորք թեքություն ունեցող խոփով և րարձը թևով գութան է:

Ճմաշերտը շրջելով վարի ժամանակ ստացվում էր 50 մմ
լայնությամբ և 20 մմ հաստությամբ միջին մեծության շերտ:
Նա չէր փիրեցվում, այլ ամբողջությամբ շրջվում էր: Ճմու-
տը պառկում էր հակառակ երեսով (խոտով ծածկված մասը
տակն էր արվում):

Երեսերը գասավորվում էին շարքերով՝ մեկը մյուսի կող-
քին, առանց մեկը մյուսի վրա դրվելու (նկ. 12): Այդ վարը
կատարվում էր ամուսն կեսից սկսած մինչև ուշ աշուն:




Նկ. 12. Երեսերի դասավորությունը՝ ճմաշերտը շրջելով վարի դեպքում:

Նման վարի հետևանքով դաշտն ստացվում էր հավասար:
Հակառակ երեսով շրջված ճմուտը կարճ ժամանակում մեռնում
էր: Մշակման այդ եղանակի դեպքում նախորդ ծածկոցի կեն-
սունակության ոչխացման խնդիրը լրիվ կերպով հասնում էր
իր նպաստակին:

Սակայն ձմուռի մշակումը չէր կարող սահմանափակվել շերտը շրջնելով։ Ստիպված էին կիրառել հողի մշակման լրացուցիչ եղանակներ, որպեսզի հողը նախապատրաստեին ցանքի համար։ Հնուց նման եղանակ էր հանդիսանում փոցիսումը։ Փոցիսով փիսրեցնում էին գաշտի մակերեսը և այդ փիսրեցված հողով ծածկում էին ցանված հացահատիկը։

Ճմաշերտը շրջելով մշակելու դեպքում հացահատիկների ցանքը հնարավոր էր գառնում շարունակել 5—7 տարի։ Հետագայում հողը կորցնում էր բերրիության պայմանները, փոշեանում էր և հացահատիկների բարձր ու կայուն բերք չէր ապահովում։

Փոցիսը, որպես հողի մշակման վճարակար գործիք՝ ձմանշերտի շրջելու գլխաւոր թերությունն այն է, որ այդ դեպքում




Նկ. 13. Ժմանակակից երկաթյա փոցիսի երկու օդակները։

հողը մեծ մասամբ մշակվում է փոցիսով։ Փոցիսով աշխատելիություղի ամրող մասսան ստրուկտուրային վիճակից վեր է ած վում փոշեացած անսարուկառուր դրության։ Ատամնավոր փոցիսի բաղմաթիվ ատամների (նկ. 13) կամ գիսկավոր փոցիսի գիսիկերի աղղեցությունից կնձիկները մանրանում, փոշեանում

են, ահա այդ է փոցիի աշխատանքի աղբոտեխնիկական վիճակը ստրուկտուրային հողի համար: Որքան շատ փոշիանա հողն, այնքան դգալի է լինասը: Ճմաշերտը չըջելով հողի մշակելու այդ հետամնաց սխատեմը տարածված էր շատ երկար ժամանակ: Արևմտյան եպոսպայի բոլոր երկրներում նա գոյություն ուներ մինչև 19-րդ դարի սկզբը:

Ճմաշերտը չըջելով ճմուտը մշակելու սխատեմը ամբողջ ցանքաշրջանառության ընթացքում բարձր ու կայուն բերքատրվություն չի ապահովում, այդ պատճառով նա չի կարող պետքական լինել սոցիալաստական գյուղատնտեսության արտադրության համար:

Ճմուտի փորփոշավարը: — Ճմաշերտի շրջելու թերությունները փորձում էին փոխել ճմուտի մշակման նոր եղանակով՝ փորփոշավարով (նկ. 14):




Նկ. 14. Ճմաշերտերի գասավորությունը փորփոշավարի գեղքում:

Ճմուտի փորփոշավարը կատարվում է նեղ խոփ և ոչ այնքան բարձր ու երկար պատւակավոր թև ունեցող գութաներով (նկ. 15): Մոտավորապես 20 մմ լայնության և 15 մմ խորության ճմաշերտին ամբողջությամբ չի չըջում, ինչպես այդ կատարվում էր ճմաշերտը չըջելու ժամանակ: Գութանը ճմաշերտերն այնպես է դնում, որ մեկ չերտը մասամբ ծածկում է նախորդ չերտին: Այս եղանակով կատարած ճմուտի փորփոշավարն ավելի շատ թերություններ ունի, քան ճմաշերտի չըջումը, նախ և առաջ այն պատճառով, որ այս գեղքում ճմուտի կենսունակությունը չի ոչնչացվում:


Մյուս կողմից, բազմամյա խոտերն արագ աճում են ակոսների մեջ, մասնավանդ եթե աճառը և աշունը խոնալ են: Վարելահողը կարծես ծածկվում է խոտաբուջերի շաբախին ցանքով:

Ճմուտի փորփոշավարի այդ թերությունը վերացվեց գութանին անկյունակտրիչ (սկիմկոլոտեր, զյանտեր) հարժարեցնելով: Նա ճմաշերտի ձախ կողմից ճիմի փոքրիկ չերտեր էր կտրում (նկ. 16):



Նկ. 15. Կտրճացրած պտուտակափոր թեռով միախոփ անզլիական գութան. ա) զիւսավոր կորպուսը, բ) անկյունակտրիչը (սկիմկոլոտեր), գ) դանակը:

Որպեսդի վարելահողի ալիքավորությունը հարթեցվեր և ցանքի համար հողի փուխոր չերտ ստեղծվեր, ստիպված էին



Նկ. 16. Ճմաշերտի զասավորությունը անկյունակտրիչ ունեցող պտուտակափոր գութանով վարելիս՝ 1—ճմաշերտի զերքը դանակն անցնելոց հետո (ա), անկյունակտրիչը անցնելոց հետո (բ) և կրասուսի խոփն անցնելոց հետո (գ). 2—ճմաշերտի զերքը կրասուսի թեռն անցնելոց հետո, 3—ճմաշերտերի վերջնական զասավորությունը

Մինում փոցինել: Սակայն ճմաշերտերին ուղղահայաց անհնար էր փոցինել, որովհետև նրանք կարող էին չուռ գալ և ճիմը կրնկներ երես։ Մինչդեռ միայն չերտերի ուղղությամբ փոցինելիս, հաճախ պահանջվում էր մինչև 20 հետք կրկնել, որի հետևանքով հողն ուժեղ կերպով փոշիսնում էր։ Վարելու հաջորդ տարին դաշտը կրկին անդամ ուժեղ փոցինում էր։ Դա ստիպված էին կատարել, որպեսզի ոչնչացնեն ճմուտի կլոսաքայլայված կտորները։ Հողն էլ ավելի էր փոշիսնում և բույսերին ջրով ու սննդով մատակարարելու պայմանները վատթարանում էին։ Այդ պատճառով, ճմուտի փորփոշավարի գեպօւմ հա-

շահատիկների բերքատվությունն առաջին իսկ տարվանից են-
թարկվում էր ուժեղ տատանումների:

Միջին բերքատվությունը շատ ցածր էր:

Հետևաբար, ձմուտի փորփոշավարն ավելի անբավար էր,
քան ճմուտի զբարմը:


Ճմուտի չքերու և փորփոշավարի թերությունները բացա-
տրում էին նրանով, որ գործադրություղ գութանները ճմուտին
չէին փիլիքնում: Այդ պատճառով ստիպված էին լինում բար-
մաթիկ փոցխումներով փոշացնել հողը:

Հողի մշակման վիշտու սիստեմը:— Գութանների պտուտա-
կան թերությունները փորձում էին փոխարինել փլբող,
այսինքն՝ մանրացնող թե ունեցող գութանների գյուտարարու-
թյամբ: Նման թեր մակերեսը գլանի մի մասի մակերեսն է
հանդիսանում (նկ. 17): Փշրող թե ունեցող գութանով վար
կատարելիս, աշխատանքը բավարար ստացվեց միայն չնմակա-
լած, հասունացած հողերում, այսինքն՝ այնպիսի հողերում, ո-
րոնք ընդունակ են իրենց բոլոր մաղանոթներում 50—60% ջուր
պահելու:

Նման խոնավության դեպ-
քում ճմով չպատված հողն
ամենափոքր կազմակցվածու-
թյունն է ունենում: Հողը փը-
շվում է մանր, բայց ամուր
կնձիկների:

Գլանաձև թեր փշրում և
մասամբ մանրացնում է շեր-
տերը, բայց չի շրջում նրանց:
Այդ պատճառով թե ճմուտ և
թե չճմակալած չոր հողեր մը-
շակելիս անխուսափելիսրեն գո-
յանում են ճմի կտորներ և խո-
շոր չոր կոշտեր, ըստ որում
նրանք միշտ լինում են վարելահողի մակերեսին, որոնց ոչնչաց-
նելու համար անսպայման ստիպված էին մշակման լրացուցիչ
ձևեր կիրառել:

Ճմուտի կտորները «քրքրվում» էին միայն ատամնավոր
փոցխերով կամ դիմիկալոր ու ատամնավոր փոցխերով միասին:
Ճմով չպատված հողերի չոր կոշտերը ոչնչացնում էին կոշտ



Նկ. 17. Փշրող (գլանաձև) թե ա-
տամնավոր կոշտեր, ը—տեսքը վերեկց:

Հարդող հատուկ հարթիչներով՝ հետագա փոցխուժով։ Այդ բու-
լոր գործիքներն ուժեղ կերպով փոշացնում էին հողը։ Այդ-
պատճառով փշրող գութանով մշակման սիստեմի դեպքում
նույնպես բերքն անկայուն և ցածր էր ստացվում։

Միջին տիպի զուրանները — Անցած դարի 2-րդ կեսում
սկզբոց տարածվել նոր, այսպէս, կոչված միջին տիպի դու-
թաններ։ Նրանց թե՛ք ներկայացնում էր պառատակածեն և դա-
նաձեւ թե՛քի զուգակցություն, որոնցից առաջինը բարարար
չափով շրջում էր չերտը, խել երկրորդը մանրացնում այն։

Բայց չնայած գութանների նոր «բարելավումներին»,
նրանց ազգութեանիկական թերությունները ամբողջությամբ
սկսած ապանվում էին։ Վարեկուց հետո (նկ. 18) անպայման բա-
տիված էին կատարել փոցխում, դիսկում, հարթեցում, ար-
սինքն՝ դիմել հողի կոնձկային ստրուկտուրայի սիստեմի ուժեղ
քայլայման եղանակներին։

Անհրաժեշտ է նշել, որ ՍՍՌ Միության մեջ այժմ տա-
րածված գութանները զգնավորապես պատկանում են միջին
տիպի գութաններին։

Պատռակածեն և գլանածեն թե ունեցող գութանների ու
միջին տիպի զութանների ազգութեանիկական անկատարելու-
թյունը առաջացնում է հողի մշակման սիստեմների անկատու-
րելություն։

Այդ թերություններն այնքան մեծ են, որ նրանք սոցիա-
լիստական գյուղատնտեսության արտադրության հետագա
դարդացման արգելակ հանդիսացան։

Հողի երկակի վարի սիստեմը — Հողի մշակման հիմ-
տեմների ազգութեանիկական թերությունները վերացնելու
փորձերը ծագեցին դեռ կապիտալիստական գյուղատնտեսու-
թյան ընդերքում։

Անցյալ դարի կեսին արեւադան երրորդայում ծալալից
դաշտային խոտացանությունը։ Սակայն ճմաշերաը շրջով,
փորփոշավարող և փշրող գութաններով հողի մշակումը ոչնո-
չացնում էր բազմաթյա խոտաբույսեր ցանելու միջոցով հողի
բերրիության սպարմանների վերտկանդնման ամբողջ դրական
արդյունքները։ Փոցիսերու հետեանքով ստրուկտուրային հո-
գերը դառնում էին անստրուկտուր։

Ինչպես հայտնի է, նման հողի մեջ ջրի պաշարը և յու-
րացվող սննդի քանակությունը հաստատուն չէ, իսկ բերքը
շատ անկայուն է և ցածր։

Հետագայում գուան մշակման նոր եղանակ, որը հայտնի է երկակի վար անունով: Այդ մշակման էռությունն այն էր, որ մի ակրօսում միաժամանակ աշխատում էին փխրեցնող երկու զութան: Առաջին զութանը դրվում էր ¹⁰ սմ խորության վրա: Նա կտրում էր ճմի վերին շերտը և այն դցում ակոսի մեջ:

Հետեւ գութանը դրվում էր վարի լրիվ խորության վրա: Նա ծածկում էր չքանրացած ճմիմը փուփր հողով: Խոտագաշտի այդպիսի մշակման արդյունքը լինում էր այն, որ վարելահողը հարթեցվում էր, նրա մակերեսին ճմի կտորներ չեն մնում և փոցխելու կարեք չէր զգացվում: Հողի կնծկային ստրուկտորան չէր փոշիանում: Այդ ձեռվ վարված հողն իր մեջ պարունակում էր ջրի մեծ պաշար և երկար ժամանակ այն պահպանում էր բույսերի համար: Անընդհատ գոյանում էր բույսերի կողմից յուրացվող սննդի մեծ քանակություն: Ցանված բույսերը միաժամանակ մատակարարվում էին ջրով և սննդով, որ ամենազլիալորն է բարձր և կայուն բերք ըստանալու համար: Վերջապես, պակասում էր մշակումների թիվը:

ՀՅԴԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՈՒՆԻՑՆԵՐԸ ԿԱՍՏԱՌԱՓԻՆ ՌԻՆԵՑՈՂԻ ՊՈԽԹԱՆԵՆԵՐԸ:

Վարելաշերտի տեխնիկական հատկությունները և նրանց արտադրական նշանակությունը.— Հողի (մարդաբետնի, խոտագաշտի, խողանի) վարելաշերտը կարելի է բաժանել երկու շերտի: Նրանցից յուրաքանչյուրը տարբերվում է միմյանց նկատմամբ հակադիր հատկություններով:

Հողի վերեկ շերտը՝ դաշտի վրա մեքենաների, մարդկանց և անսունների շարժման, անձրևների լվացման և բակուրիաների կողմից հումուսի քայլայման հետևանքով ամուսն վերջին միշտ փոշիանում ու ամրանում է՝ միջին հաշվով մոտ 10 սմ խորությամբ: Իր հերթին հողի փոշիացումը բարձրացնում է նրա կառակցվածությունը, այսինքն՝ հողի մասն մասնիկների կցվածությունը:

Նման հողը կորցնում է կնճիկների (1—10 միլիմետր) վերածվելու ընդունակությունը:

Բացի դրանից, վերեկ շերտում բույսերի կենդանի արմատներ չատ են լինում: Նրանք հատկապես չատ են ճմակած հողերում, որտեղ արժամաները (և կոճղաբաժանները) իրար

Են միացնում հողի առանձին կոշտերն ու կնծիկները, ուժեւ զայնելով հողի մանրանալու անընդունակությունը:

Ահա՛ թե ինչու, բոլոր տեսակի հողատեսքերի՝ թե ճճուտի և թե խողանի վերեկ չերտը չե կարող մանրանալ և ստրուկտուրային կնծիկների վերածվել: Ճճուտը վարելիս, վերին չերտը կտրվում է ամբողջապես կամ ընդհատվող ժապավեններով, իսկ խողանի վերեկ չերտը ջարդվում է խոշոր կոշտերի, որոնք որքան չոք են, այնքան զժվար են մանրանում:

Մինչդեռ ճճուտի և խողանի ստորին չերտն ընդհատառակը՝ տարբերվում են նրանով, որ նա ընդունակ է կնծիկների վերածվելու: Նա կենդանի արմաներով ավելի թույլ է կարածվում:



Նկ. 18. Մեջին տիպի արմակտորային գութանով հերկած երեքնուելի դաշտի մակերեսը:

պակցված: Երա վրա չեն ազդում հողի մակերեսով չարժվադ ծանրությունները, նրա կնծիկները լվացող ազդեցությանը ենթակա չեն և բակտերիաները նրան չեն քայլայում: Նու պահպանում է իր կնծիկային ստրուկտուրան: Դրանով նա խիստ

տարբերվում է վերեկ չերտից։ Հետևապես, աշնանը, յուրաքանչյուր հողի վերին երկու շերտը միմյանցից խիստ տարրերվում են իրենց արտադրական հատկություններով՝ վերինը, մոտ 10 սմ խորությամբ, չի կարող վերածվել մանր կնճիկների, տառիքին ընդհակառակը՝ մանրանում։ Է։

Այդ տարեկը հատկությունները հաշվի էին առնված երկակի վարի ժամանակ։ Սակայն ազդութեանիկան արդյունքը տվյալ գեղգում չէր համընկնում կազմակերպական-տնտեսական պահանջներին։

Երկակի վարը պակաս արտադրողական էր։ Նշա բոլորովին բացասում էր բազմախոփ գութանների կերպումը։

Երկակի վարի բոլոր թերությունները լուիվ վերացվեցին 1854 թվին, Ալլեկի գութանի նոր գետավ՝ նախագութանիկի դյուտով (նկ. 19)։ Դա գութանի գլասավոր կորպուսից որոշ չափով փոքր կորպուս է։ Բայ առի լայնության նաև հավասար է առի երկու-երրորդին, ըստ վարի խորության՝ գլխավոր կորպուսի մոտավորապես կեսին։

Նախագութանիկը կարում է հողաշերտի ամրացած, կամ կոճղարմատներով և արմատներով խճճված վերեկ շերտը 10 սմ հաստությամբ և այն գցում ակոսի հատակը։

Նախագութանիկի հետեւում տեղավորված գանակը կորում է հողաշերտի ներքին շերտը դաշտի կողմից, իսկ դութանի զիխավոր կորպուսը բարձրացնում է այդ շերտը 10 սմ ոչ պակաս խորությամբ և թեով նրան ըքչելիա՝ հեշտությամբ մանրացնում է գութանի թեք թեփ վրա։

Վարի ժամանակ մանրացած ցածի շերտն իր կնճիկներով հավասարապես ծածկում է վերեկ այն շերտին, որին նախադութանիկը նոր գցել էր ակոսի հատակը։ Առանձնապես կարենոր է այն հանգամանքը, որ այդ ժամանակ վիճրում է միայն հողի ներքին շերտը, իսկ վերեկ և ներքենի շերտերը միմյանց հետ չեն խառնվում։

Ի՞նչ է կուտարական վարը։ Հողի այն վարը, երբ վարելահողի մակերեսից անջատվում է մանրանալու անընդունակ վերեկ շերտը և փոխարինվում է հեշտ մանրացվող ներքեկի շերտով, ընդ որում այդ շերտերը միմյանց հետ չեն խառնվում—կոչչեն է կուտարական վար։ Կուտարական վարի խորությունը չի կարող 20 սմ պահանջ լինել։ Այն դեպքերում,

Արք հումուսային շերտը 20 սմ խորության չփ հասնում, պետք է վարելահողի խորացման միջոցառումներ գործադրել:


Հողի մշակման բոլոր հիմն սիստեմները՝ շերտի շրջումը, փորփոշավարը, փշրող և միջին տիպի գործաններով վարը հողի կուլտուրական մշակում չէին կարող և չեն կարող ապահովել:

Այդ պատճառով նրանք պետք է ընդունվեն որպես սոցիալական երկրագործության պահանջները չքավարարող, հողի մշակման ոչ կուլտուրական սիստեմներ:

Կուլտուրական վարի գործիքը կարող է լինել միայն նախադութանիկավոր գործանը:

Նախագութանիկը պետք է գործադրվե բոլոր տեսակի հողերի՝ ճամփուտ, փափուկ հողեր և խողան վարելիս: Նախագութանիկը հանած կուլտուրական գործանը վեր է ածվում հասարակ գութանի: Նրա աշխատանքը չի տարրերվում փիրացնող գութանի վարից՝ իր բոլոր բացասական համկություններով հանդերձ:

Նախագութանիկը հանվում է միայն ցելագաշտի մեջ գումարը մացնելիս և կրկնավար կատարելիս: Նախագութանիկը հանելու գելագում՝ դոմազքն ավելի հավասարաչափ է խտությունը հանդերձ:



Նկ. 19. Բ. Սակելի միախոփ ձիու գութանը՝ նախագութանիկով:

Ժողովրդի թշնամիները այն տեսակետն էին տարածում, թե նախագութանիկը ավելորդ քաշով ուժ է պահանջում և դրահավ խոկ բարձրացնում է վառելանյութի ծախսը:

Նման կարծիքը բացահայտ վնասաբարական է: Նախագութանիկը ունեցող ճիշտ սարքավորած գութանի աշխատանքն ա-

վելի քիչ քարշող ուժ է պահանջում, քան հասարակ գութանիւ աշխատանքը՝ նրան հաջորդող անխուսափելի փոցիումով:

Ճիշտ սարքավորված գութանիւ նախադութանիկը դանում է դանակից առաջ, իսկ դանակն՝ անմիջականորեն դիմավոր կորսուսից առաջ: Այդ գեղքում վառելանյութի ծախոսումը, նախադութանիկը հանած գութանիւ աշխատելու համեմատությամբ, 10—15%-ով պակասում է: Եթե ձիու գութանիւ գանակը զրված է լինում նախադութանիկից առաջ, ապա գութանիւ նման սխալ սարքավորումը առաջացնում է էներգիայի 20%-ի գերածախու:

Նախադութանիկը գութանիւ աշխատանքին կայունություն է տալիս: Այդ հատկության համար նախադութանիկավոր ձիու դութանը կոչվեց «ՍԱՄՈԽՈՐԴ»:

Նախադութանիկ ունեցող բազմախոսի տրակտորային գութանների կիրառմամբ, գութանների «Սամոխորդ» լինելու համար կությունը նշանակությունները բայց մնացած բոլոր առավելությունները ամբողջությամբ պահպանում են իրենց նշանակությունը:

Տրակտորային գութանների գանակը զրվում է միայն վերջին՝ «գաշտային» կորպուսի մոտ: Նա կարգավորում է ակուսիկին անխորդ բնիքացքը:

Կուլտուրական վարի արտադրական նշանակությունը՝ կուլտուրական վարի բարձր արտադրական նշանակությունը նաև այն է, որ ակոսի հատակը դցած չմանբացող վերնի չերար աստիճանաբար ստանում է ժանր, կայուն կնճիկների բաժանվելու հատկություն: Մակերես տեղափոխված ստորին շերտն սկզբում կնձկային ստրուկտուրա ունենալով հանդերձ, հետադայում՝ ծանրությունների մնչման տակ և անձրեային ու ծյան ջրերով լվացվելու հետևանքով թթվածնին չի թույլ տա ներթափանցելու ստորին շերտը: Այդ պատճառով ցածում տեղի կունենա բուսական մնացորդների գանդաղ, առանց թթվածնի քայլայում, հումուսի կուտակմամբ: Բույսերի արմատներն առանձին կնճիկների կվերածեն ակոսի խորքը դցած կոշտերն ու ճմուտը: Կնճիկները կներծծվեն հումուսով, տեղի կունենա հողի կնճկային ստրուկտուրայի մասնակի վերականդնում:

Անձրևային ջրերը հողի վերին չերտից սկսում են դեպի ներքի չերտերը լվանալ կալցիումը, որպեսին հումուսի կողմից կայունացնություն է տալիս:

Նախագութանիկ ունեցող գութանով ճիշտ վար կատարելուց հետո, վարելահողն անմիջապես պատրաստ է յանքի համար:

Նա փոցիում չի պահանջում: Հետեաբար առկա են հողի բերիության բոլոր պարմաններն ու աշխատանքի բարձր արտադրողականությունը:

Այսպիսով, ճմուտի և խողանի մշակման տարածված սիստեմների վերլուծումից անհրաժեշտ է դաշտակացության, որ հողի մշակման ճիշտ սիստեմ կարող է համարվել միայն նախաղութանիկ ունեցող գութանի վարը:

ՃՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐ ՑԹԱՋԵՐԻՒՄ ՄԻՍՏԵՄԸ

Ճմուտի հիմնական, ցրտահերկի մշակության համար դոյլություն ունի միայն մի ձև, զա՞ նախաղութանիկ ունեցող գութանով մեկ անդամվար վարն է, որը կատարվում է ուշ աշնանը, 20 մմ ոչ պակաս խորությամբ*):

Խողանի հիմնական մշակման սիստեմը բաղկացած է երկու եղանակից՝

ա) խողանի երեսավարից և բ) ցրտահերկից: Խողանի երեսավարի գեղագում մոմենտը հանդիսանում է՝ պայքարը մոլախոսերի դեմ:

Մոլախոսերի դեմ պայքարի հարցում միշտ պետք է տարբերել երկու ուղղությունն, այն է՝ պայքարել դաշտերի տղանովածության դեմ, այսինքն՝ ոչնչացնել տարածված մոլախոսերը, ինչպես նաև հողում դառնված մոլախոսերի սերմերը, երկրորդ՝ պայքարել հողի աղբասվելու դեմ կանխելով աղբասվելու վելու հնարավորությունը:

Ինչպես են մոլախոսերի սերմերն ընկննում հողի մեջ. — Մոլախոսերի սերմերը հողի մեջ ընկնում են մի քանի ձանապարհներով: Հողի աղբասվելու ամենափառանդավոր ճանապարհը՝ ընալության վատ մաքրած սերմերով ցանք կատարած են վերացված են:

Սլիք Միության Ժողովրդական կոմիսարների Սովորությունի 1937 թիվի սեպտեմբերի 13-ի որոշմամբ, սորտային և շարքային սերմերի աղբասության վերաբերյալ Հողգողկոմատի կողմից սահմանված «նորմաները» համարված են վիճակարական և վերացված են:

*.) ՀՍՍՌ-ի համար սահմանված է 25—30 մմ խորությունն օտան. խմբ.

Փողկոմսովետի այդ նույն որոշմամբ սահմանված է, որ ցանքի համար Գոսոռտփոնդի և Զաղոսղեսնոյի պահանջմանը բից բաց թողնվող, ինչպես նաև սովորողների կողմից սեփական պահանջմանը ցանքի համար օգտագործվող սերմացուն պետք է լրիզ մաքրմած լինի մոլախոտերի սերմերից, մրիկի պարունակութիւնը և նույնականութիւնը (սպորինյա) :

Սերմացուի հետ, մոլախոտերի սերմերի այդ ճանապարհով մուտքը հողի մեջ վերացված է: Հողի աղբոտվելու 2-րդ աղբուրը՝ չքայքայված ծղոտային դոմալը մացնելու է: Այդպիսի դոմազը միշտ էլ պարունակում է մոլախոտերի սերմեր: Մոլախոտերի մանր սերմերի հակայական քանակությունն անցնում է կենպանիների աղբեժների միջով, չկորցնելով իր ծլունակությունը: Արդեսդի դոմալը մացնելիս հողը չաղրումիլի, դոմաղը պետք է օգտագործել միայն քայքայված դրությամբ:

Մոլախոտերի սերմերով հողն աղբոտելու երրորդ աղբյուրը՝ ճանապարհամերձ առուների և անմշակ տարածությունների վրա ըսնած ամեն տեսակի թիուներն ու մացառություններն են: Միանկամայն ակնհայտ է, որ նախքան մոլախոտերի սերմերի հասունանալը, բոլոր այդպիսի տեղերը խնամքով պիտք է հնձել ոչնչացնել:

Վերջապես, հողի աղբոտվելու ամենավատնություր աղբյուրը, զա՝ կուլտուրական բույսերի ծածկոցի տակ մոլախոտերի սերմերի թափովնելն է: Բոլոր մոլախոտերի սերմերը դժուղամանահասական բույսերի սերմերից արկելի չուտ են հասունանում: Այդ պատճառով բերքահավաքի ինչ եղանակ էլ որ դորձաղըի, միշտ էլ մոլախոտերի սերմերի մի մասը թափում է դեռ մինչև բերքահավաքը և հակայական քանակությամբ էլ բերքահավաքի ժամանակ:

Սերմացու դաշելու պիտակիլան, որպես պարտագիր կունոն, մուտք է դորձել սովորողներն ու կոլիսողները: Եմանօրինակ պարտագիր կաման պետք է սահմանել յուրաքանչյուր սովորողի ու կոլիսողի համար, ոբսկողի՝ ա) գոմաղը պարսպացման համար օլոտաղործվի միայն քայքայված պիճակում, բ) անմշակ տարածություններում ու առուների նպակին բնոնդ մոլախոտերը հնձվեն նախքան նրանց սերմակալիլը, դ) իր ժամանակին կատարվի խողանի երեսավարը և) այլն:

Մոլախոտերի զարգացման առանձնահատկությունները.—Ի տարբերություն կուլտուրական բույսերի, մոլախոտերին բնորոշ է —

1) անհամաչափ բանելը, 2) սերմերի վազ հասունացումը
և 3) սերմերի շատ դյուրին թափկելը: Առլախոտերի անհամա-
չափ բանելն աղքատվածության գեմ պայքարելու առանձնահա-
տուկ գժվարություն է առաջացնում:

Պրոֆեսոր Նորբեր Նշումը է որ թայլի (Լебеды, Atriplex)
յուրաքանչյուր բույսը տալիս է Յ խմբի սերմեր. մի խմբի
սերմերը խոչոր են (մոտ 4 միլիմետր) և ծլում են հասունանա-
լու տարին, յուսու խմբի սերմերը ավելի մանր են (2—3 մի-
լիմետր), որոնք ծլում են միայն հաջորդ տարվա դրունանը:
Վերջապես Յ-րդ խմբի սերմերն ամենից մանր են (մոտ 1 մի-
լիմետր) և ծլում են միայն Յ-րդ տարվա դրունանը: Այդ յու-
րաքանչյուր խմբի սերմերից աճած բույսերը առաջացնում են
բուրոր Յ խմբերի սերմերը:

Պրոֆեսոր Պ. Ա. Կոստիչկվը Հովկի մալպիս (пастушья сумка
capsella bursa pastoris) մոյամասի ծլեցնելու փորձ կատարեց:
Ծլելու համար ամենաբարեհաջող պայմանների մեջ գրված
400 սերմից առաջին 7 օրիվ ընթացքում առաջացավ 6 ծիլ, 145
օրից հետո ևս 4 ծիլ, 351 օրից հետո ևս 4 ծիլ և այլն: 1173
օրից հետո ծլեց միայն 75 սերմ, մնացած 325-ը մնացին առանց
ծլելու և բոլորովին չէին փչացել:

Արգեսովի նախքան դյուղատնեսական բույսերի բերքահա-
վաքը և բերքահավաքի ժամանակ կանխել մոյամասերից թափ-
ված սերմերի մուտքը հաղի մեջ, պեսար է նրանց ոչնչացնել:
Դրա համար խոզանի երեսավարի օգնությամբ նրանք զրիւմ են
ծլելու համար ամենաբարեհաջող պայմանների մեջ, իսկ հետո
դա ցրտահերկը ոչնչացնում է նրանց:

Խոզանի երեսավարի տեխնիկան ընդգրկում է Յ մոմենտ,
այն է՝ 1) խոզանի երեսավարի ժամանակը, 2) նրա խորու-
թյունը և 3) խոզանի երեսավար կատարելու դորձեքները:

Խոզանի երեսավարի ժամանակը — Խոզանի երեսավարը
կատարվում է բերքահավաքին զուգահեռ, նման ժամկետը հնա-
րավորություն է տալիս այդ աշխատանքը կատարել քաշող ու-
ժի քիչ ծախումով և արագացնելու մոլախոտերի սերմերի
ծլելը:

Հասունացած հացահատիկը հողից ջուր չի պահանջում:
Դրա հետ միասին, նա հողի մակերեսը պահպանում է չորա-
նալուց: Դա նշանակում է, որ հացարույսերի ծածկոցի տակ
հողի մեջ որոշ քանակությամբ ջուր է պահպանվում:

Սակայն, երբ հացահատիկը հնձվում է, խողանի ժակերեսը մնում է քամուց անպաշտպան։ Հողն արագ կերպով զոլորշիացնում է ջրի վերջին պաշարը։ Հողի կապակցվածությունը չափազանց ուժեղանում է։ Հարավային սևահողային մարզերում բերքահավաքից 1—2 օրից հետո հողի կապակցվածությունը այնքան է ուժեղանում, որ խողանի երեսվար կատարելին արդեն անհնարի լինում։

Որպեսպի այդ տեղի չունենա, խողանի երեսավարն անհամաժամ է կատարել բերքահավաքի հետ միաժամանակ։ Դրա համար, կոմբայնի բերքահավաքի ժամանակ ծղումն անմիջապես տեղափոխվում է դաշտից, կամ ձիռւ փոցիներով հայտափում է։ Հացահատիկը հնձող մեքենաներով կամ լորողիկաներով բերքահավաք կատարելիս նույնպես՝ հնձված հացահատիկը անմիջապես խուրճ է կապվում, վերջններու խելուրին եեթ ներ չերտով զիգվում է, և աղատած խողանը վարդվում է։

Խողանի երեսավար կատարած գաշտը գաղարեցնում է հողից անմիջականորեն ջուր զոլորշիացնելը և անձրևաջուրը նրամիջն ներծծվում է 100%-ով։ Հետեարար, ժամանակին կատարած երեսավարի դեպքում, պահպանելով հողի ջուրը, մենք մոլախոտերի սերմերի ծլելու համար լավ պայմաններ ենք ըստ աղջում։

Խողանի երեսավարի խորոքյանը։— Խողանի երեսավարի խորոքյունը որոշնելիս՝ անհրաժեշտ է ելնել մոլախոտերի սերմերի մեծությունից։ Ճնշող մեծամասնությամբ նրանք չափանիր են։ Այդ պատճառով մեծ չափով ծլեցնելու համար նրանց չպետք է խորը ծածկել։ Խողանի երեսավարի սահմանային խորոքյունը 4—5 սանտիմետրից չպետք է անցնի։


Երբ խողանի երեսավարը կատարվում է 7—8 կամ էլ ամփեր վատ։ 10—12 ամ խորոքյամբ, նա մոլախոտերի դեմ պայքարի գործում ոչ մի նշանակություն չի ունենում։ 7—10—12 ամ խորոքյամբ «խողանի երեսավարը» մոլախոտերի դեմ պայքարելու փոխարեն, ավելացնում է հողի աղբոտիքածությունը նրանով, որ նման խորոքյամբ ծածկվելու դեպքում մոլախոտերի սերմերը ծլելով հանդերձ, հողում էլ ավելի են կուտակվում և աղբոտում նրան։ Նման «խողանավարի» վրա անսեղի վառելանյութ է ծախսվում։

Խողանի երեսավարի գործիքները։— Խողանի երեսավարի ամենալավ զործիքը, այսպես կոչված, ցորենի հատուկ դութանն է

(Նկ. 20): Դա լայն առ ունեցող դիսկավոր գործիք է և գործադրվում է միայն խողանի երեսավար կատարելու համար: Նա չի կարող կիրառվել ոչ ցեղադաշտում և ոչ էլ ճմուտներում: Ժողովրդի թշնամիները փորձում են այդ գործիքն օպտավորել սովորված հմտական վարի համար:

Գործնականում ստացվում էր սաղր վար, իր բոլոր բացական հետեւանքներով, որ անդքաղառնում էր հողի բերելու թյան և, վերջին հաշվով, բերքի վրա:

Խողանի երեսավարի համար բոլորովին անպետք են՝ փոցիւերը, թեւավոր դութաններն ու բազմախոփաննիները (լուչչիւնիները), ինչպես նաև թաթավոր կուլտիվատորները: Այստեղ, որտեղ գետես ցորենի դիսկավոր դութաններ չկան, ծայրահեղ դեպքում նրանք կարող են փոխարինվել միայն դիսկավոր փոցիւերով (սանդալներով): Երեսավար կատարած խողանը երբեք չի փոցիւվում:



Նկար 20. Բացառապնո խողանի երեսավարի համար գործադրվող պորենի տրակտորային դութան: —Ա—տեսքը վերեից, Բ—տեսքը կողեից:

Մոլախտերի դեմ պայքարելուց բացի, խոզանի երեսա-
վարը հողի հիմնական մշակման սխոտեմի ագրոտեխնիկական
մի շարք կարեռը խնդիրներ է կատարում:

Խոզանի երեսավարը միաժամանակ ուղղված է մնասատու-
միջատների դեմ պայքարելուն: Վնասատումներով վարակված
խոզանը վարելիս, ոչնչացվում են խոզանի մեջ ձմեռող վնա-
սատումների հարանյակները, ինչպես նաև վարելահողի վերին շեր-
տում՝ ձմեռող վնասատումների թթվուռներն ու հարսնյակները:

Խոզանի երեսավարը պակասեցնում է ծղոտի մնացորդնե-
րը հողի մեջ մտնելուց առաջացող վնասը: Ինչպես հայտնի է,
ծղոտը համարյա ազոս չի պարունակում: Հողի մեջ վարելով,
նա առաջացնում է հողի ազոտական թթվի աղերի (նիտրատ-
ների), իսկ նրանց պակաս լինելու գեղքում՝ հումուսի քայ-
քայում:

Այլ պատճառով խոզանի երեսավարի միջոցով հնձի մնա-
ցորդների սաղը ծածկելը՝ կանխում է հողի ստորին շերտի
կնձկային ստրուկտուրայի քայքայումը և պահպանում է բույ-
սերի ազոտային սնունդը:

Վերջապես խոզանի երեսավարը բարձրացնում է հողի խո-
նավությունը: Դրանով իսկ նա նախապատրաստում է դաշտը
ցրտահերկի համար: Խոզանի երեսավար կատարած դաշտում
համարյա դաշտարում է ջրի գույքի ամրող ջուրը: Եթե
և լրիվ ներծծում է տեղացող ահճրկի ամրող ջուրը: Եթե
քահամաքից հետո չորացած հողը ցրտահերկ կատարելու ժա-
մանակ հասած է լինում վարելու հասունության, արմենքն ու-
նենում է ամենաթույլ կապակցվածությունը, եթե նույնիսկ
անճրեներ չկան, որովհետեւ խոզանի երեսավար կատարած
հողի խոնավությունը բարձրանում է ի հաշիվ ենթահողի
խորը շերտերից բարձրացող ջրի հոսանքի:

Հողի խոնավության բարձրացումը՝ մինչև նրա մազական
խոնավության*) 60%-ը, ցրտահերկի ժամանակ պակասեցնում
է հողի կապակցվածությունը, դրանով իսկ կրծատելով վա-
րի ծախքերը:

Ակադեմիկ վ. Ռ. Վիլամսը նշում է, որ ժամանակին կա-
տարած խոզանի երեսավարի գեղքում, ցրտահերկի կատար-

*) Մազական խոնավությունը, դա հողի մազական տարածություն-
ներում ջուր պահելու ընդունակությունն է:

ման համար պահանջվող վասելանյութի, ինչու և քաշող ուժի ծախսը ինում է 50—65 %—ով։ Խոզանի երեսավարի հետ միայն այդ մեկ առավելությունը ցույց է տալիս նրա պատագական բացառիկ նշանակությունը։

Այսպիսով, խոզանի երեսավարը անխղելիորեն կապված է ցրտահերկի հետ։

Դեռ ամենին, առանց խոզանի երեսավարի, չկա և չի կարող մնել ձիւս, զիտականորեն հիմնավորված պայքարը բարձր բերքի համար, սոցիալիստական աշխատանքի բարձր արտադրութականության համար։

Բոլոր առվիճակներն ու կոլխոզները պարտավոր են կիրառել ազգային այլի կանաչը։

Յրտահերկիլը, զա՞յ խոզանի հիմնական, ցրտահերկային մշտկման սխտեցի շրջու անփուլի եղանակն է։ Յրտահերկի զդիավոր խնդիրն այն է, որ նա հողի մակերեսի վրա անձրիխ և ձյան ամբողջ ջուրը կլանելու ընդունակ, վուրփ, կնձկային ստրուկտուրա ստեղծի, որովհետեւ կուլտուրական ըույսերին միայն կնձկային հողը կարող կինքի ամենամեծ քանակությամբ, անընդհատ և միաժամանակ ապահովել ջրով ու սննդով։

Յրտահերկի գործիքները.— Յրտահերկի գլխավոր խնդիրը լրիմ լուծվում է միայն նախալութանիկով զութան կիրառելու գեղագում։ Հասարակ զութանով, այսինքն՝ առանց նախալութիկ զութանով կատարած ցրտահերկը կոշտու է լինում և պահանջում է վոցիսել։ Հետեւարար, անխուսափելութենք կապված է հողի կնձկային ստրուկտուրայի քայլքայման հետ։

Յրտահերկի խորությունը պետք է լինի 20 մմ.*) ոչ պակաս։ Նման խորությունն անհրաժեշտ է հացահատկային կուլտուրաների համար։ Տեխնիկական կուլտուրաների, արժանապահութների և պարագաների համար վարը 25 մմ-ից սաղը չպետք է լինի։ Եթե զեղքը ուղարկությունը էլ նախախոփելը դրվում է 10 մմ խորության վրա։

Այն դեպքերում, եթե հումուսի շերտը փոքր է և թույլ չի տալիս 20—25 մմ խորության վրա վարել, ապա պարբերաբար այն պետք է հացավոր վերը նշված խորությանը։ Վարելահերտի խորացմանը միտամանակ զուղակցվում է հողի մեջ հումուսի կուտակումը։ Դրա համար կատարվում է բաղմանյա խոստա-

*) ՀՍՍՌ-ի համար սահմանված է 25—30-ից ոչ պակաս։ Ծանոթ. խմբ.


բույսերի խառնուրդի և նիթացանք և անդայման պարարտացվում՝
է զոմազրավ ու հանքային պարարտանյութերով:

Ծածկող կուլտուրայի համար ցրտահերկը կատարվում է
հումուսի չերակ ամբողջ խորությամբ, առանց նախադութանի-
կավոր զութանների, միաժամանակ օգտագործելով խորտվա-
րուկը (ոչօւղղակի): Խորավարուկը զրվում է զութանի
յուրաքանչյուր կորուսուց հետո, վերջնին ստորին ծայրից Յ
սանտիմետր ցածր:

Ճմա-պողպուային հողերում խորագաշտի օգտագործման
առաջն ապահով խորագաշտը կրացվում է:

Խորագաշտի օգտագործման աեռղությունը 2—3 տարի է:

Եթե չափ մեծ քանակությամբ օրդանական նյութեր պարու-
նակող հողերի (մարդագետնային, տորֆային, սեահողային)
վարելաչերաց 20 մմ-ից ավելի խորացնել է պահանջում, այդ-
գեղքերում ցրտահերկը կատարվում է նախադութանիկավոր



Նկ. 21. Տրակտորային 3 խոփանի զութան՝ նախադութանիկով և յուրա-
քանչյուր ակոսում հողը խորացնող խորավարուկով:

Դութանով՝ 20 մմ խորությամբ, միաժամանակ օգտագործելով
խորավարուկը:

Խորավարուկի թաթերն այս դետքում նույնական դրվում են
զութանի դիմավոր կորպուսից 5 մմ խորը (Նկ. 21): Հետազա-
յում գաշտը թողնիում է որպես սև ցել:

Ցրտահերկի կատարման ժամանակը — ժամանակին և ճիշտ
կատարեած խոզանի երեսիարը ադրում է ցրտահերկ կատարելու
ժամկետը սահմանելու վրա: Խոզանի երեսավարի հսկայական
առավելությունն այն է, որ ցրտահերկը հնարավոր է կատարել
ամբողջ աշնան ընթացքում, բացառությամբ այն դեպքից, եթե
դաշտը վարակված է կոճղարմատային մոլախոտերով (սեղ,
արվանդակ և այլն):

Այն փաստը, որ ուշ կատարած ցրտահերկը միշտ իջեց-
նում է հաջորդ տարվա ընթացք, վերաբերում է այն գեղքին
միայն, եթե ցրտահերկը կատարվել է առանց նախօրոք խողանի
երեսավար կատարելու: Բնըքի այդ իջեցման պատճառը միան-
դամայն պարզ է: նախօրոք խողանի երեսավար չանելու գեղ-
քում գաշտը չորանում է, հասարակ գութանով կատարած վարը
կոչուի է առաջացնում, որոնց քայլայումը պահանջում է փոց-
խում, այսինքն՝ հողի փոշիացում, իսկ փոշիացած հողերի ընթ-
քը միշտ էլ ավելի ցած է, քան սարուկասուրային հողինը:

Միանդամայն ակնհայտ է, որ ցրտահերկ կատարելու ժամ-
կեան երկարացնելու հարավորությունը, առաջնորդ բերքն իջեց-
նելու, կազմակերպական-տնտեսական խոշոր նշանակություն
ունի:

Դա թույլ է տալիս աշնանային աշխատանքների ընթացքում
կարգավորելու տրակտորային պարկի ու քաշող ուժի լարվա-
ծությունը:

Եթե գաշտը կոճղարմատային մոլախոտերով վարժակված
չէ, ցրտահերկը կատարվում է խողանի երեսավարից հետո՝
հողամասերը մոլախոտերով ծածկվելուն զուգընթաց: Պարզ է,
որ այդ ժամանակ չպետք է թույլ տալ, որ մոլախոտերը զար-
դանան ու սերմակալեն: Ցրտահերկն ամբողջովին ոչնչացնում է
մոլախոտերի ծիլերը:

Դաշտերն ինչպես մաքրել կոնդարմատային մոլախոտերով
րից — կոճղարմատային մոլախոտերի գեմ փոցխով պայքարե-
լու այսպիս կոչված՝ սանրելու լայն տարածված եղանակը
պետք է համարվի ոչ ճիշտ: Սանրելով կոճղարմատները, յու-
րաքանչյուր փոցխումից հետո, փոցխը հողի մեջ կոճղարմատ-
ների կտորներ է թողնում: Այդ կտորները մանր են և չեն
սանրվում: Կոճղարմատի յուրաքանչյուր նման կտոր ընդունակ
է ինքնուրույն ցողուն ու արմատ տալու:

Կոճղարմատները փոցխով, սանրելուց հետո հողի մեջ
նրանց մանր կտորներն ավելի են շատանում, քան մինչև փոց-
խումը: Գանդիւլով հողի փիփեցված շերտում, կոճղարմատների
կտորները փոցխելուց հետո արագ կերպով աճում և գաշտը
ծածկում են կոճղարմատային մոլախոտերի երթասարդ ծի-
լերով: Հետևապես, չայիրից և այլ կոճղարմատային մոլա-
խոտերից հողի մաքրումն իր նպատակին չի հասնում: Սանրե-

յու եղանակի անկատարությունը հիմնված է կոճղարմատային բույսերի զարգացման առանձնահատկությունների ոչ ճիշտ օդապարձման վրա:

Զայլիրի և այլ կոճղարմատային մոլախոտերի դեմ պայքարի դիտականուրեն միակ ճիշտ եղանակը, դա՝ հողի ցրտաշերկային մշակման սիստեմի կիրառումն է:

չարեղենով, հատկապես թարմ բանջարեղենով մատակարարելու
անհրաժեշտությունից։ Բանջարեղենի պրոդուկցիան բնակչու-
թյան աննպի մեջ պարենային խոչըն նշանակություն ունի։
Թարմ բանջարեղենը վիտամին պարունակող խիստ կարեր
մթերք է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր մարդու սննդի
համար։

Վերջապես, հինգերորդ առաջադրանքը հետապնդում է
ամբողջ բնակչությանը նույնական սննդի համար անհրաժեշտ
թարմ կաթ և վերամշակված կաթնամթերքներ մատակարարելու
խնդիրը։

Գյուղատնտեսական արտադրությանը ներկայացրած առա-
ջադրանքների այլպիսի լայն թափը սոցիալատական պետու-
թյան ընդհանուր բարեկեցության բարձրացման համար՝
հարաբեր է միայն տնտեսության պահանային սխտեմի ժամա-
նակ, մի հասարակակարգի, որն ընդմիշտ տապալել է կապիտա-
լիզմը։

Պետական պահանային առաջադրանքն օրենքի ուժ ունի։ Նրա

Ճիշտ կատարման համար յուրաքանչյուր սովորում և կուխա-
զում պետք է լինի գիտական - տեխնիկական տեսակետից ճիշտ
ցանքաշրջանառություն :

Գյուղատնտեսական դիտության այժմյան վիճակում հայտ-
նի է հողի բերրիության պայմանների վերականգնման միայն
մեկ սիստեմ - դա երկրագործության խոտակաշտային սիստեմն
է : Այդ պատճառով ճիշտ ցանքաշրջանառության գիտական-
տեխնիկական հիմնավորման հիմքում պետք է դրվի երկրագոր-
ծության խոտակաշտային սիստեմը :

ԽՈՏԱԿԱՇՏԱՅԻՆ ՑԱՆՔԱՇՏՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ԲՈՒԽԵՐԻ ԵՐԵՎԱՆ ԽՈՏԱՎԲԸ

Մովիսողների ու կուխողների խոտագաշտային ճիշտ ցանքա-
շրջանառությունը պետք է ընդգրկի գյուղատնտեսական բույսե-
րի երեք խումբ : Առաջին խումբը - դա առաջատար կուլտու-
րաներն են՝ հացահատիկային, տեխնիկական, յուղատու, բան-
չարանոցային և այլ կուլտուրաները : Ցանքաշրջանառության
մեջ զբանց պետք է հատկացվի լավագույն տեղը :

Ճիշտ ցանքաշրջանառության բույսերի 2-րդ խումբը կազ-
մում են օժանդակ նշանակում ունեցող միամյա բույսերը - ներ-
տնտեսային պահանջների բավարարման և կոյմնտեսային ա-
ռակարի համար : Ճիշտ ցանքաշրջանառության բույսերի երրորդ
խումբը - դա բազմամյա խոտաբույսերն են, որոնք աղբբուժե-
նիկայի առանձին անհրաժեշտ են հողի կայուն կնձկային
ստրուկտուրան վերականգնելու համար :

Միամյա բույսերի կուլտուրայի պարտադիր փոխումը
բաղմամյա խոտաբույսերի ամեն կամ պակաս երկարաժամկե-
տուրայի, ճիշտ ցանքաշրջանառության գիտական հիմքու է
կազմում :

Այն գեղքում, երբ դաշտերի հողը գեռ աղբոտված է
մոլախոտերի սերմերով, խոտագաշտային ճիշտ ցանքաշրջանա-
ռության կազմի մեջ պարտագիր օգակ է հաղիսանում սե-
ցելը :

ԳՅՈՒՂԱՑՆԵՑԵՍԱԿԱՆ ՄԻՒՄԱՅՈՒՆ ԲՈՒԽԵՐԻ ԵՐԵՎԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԽՈՏԱՎԲԸ

Գյուղատնտեսական միամյա բուլոր բույսերը ջրի ու ոնքն-
դի նկատմամբ իրենց վերաբերմունքով և հողային վնասատու-

ներից իրեաց պաշտպանելու պահանջներով կարելի է բաժանել երկու խոչոր խմբեր։ Առաջին խմբին են դասվում այն կուլտուրաները, որոնք ջրի պաշտը և յուրացվող սննդի նկատմամբ առանձնապես մեծ պահանջներ չունեն և զինավորապես վնասվում են օդի վնասառուներից ։ Պրանք հետեւալներն են՝ 1) բոլոր հացազգի հատիկավորները, բացառությամբ այսպես կոչված ճմաշերտայիններից, 2) տեխնիկականները՝ շաքարի ճականդեղը, գործարանային կարոսոֆելը և գարեջրի արտադրության մեջ գործադրվող գարին, 3) ընդեղենները։

Գյուղատնտեսական բույսերի 2-րդ խմբին են պատկանում ջրի պաշտը ու յուրացվող սննդի մեծ պահանջ ունեցող և հողի վնասառուներից հատուկ պաշտպանության կարիք զգացող կուլտուրաները։ Դա առավելապես բանջարանոցային, յուղատու, թելատու, կուլտուրաներն են, ճմաշերտի վրա ցանվող հատիկավորները (կարծր ցորենը, կորեկը), կերի արմատապտուկներն են։

Միանդամայն ակնհայտ է, որ գյուղատնտեսական միամյա բոլոր բազմազան բույսերը հողի բերրիության պայմանների նկատմամբ իրենց տարբեր պահանջներով, չեղարելի մեկ ցանքաշընանառության մեջ տեղադրել։

Բազմամյա խոտարբույսերի մշակման ակտությունը նույնական միանույնը լինել չի կարող։ Առաջին խմբի բույսերի համար նրանց աճման ընդմիջումը պետք է ամենակարճը լինի։ Տվյալ գեղքում բարգամյա խոտարբույսերն առաջին հերթին աղբատեխնիկական նշանակություն ունեն։ Նրանք անհրաժեշտ են հողի բերրիության պայմանները վերականգնելու համար։ Ինչ վերաբերում է նրանց կերային նշանակությանը, ապա այս դեպքում միայն օժանդակ է։

Ընդհակառակը, երկրորդ խմբի բույսերի համար՝ բաղմամյա բույսերի տեսառությունը պետք է բավական երկար լինի։

Միամյա բույսերի երկու խմբերի այլ առանձնահատկությունների համապատասխան, ակաղեմիկ վարչությամբ ըստեղծել է ճիշտ խոտարբաշտային երկու ցանքաշընանառություն՝ պաշտային և կերային։

ԵՐԻՒՑԻԱՌԹՈՒԹՅՈՒՆ ԽՈՇԱԴԱՎՃԵԿԻՆ ՍԻՇՏԵՄԻ
ԴԱՇՏԱՅԻՆ ՑԱՇԽԱՇԽԱՌՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԻ

Դաշտային ցանքաշրջանառության մեջ մտնում են դյու-
քատնտեսական միամյա բույսերի առաջին խմբի կուլտուրանե-
րը: Կերպային ցանքաշրջանառության մեջ մտնում են դյու-
դատնտեսական միամյա բույսերի երկրորդ խմբի կուլտուրա-
ները:

Դաշտային ցանքաշրջանառությունը լուծում է հացահատիկ-
ների և տեխնիկական բույսերի կես մասի խնդիրը: Կերպային
ցանքաշրջանառությունը լուծում է կանաչ կերպի տարածության
և տեխնիկական բույսերի 2-րդ կեսի, ինչպես նաև ճշագերտի
վրա ցանվող հատիկայինների ու բանջարանոցային կուլտուրա-
ների հարցերը: Բազմամյա խոտարույսերի օգտագործման տեսո-
ղությունը, դաշտային ցանքաշրջանառության մեջ, նպատակա-
հարժար է սահմանափակել երկու տարով: Հետազայտվ, հո-
գերն ավելի կուլտուրական դասնալուն զուգընթաց, այդ տեսո-
ղությունը կարելի է կրնատել, հացնելով մինչեւ մեկ տարու,
խոտերի ենթացանք կատարելու պայմանով:

Կերպի ցանքաշրջանառություններում խոտերի օգտագործման
տեսողությունը՝ պետք է հասնի 4—5 տարվա: Բացի կերպի նշա-
նակությունից, խոտերն այստեղ ունեն նաև ագրոսեփնիկական
նշանակություն՝ յուղատու, թելատու և բանջարանոցային կուլ-
տուրաների՝ բարձր բերք ապահովելու տեսակետից:

Համաձայն բազմամյա խոտարույսերի օգտագործման տեսո-
ղության, նրանց կազմը՝ դաշտային և կերպի ցանքաշրջանառու-
թյուններում պետք է տարբեր լինի:

Դաշտային ցանքաշրջանառության խոտերի խառնորդի
կազմը: — ՍՍԻՄ-ի՝ պայմանների բազմազնությունը որոշում է
երկրագործության խոտադաշտույթին սիստեմի դաշտային ցան-
քաշրջանառության համար բազմամյա խոտարույսերի առնը-
վագն և խմբի առանձնացման անհրաժեշտություն:

Հյուսիսային մարզերում դաշտային ցանքաշրջանառության
համար բազմամյա խոտարույսերի ամենալավ խառնությը՝ հա-
մարվում է տիմոֆեևկան՝ կարմիր երեքնուկի հետ: Կարմիր
երեքնուկի ամենալավ սորտերն այստեղ համարվում են Օռլովի
և Գերմի երեքնուկները: Տիմոֆեևկաներից ամենալավ սորտերն
են Վոլոգդայի սորտերը: Ամերիկան տիմոֆեևկաները և ե-

բեքնուկները բոլորովին անպետք են կայուն կնձկային ստրուկտուրան վերականգնելու տեսակետից, այդ պատճառով դաշտային ցանքաշրջանառություններում նրանց չպետք է ցանել: Երկհաւնած ամերիկյան կարմիր երեքնուկը ձեռնուու, է օդուագարծել կեր ստանալու համար: Ամենից լավ է ցանել զբաղված ցեղում: Այդ երեքնուկը բացառիկ բերքատու է:

Գարնանը, ցեղ մեջ ցանելիս, մեկ ու կես ամսից հետո նա լիստան հունձ է տալիս: Բերքահավաքից մեկ ամսիս հետո նա տալիս է երկրորդ, ավելի առատ հունձը: Երկրորդ հեծից հետո «մամոնտ» երեքնուկը բոլորովին մեռնում է:

Տնտեսական նշանակության տևսակետից, նա գերազանցում է լայն տարածված վեհագալակի ցանքերին: Նա արագ երպով չորանում է, որովհետեւ ցողունները դատարկ են (սնամեջ):

ՍՍՌՄ-ի եվրոպական մասի հարավային և հարավ-արևելյան մարզերի համար որպես դաշտային ցանքաշրջանառության խառը խոտացանք, պետք է կիրառել՝ հացազգիներից—լայնահանկ ժիշտյակը, իսկ թիթեռնածաղկավորներից՝ դեղին կամ միջին առվույտը:

Սերիբի հարավային մարզերի պայմաններում կարող են օդուագործվել ամերիկյան սեղը և միջին կամ դեղին առվույտը:

ՍՍՌՄ-ի միջին ասիսկան մասի ոռոգվող պայմանների համար, որպես խառը խոտացանք, անհրաժեշտ է հանձնարարել՝ հացազգիներից—թրանսիլիական ոայգրասը և թիթեռնածաղկավորներից՝ միջին առվույտը: Չոսովվող երկրագործության միջնորպես խառը խոտացանք, կարող են ծառայել նույն խոռարույցներն, ինչ որ ՍՍՌՄ-ի եվրոպական մասի հարավային մարզերի համար:

Աղիացած հողերը կուլտուրականացնելու համար, խառը խոտացանքի մեջ օդուակար է մացնել ջրային սեղը (բեկմանյա) և ելականման երեքնուկը (պուտոյակողնիկը):

Բույսերի հաջորդականությունը դաշտային ցանքաշրջանառության մեջ.— Դաշտային ցանքաշրջանառության մեջ բադմամյա խոտարույսերին հաջորդում են զյուլատնտեսական միամյա կուլտուրաները: Յուրաքանչյուր կոնկրետ տնտեսության կուլտուրաների կարմը որոշվում է պետական պլանային տուածարքանքով, այսինքն՝ տնտեսության մասնագիտացմամբ:

Միանգամմայն ակնհայտ է, որ դաշտային ցանքաշրջանառու-

թյան մեջ այդ կուլտուրաների կաղմը կարող է տարբեր լինել։ Պարզ է նույնպես, որ բազմամյա խոսաբույսերից հետո միայնակ կուլտուրաները չի կարելի պատահական կարգով տեղադրել։ Բարձր և կայտն, բերք ստանալու խնդրում ցանքաշնանառության մեջ կուլտուրաների ճիշտ հաջորդականություն սահմանելը առաջնակարգ տեղ է դրավում։

Խոսակաշը, որով սկսվում է յուրաքանչյուր խոտագաշտացային ցանքաշնանառություն, միշտ աչքի է ընկնում ազոտի մեծ կուտակմամբ։

Այդ հանգամանքը պետք է հաշվի առնել խոտագաշտից հետո ցանքող առաջնին կուլտուրան որոշելիս։

Կոսկոտ սխալ կլիներ խոտագաշտից անմիջապես հետո ընդուղեններ ցանելը։ Նրանք չեն կարող օգտագործել խոտագաշտից հետո եղած ազոտի ավելցուկը, քանի որ իրենք ես հողի մեջ աղոտ են կուտակում, որի հետեւանքով հողի մեջ եղած աղոտի ավելցուկը ճնշում է նրանց գարզացումը, ուստի միաժյառ բոլոր ընդուղենները պետք է ցանքեն 2-րդ, 3-րդ տարվանից ոչ շուտ։ Խոտագաշտի աղոտի ավելցուկը գաշտային ցանքաշնանառության տեխնիկական բոլոր կուլտուրաների վրա նույնաղեց բացասական ազդեցություն է ունենում։ Խոտաբույրից անմիջապես հետո շաքարի ճակնդեղ եղաղավորելիս, ճողում եղած աղոտի ավելցուկի հետեւանքով, ինչում է շաքարի ելունքը, շաքարի նկատելի քանակությունն անջատվում է օշարակի (պառօքա) հետ։

Բացի դրանից, հողում եղած աղոտի ավելցուկը դանդաղեցնում է շաքարի ճակնդեղի զարգացումը։ Այդ պատճառով հաճախ սոխափած են իրնում ճակնդեղը հավաքել, մինչ նրա տեխնիկական հասունացումը։ Այդ հանգամանքը նույնպես անդրադասնում է շաքարի ելունքի պակասեցման վրա։ Մյուս կողմից այդ վիճակում հավաքած ճակնդեղը պահելու համար դիմացկուն չէ։

Հետեւապես, դորժարանային շաքարի ճակնդեղը չպետք է տեղավորվի բազմամյա խոտաբույրից աղատված դաշտի ճմաշերուի վրա։ Այն կոլխոզներն ու սովորզները, որոնք լողացում են ճակնդեղի սերմերի արտադրությամբ, բազմամյա խոտաբույրից հետո կարող են ճակնդեղ տնկել՝ սերմի համար։

Խոտաբույրից անմիջապես հետո նույնպես չպետք է տե-

զավորել սպիրտի և օսլայի համար մշակվող գործարանային կարութեալ: Հողում ազուրի ավելցուկ լինելու հետեւանքով կարտոֆելի բջիջներում զոյանում են օսլայի շատ մանր հատիկներ, որոնք ջրի մեջ չափազանց դանդաղ են նստում: Դրա հետեւանքով գործարանային պայմաններում օսլան քամելիս, նրա 40% լվացող ջրի հետ կարող է կորուստի ենթարկվել:

Օսլայի արդիստի կորուստն, ի հարկե, անթույլատրելի է:

Մեծ քանակությամբ ազուրային նյութեր սպարունակող պարաներից սպիրտ սուանալիս, վերջինս միշտ կեղտուալում է սիլուիսային յուղերով:

Սպիրտը մաքրում են մի քանի անդամ, որովհետեւ թիւ անդի, թե՛ կառէչուկի արդյունաբերության և թե բժշկության համար պահանջվում է մաքրուր, առանց սիլուիսային յուղերի խառնուրդի սպիրտ:

Պարզ է, որ այդ աշխատանքի վրա կատարվող լրացուցիչ ծախսերն իջնում են աշխատանքի արտադրողականությունը: Այդ պատճենով դործարանային կարտոֆելը ցանքարշանաւության մեջ անհրաժեշտ է մշակել ոչ թե խոտերից անմիջապես հետո, այլ նրանցից մեկ, երկու տարի հետո:

Դաշտային խոտագաշտային ցանքարշանառության մեջ մշակվող տեխնիկական բույսերի 3-րդ խումբը կազմում է գործիքի գարին (Երկշարքանի), որը բացառապես օգտագործվում է գարեջուր պատրաստելու համար: Եթե գարու մեջ մեծ քանակությամբ ազուր պարունակող նյութեր են լինում, դարեջուրը նիխած հատ է սուանում:

Գարեջրի գարին որքան քիչ քանակությամբ սպիստակուց և չափանիւ օսլայի պարունակում, այնքան ավելի բարձր է դնահատվում: Գարեջրի լավ գարին ապակենման հատիկներ չպետք է պարունակի: Այդ վայլը գարու մեջ մեծ քանակությամբ սպիստակուցի գարին հատ է:

Հետեւարար, գարեջրի գարին նույնական չպետք է տեղադրել բազմամյա խոտաբույսերից անմիջապես հետո: Գյուղատնտեսական բույսերի միակ խումբը, որը կարող է առանց արտադրական վնասի անմիջապես հաջորդել խոտաղաշտին, դա գարնանացան հացահատիկներն են: Սակայն դաշտային ցանքարշանաւության մեջ ոչ բոլոր հացահատիկները կարող են խոտագաշտին հաջորդել:

Խոտաղաշտին անմիջապես հաջորդող հացահատիկներից

ոլեաք է անջատել, այսպես կոչված, ճմաշերտի վրա ցանվող հացահատիկները:

Դրանց թվին են պատկանում գարնանացան կարծը ցորենակը և օրենբուրգյան կորեկը: Ճմաշերտային հացահատիկները տարբերվում են հետեւյալ առանձնահատոկություններով: Երանիք պահանջում են օրգանական մնացորդների մեծ պաշտը առկայություն:

Այդ պահանջն առաջանում է նրանց սննդառության առանձնահատկություններից: Կարծը ցորենի և օրենբուրգյան կորեկի արժատաների վրա ապրում են միկրոսկոպիկ սունկեր, որոնք քայլայում են մեռած օրգանական նյութը: Այդ ժամանակ զոյցաղղ հանքային աղերն օգտագործում են այն բույսերը, որոնց արժատաների վրա ապրում են նշված սունկերը:

Ճմաշերտային հացարույյունը գարնանացան այլ հացարույյունը միշտ ուշ են թփակալում, քանի որ թփակալման ժամանակաշրջանում նրանց արժատաների վրա զարգանում են նշված միկրոսկոպիկ սունկերը: Այդ պատճառով ճմաշերտային հացարույյունը պահանջում են մոլախոտերից միանկամայն մաքուր հող:

Դաշտային ցանքաշրջանառության մի տարիվա և նույնիսկ երկու տարվա խոտալաշտը չի կարող բավարարել ճմաշերտային հացարույյունը այդ պահանջը:

Այդ պատճառով նրանց ամենալավ տեղը պետք է համարել երկու տարուց էլ ավելի օգտագործված բազմացյալ խոտարույյունը:

Պրակտիկայում մինչև այժմ, խոտաղաշտից հետո մեծ ժամանակ ցանում են աշնանացան: Աշնանացան հացահատիկի մշակման այլ եղանակը պետք է համարել կոպիտ սխալ:

Յեւ ունեցող ցանքաշրջանառություններում աշնանացանը պետք է մշակվի ցեղաղաշտում: Դա նրա ամենալավ տեղն է:

Իր ժամանակին Արևմայան Եվրոպայում երկրագործության խոտաղաշտային սիստեմին անցնելուց հետո, աշնանացանը ուկանցին մշակել բարձամյա խոտարույյունը հետո: ցանքաշրջանառության մեջ այդ դաշտը համարվում էր ամենալավ տեղը:

Շատ աշխատողներ, առանց բավականաչափ քննադատության, այդ եղանակը շարունակում են զերաբնահատել և այժմ: Ակագեմիկ վ. Ռ. Վելյամսը դրում է, «Աշնանացանի

համար աղբոտելինիկական տեսակետից ավելի վատ տեղ չկար քան այն դաշտը, որն անմիջապես հաջորդում է խոտագաշտին և խոտագաշտն իր աղբոտելինիկական հոկայտկան նշանակությունից համարյա բոլորովին զբկելու ավելի լավ միջոց չեն, քան այն, որ խոտագաշտից անմիջապես հետո աշնանացան հաշահատիկներ ցանվեն»:

Իսկապես, Հողն աշնանացանին նախապատրաստելու համար խոտագաշտը վարում են ամռան կեսին, խոտերի առաջին հնձը համարյա անմիջապես հետո: Այդ ժամանակ խոտագաշտի հոգում դրանքում է մինխմումում խոնավություն, հետեւքարչափոխումում ողը:

Այդ պատճառով խոտագաշտը վարելուց հետո, օդի թթվածնի ներկայությամբ անմիջապես սկիզբ է առնում և ուժեղ կերպով ընթանում է բակառերիների կողմից նրա բուսական մնացորդների քայլայում: Քայլայման ժամանակ ջուր է դոյանում, որը և պահպանում է բուսական մնացորդները միներալիզացիայի ենթարկող բակառերիների կենսագործունեությունը:

Այդ պատճառով խոտագաշտի ամռան վարի դեպքում՝ արդեն 20 օրից հետո, խոտի արմատների և ընձյուղների բոլոր մնացորդները քայլայլում են մինչև հանքային աղերի աստիճան: Այդ քայլայումը ընթացքում է նաև հողի հումուսը:

Այսպիսով, հողում օրգանական նյութ կուտակելու և կայուն կնձկային ստրոկատուրա ստեղծելու փոխարեն, խոտագաշտի աղբոտելինիկական նշանակությունն ամռան վարով ամբողջովին ոչնչացվում է:

Խոտագաշտի ամռան վարի անուղղելի վնասը միանդամայն պարզ է: Սակայն այդ վնասով գործը չի սահմանափակվում: Խոտագաշտը ամռաը վարելուց հետո, հողում ստեղծվում է հեշտ յուրացվող աղոտային սննդի միակողմանի ավելցուկ: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ առաջին հերթին հատկապես ուժեղ կերպով քայլայլում են մեծ քանակությամբ աղոտ պարունակող թիթեռնածաղկավորների բուսական մնացորդները:

Նման պայմաններում ցանլած աշնանացանը՝ աշնանից շատ լին ծիլեր է տալիս: Առաջ կանաչ մասսան ծյան հաստ ծածկոց է պահում իր վրա: Աշնանացանը նրա տակ շատ վատ է ձմեռում, նա հաճախակի փոռում է: Բացի գրանից ցողունների

Հոգի Երեսի առաջին միջանգուցային տարածությունը դարձանում է ուժեղ սովերի պայմաններում:

Այդ պայմաններում միջանգուցային տարածությունների բջջային պատերը բարակ մնալով, ուժեղ կերպով աճում են ըստ Երկարության: Այդպիսի հացարույն անպայման պատկում է, ոչ միայն քամու և անձրեսի ազգեցությունից, այլ հասունացող ցողունների սեփական ծանրությունից:

Հացարույները պառկում են այն պատճառով, որ սովերում դարձացած վերերկրյա առաջին միջանգուցային տարածության բջիջների բարակացած պատերը շատ հեշտությամբ ճճվում են: Պանկած հացարույները չեն բարձրանաւմ, բացի վերին հասկերից: Նման պայմաններում հացարույներն ուժեղ կերպով վարձվում են եղբասնկով, ժանդով, ալբացովով և ճյուղաբուժում: Ստացվում է հացահատիկի շատ ցածր սրակի բնորք: Բացի զրանից, պառկած հացարույների բնբահամաքն էլ է հարկե, դժվար է կատարվում և կարված է բերքի կորուսների հետ: Բոլոր այդ վնասակար հետեանքները հեշտությամբ կարելի է կանխել, եթե աշնանացան հացահատիկը չշակիլից իստաղաշտից հետո:

Պակտիկայում փորձ կատարվեց խոտագաշտն օգտագործել մեկ տարի ցեղ թողնելուց հետո: Նման ցեղի վրա ցանկած աշնանացանն այլ պայմաններում չէր պառկում: Այդ բացարբագում է նրանով, որ ազոտական ազերի ավելցուկը, տվյալ գեղքում, հողից լվացված է մնում:

Հասկանալի է, որ բազմամյա խոտաբույների կուլտուրայի միջոցով հողում կուտակված ազոտի այլպիսի հախտակման եղանակն անկասկած վնասակար է: Բավական է ասել, որ խոտը խոտացանության միջան մեկ տարին, քան հոգում կուտակված ազոտի ֆանակության, հալասար է գրմադրի լրիվ պալարտացման (ընդգծ. խմբ.):

Եղբակացությունը պարզ է՝ խոտագաշտի վարը ողեաք է կատարվի միայն ուշ աշնանը:

Այդ դեպքում, ի տարբերումն գարնանից, երբ հողն ամենամեծ խոնավությունն ունի և ամռանից՝ երբ հողը դժվարությամբ է փիրեցվում, բազմամյա խոտաբույների բուսական մնացորդները ուժեղ կերպով քայլայվել չեն կարող, հետեարար հեշտ յուրացվող ազոտային ազերի միակողմանի ավելցուկը չի լինի:

Այդ պատճառով, ամենալավ բույսը, որը պետք է ցանել խոտագաշից անմիջապես հետո, պետք է համարել զարնանացան փափուկ ցորենը:

Նրանք դաշտային ցանքաշրջանառության բույր բույսերից լավ կարող են օգտագործել 1—2 տարի օգտագործված խոտագաշտի բարենպատ պայմանները:

ԵՐԱՐՍԳԱՐԾՎԱԹԵԱԿԱՆ ԽՈՏԱԴԱՇՏԱՑԻՆ ՍԻՆՏԵՄԻ և ՆՐԻ ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌԱԿԱՆԻՑԵ

Դաշտային ցանքաշրջանառությանը չի կարող լուծել դյուզատանեսական արտադրության բույր խնդիրները։ Նա չի կարող կերով լրիվ ապահովել ոչ մեայն հանրայնացված անառունները, այլ նույնիսկ կոլխոզնիկի կամ սովորողի աշխատավորի անձնական օգտագործման տակ եղած անփառունները։ Դաշտային ցանքաշրջանառության մեջ աննպատակահարմար է մշակել բույր աեխնիկական բույրերը, նա չի ապահովում բանջարանչցային կուլտառաների բարձր բերքը։ Այդ պատճառով յուրաքանչյուր սովորողում ու կոլխոզում երկրորդ՝ կերպային ցանքաշրջանառություն մտցնելու կենսական պահանջ է սուաժանում։

Որպես կանոն, բույր սովորողներում ու կոլխոզներում պետք է կիրառվի երկու ցանքաշրջանառություն՝ դաշտային և կերպային։

Միայն, փոխադարձարար միմյանց հետ կապակցված խոռոշադաշտային այդ երկու ցանքաշրջանառությունների կիրառումը կտպահովի յուրաքանչյուր սովորողի ու կոլխոզի հողային տարածությունների ամենանպատակահարմար ու լրիվ օգտագործումը։ Բայց որում, բույր այսպես կոչված «թափած հողերը» ամայի վայրերը, անասունների ոտնակոխմամբը շարքեց հանգած արստավայրերը, հարսները խամ հողերը, ճահճացած մարգագետինները և այլն աստիճանաբար ներդրավում են ձեզ ցանքաշրջանառության, հաճախ կերպային ցանքաշրջանառության մեջ։

Օգտագործությունից դուրս գցված և շատ ցածր արտադրողականություն ունեցող հողատեսքերի փոխարեն, սոցիալիստական գյուղատնտեսության արտադրության մեջ ստեղծվում են կուլտառական հողատեսքեր՝ վարելահողեր, խոտահարքներ և արտավայրեր։

Աթրային ցանցաշըջանառության կուլուրաների կազմը.—
Խոչսր սխալ կլիներ կերային ցանքաշըջանառությունը դիտել
միայն կերի խոտարությերի կազմով:

Այդ դեպքում աշխատանքի արտազբողականությունը պետք է հիմնվի ոյսուղանոնառեսության ամենաէժան մթերքի՝ խոտի և արտօնավայրի կերի վրա։ Դեռ ալիքին, նման ցանքաշընառության մէջ բազմամյա խոտարութերի կուլտուրայից հետո հողի բնիքիության պայմանները չեն կարող լրիվ կերպով գոտառություն:

Նա (կերի ցանքաշրջանառությունը) կերկներ այսպես կոչված մարդագետիների արժատային բարելավված բոլոր թերությունները, երբ շատ հնացած մարդագետինը վարում էն, (շատ անկատարելազորձված կերպով), նրա վրա 2-3 տարի մշակում են միամյա խոտեր և մասամբ կերի արժատապառուղներ ու հետո նորից ցանում բազմամյա խոտաբույսեր : 10-20 տարվա ընթացքում խոտերը օգտագործելուց հետո, նման մարդագետինը նորից վարում էն և կրկնում նախորդ աշխատանքների ամբողջ ցիկլը : Երկրագործության խոտագաշտային սիստեմի կերային ցանքաշրջանառությունն իր մեջ ընդգրկում է ինչպես միամյա կուլտուրաներ, նույնպես և բազմամյա խոտեր : Վեցիներու մթերատու և բանող անասուններին ապահովում էն խոտով և կուլտուրական արտավայրով :

Բազմամյա խոտաբույսերը միաժամանակ նախապատրաս-
տում են հողի բերրիության անհրաժեշտ պայմաններ, ցան-
քաշը լաւառության մեջ իրենց հաջորդող միամյա բույսերից
ամենաբարձր բերր ստանաբույս համար:

Արամյա այն բուշերը, «որոնց պետք է տեղավորել կերպ-
յին ցանքաշրջանառության մեջ (բանջարեղեն, թելատու ու յու-
ղատու կուլտուրաներ և այլն) տարբերվում են երկու հատկու-
թյամբ:

Մի կողմից նրանք մեծ քանակությամբ ջրի և սննդի օգտագործման կարիք են զգում, մյուս կողմից՝ նրանց մշակումը տևական և ուժեղ պաշտպանության կարիք է զգում հողի վնասատուներից։ Քաշտային ցանքաշրջանառությունը, խոստաշտի կարճ ժամանակամիջոցի օդտապործման հետեանքով, չեն կարող ապահովել վերոհիշյալ կուլտուրաների պահպանը։

Կերպային ցանքաշրջանության խոտարաշտի օգտագործման տևողությունը — Բազմամյա խոտարաշտութեաբի բարձր պա-

հանջները Արխի կերպով բավարարում է կերային ցանքաշղա-
նառության բաղման յա խոտարութերի երկարատև կուլտուրան:

Բարձրամյա խոտարույսերի 4—5 տարվա կուլտուրայի դեպ-
քում հողի մեջ մեռած օրգանական նյութի ձևով մնում է բույ-
սերի սննդի մեծ պաշար: Միամյա բույսերի սննդի բարձր պա-
հանջները հեշտությամբ բավարարվում են՝ հողի մեջ լրացու-
ցիչ հանքային պարարտանյութեր մտցնելով:

Բարձրամյա խոտարույսերի երկարատև կուլտուրան լավաց-
նում է հողի ստրուկտուրան և դրանով իսկ բույսերի համար
լավացնում է ջրի պաշարի պայմանները, առանց որի հանքա-
յին պարարտանյութերի բավարար օգտագործումն անհարին է:

Յանքաշղանառության մեջ խոտադաշտի 4—5 տարվա տեսու-
թությունն առաջ է զայխ նաև դուռ տնտեսական նկատառու-
մով, հետապնդելով մեծ քանակությամբ կանաչ կերի ստա-
ցում: Խոտադաշտի նման տեսողությունն առայժմ կազմում է
հողի վնասառուների, «հողի հողնածության» երկույթների դեմ
պարզաբն միակ հասարակ և ճիշտ միջոցը:

Այդ երկույթից հատկապես ուժեղ կերպով վնասվում են
բույր բանջարանոցային, թելատու և յուղատու կուլտուրա-
ները:

Բանջարանոցային, թելատու և յուղատու բույսերն նմչու
են վնասվում «հողի հոգեածությամելից»: — Այդ բույր բույսերն
իրենց սերմերի մեջ կուտակում են բավականի քանակությամբ
օրգանական բարդ նյութեր: Բոլոր թելատու բույսերի՝ կոտա-
կամի, բամբակի, կանեփի և այլնի սերմերը չուտ բույզ և սպի-
տակուց են պարունակում: Սերմերի յուղն անջատելուց հետո,
ստացվող քուսպն ամենախտացված ազոտային կերերից մեկն է
հանդիմանում:

Նույնը վերաբերում է հատկապես յուղատու բույսերին՝
արեածաղկին, յուղատու կտավատին, ուալսին, մանանեխին և
այլն:

Այդ բույսերի ազոտային նյութերի և յուղերի ստեղծումն
ու կուտակումը ցույց են տալիս նրանց դեպի ջրի և սննդի
պաշարն ունեցած մեծ պահանջը: Որքան ավելի բարդ օրգանա-
կան նյութ է կազմում բույրը, այնքան շատ սննդի և մանա-
վանդ ջուր է վերցնում հողից:

Նրանց երկրորդ առանձնահատկությունն այն է, որ այդ
բույր բույսերը վնասվում են հողի վնասառուներից: Հողի մեջ

Ճճկոսով միկրոսկոպիկ սնկերից : Նրանք հոգի մեջ դարձանում
են բանջարանոցային, թելատու և յուղատու բույսերի կուլ-
տուրայի հետ միասին : Կուտակվելով հողի մեջ, նրանք առա-
ջացնում են այսպես կոչված «հողի հողնածություն» երևությը :
Հողի մեջ որքան շատ են կուտակվում այդ սնկային վնասատու-
ներից, այնքան ուժեղ է ընկնում այդ բույսերի բերքատվու-
թյունը :

Բացի դրանից, բանջարանոցային, թելատու և յուղատու
կուլտուրաների բերքատվության անկման վրա խոչոր չափով
ազդում է հողի մեջ եղած օգտակար բակտերիաների քանակու-
թյան պակասելը : Նրանք ոչնչացվում են հողի միկրոսկոպիկ
կենդանիների (ամյորաների, ինֆուզորիաների, մտրակավոր-
ների, սուտատորիաների և այլ հասարակ կենդանիների) կող-
մից, որոնց թիզն անխուսափելուրեն աճում է բանջարանոցա-
յին, թելատու և յուղատու բույսերի կուլտուրան միենայն
տեղում երկարատև մշակելիս : Հողի օգտակար կենարանական
դործունեությունն ուժեղ կերպով ընկնում է :

Ինչպես պայմանական հոգին հոգնածության դեմ՝ վերեսում
թված բույր վնասատուները, հողային սնկերը և հողում ապ-
րող հասարակ կենդանիները պատկանում են այնպիսի օրդա-
նիութների թվին, որոնք իրենց կենարանործունեության համար
օղի ազատ հոսանք են պահանջում :

Երբ դաշտը երկար ժամանակ (4—5 տարի) ցանված է լի-
նում բազմամյա խոտարույսեղով, հողի մեջ այնպիսի պարման-
ներ են սոտեղծվում, որ օդի ազատ թթվածին թափանցել չե-
կարող և հողային բույր վնասատուները բույրովին ոչնչանում
են :

Այսպիսով, խոտադաշտի տեսողությունը կերային ցանքա-
ւը չանառության մեջ պետք է 4—5 տարի, ամենաքիչը 3 տա-
րի լինի : Այդ ժամկետը ավելի ճիշտ որոշում է անառնազիմի
քանակով, անառունեների տեսակներով, խոտի և կուլտուրական
արտադարյանի պահանջներով :

Վերային ցանքաշրջանառության խոտադաշտի կազմի և նրա
օգտագործման առանձնահատկությունները՝ Միանդամայն
ակնհայտ է, որ կերի ցանքաշրջանառության խոտադաշտի հա-
մար դաշտային ցանքաշրջանառության երկու խոտերի խոտ-
նուրդը պետքական լինել չփ կարող : Որքան երկար է խոտա-
դաշտի օգտագործման ժամկետը, այնքան ավելի բարք պետք

է լինի խոտերի խառնութղը։ Միջին հաշվով նա պետք է բաղկացած լինի խոտերի 4—5 տեսակներից։

Բայս տնտեսական հշանակիման, կերի ցանքաշրջանառության խոռոչաշուր մեծ ժամամբ օդտագործվում է որպես խոտհարք և արոտավայր։ որպես խոտհարք՝ սովորաբար առաջին երկու տարբին, իսկ հետագայում կարող է լինել և՛ խոտհարք և՛ արոտավայր։

Խոտագաշտի վարը պետք է լինի կուլտուրական, այսինքն՝ կատարիլ ուշ աշնանը, և անողայման նախադութանիկավոր դութանով։

Կերային ցանքաշրջանառության մեջ խոտագաշտից հետո բույսերի հաջորդականության կարգի մասին։— Կերային ցանքաշրջանառության մեջ միամյա բուրմերի հաջորդականության կարգը սահմանելիս, առաջին, հերթին անհրաժեշտ է ենել այն բանից, որ բաղմամյա խոտարույսերից ազատված դաշտի սուածին տարբին ճամաշերի վրա կերի արմատապտուղներ չտեղափոխեն, որովհետեւ այդ բուրմերի միջարքային մշակման ժամանակ մեռած օրգանական նյութի ուժեղ միներալիզացիա է անդի ունենում։ Բացի այդ, առաջանում է ազոտային նյութերի ավելցուկ, որպիսին վատ է ազդում կերի արմատապտուղների վրա՝ նրանք վատ են պահպանվում, քանի որ ուժեղ կերպով վնասվում են միկրոօրգանիզմների կողմից։

Վերը թված երկրորդ խմբի մենացած բուրը միամյա բույսերն անարդել կերպով կարող են անդամություններ բաղմամյա խոտարույսերից անմիջապես հետո։

Ցուրաքանչյուր առանձին գեպքում նրանց կազմը ուսուվում է պետական պլանային առաջարկանքով և դրանով իսկ անտեսության մասնագիտացմամբ։ Նրանց մշակման ժամանակաշրջանի անողությունը 6—7 տարուց ավել չպետք է լինի։

ՄԵՐՁԱԵՐՄԱՅԻՆ ՑԱՆՔԱԾՐՁԱՆԱԼՈՒԹՅՈՒՆ

Կերի կուլտուրան անասնապահական ֆերմային մոտեցնելու նպատակով, նրանց ամբողջ բազմազանությունից պետք է առանձնացնել 3 տեսակ։ Այսպես՝ մատղաչների և խողերի արոտային կերը պետք է ֆերմային մոտ լինի։ Պարզ է, որ մատղաչներին և խողերին ֆերմայից հեռու արբածության վրա արածացնելին անհնարին է։

Այնպիսի կերեր, ինչպեսիք են հյութալի արմատապտուղ-

ներն ու պալարապտուղները և սիլոսային կերերը, նույնակես չեղարնիք ֆերմայից հեռու մշակել:

Թբանք բոլորը խոշոր քանակությամբ ջուր ևն պարունակում և մեծ հեռավորությունից փոխադրելը ձեռնուու չէ տնտեսության համար: Այդ բույսերը պետք է ֆերմային ժոտ լինեն: Այդ պատճառով անառնապահական խոշոր կոլխոզներում ու սովորովներում այդ երեք տեսակ կերերի արտադրությունն անհամատելի լրացանուր կերային ցանքագլանությունից, սաեղծել այսպես կոչված, մերձֆերմային հատուկ ցանքաշրջանառություն:

Մերձֆերմային ցանքաշրջանառության բազմամյա խոստրացյանքը և նրանց օգտագործումը.— Մերձֆերմային ցանքաշրջանառության համար բազմամյա խոստաբույսերի խառնուրդը պետք է կազմել 4—5 տեսակից: Այդ խոտերը պետք է արտադրվածի խոտանուսակերից լինեն: Բազմամյա հացազգիներից կարելի է խորհուրդ տալ մարդապետանային շյուղախոտը (լոցուցուց օՎԵՆԻՑ) մարդապետանային դաշտախոտը (МЯТЛИК), սպիտակ ապրանուուկը (белую полевицу), անգլիական ուայլրասը և կարմիր շյուղախոտը (красную овсяницу): Դրանք բոլորն էլ արածելուց հետո արագ աճում են: Հացազգիներից պրոտավայրի համար անպետք են ողնախոտը և ֆրանսիական ռայդբասը: Բազմամյա թիթեռնածաղկավորներից կարելի է օգտագործել գեղին առյօնութը, շվեդական երեքնուուկը, սպիտակ երեքնուուկը և ելականման երեքնուուկը (земляничный клевер): Այդ բոլոր խոտերը հետությամբ աճում են նույնիսկ «չխարների արածելուց հետո:

Թիթեռնածաղկավորները պետք է կազմեն բազմամյա խոտաբույսերի խառը խոտացանքի 10—20%-ը: Մերձֆերմային ցանքաշրջանառության համար բազմամյա խոտաբույսերի խառնուրդի արվելի ճիշտ կազմը սահմանվում է յուրաքանչյուր կոնկրետ տնտեսության մեջ, և ներկով նրա աշխարհագրական դիրքից և անտեսական պահանջներից:

Սուածին տարին խոտերն անհրաժեշտ է օգտագործել միայն որպես խոտհարք (ընդգծ. խմբ.): Այդ տարին արածացնելն անթույլատելի է: Դա շատ վատ է անդրադասնում բազմամյա խոտաբույսերի հետազա զարդացման վրա: Խոտադաշտի օդատագործումը, որպես արտապայման, սկսում է միայն երկրորդ տարուց հետո:

Բաղմամյա խոտաբույսերի օդտաղործման տեսլությունը
մերձֆերմային ցանքաշրջանառության մեջ կարող է լինել 4—5
տարի:

Միամյա կերարույսերի հաջորդականությունը մերձֆերմա-
յին ցանքաշրջանառության մեջ՝ Կուլտուրական վարելց հե-
տո, խոտաղաշտում առաջին տարին ցանվում են սիլոսային
բույսեր՝ եղիպտացորեն, արևածաղիկ և չափարի սորգո։ Վերը
նշված պատճառներով արմատապատճերն այսուեղ պետք է
տեղափորել։ Խոտերից հետո երկրորդ, երրորդ և նույնիսկ
չորրորդ տարին կարող են և պետք է զնան կերի արմատա-
պատճերը, կարտոֆելը և միամյա կերախոտերը։

Վերջին դաշտում ցանվում է ծածկող բույս, որի տակ
բաղմամյա խոտաբույսերի խառնուրդի ենթացանք է կատար-
վում։

Մերձֆերմային ցանքաշրջանառության մեջ լավ ծածկող
բույս պետք է համարել խոտական ռայդրասի ցեղից՝ վեստեր-
վուլյան ռայդրասը։ Այն հնձում են, որպես խոտ։ Խոտական
ռայդրասի սերմ չունենալու գեղքում, այն կարելի է փոխա-
րինել հատիկային ծածկող բույսով։

ԲՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

Մարդկային հասարակության մեջ բոլոր արտադրություններից գյուղատնտեսությունն ավելի մեծ չափով է կապված հողի մակերեսի բնության հետ:

Նա այն օգտագործում և փոխում է իր արտադրության պրոցեսում:

Սակայն այդ օգտագործումը տարբեր է կապիտալիստական և սոցիալիստական գյուղատնտեսության մեջ:

Կապիտալիզմը գիշտոիչ կերպով է օգտագործում բնությունը: Նման օգտագործման արդյունքը լինում է այն, որ արգավաճեց հողերը վեր են ածվում անապատի: Դա հատկապես ցայտուն կերպով արտահայտվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այստեղ, զարգացած արդյունաբերությանը զուգահեռ, հողի բերրիությունն ընկնում է: Միլիոնավոր հեկտարներով հողեր ենթակա են ջրի և քամու տարերային ազդեցության: Հողի լվացումն ու քամհարումը հասել են բացառիկ մեծ չափերի, աճում է կրնակի աղիացող հողերի տարածությունը:

Կապիտալիստական պայմաններում գիշտոիչ կերպով «ընչացվում» են բնական անտառների և խոտի ծածկոցը: Դրա հետևանքով առաջանում է ամբողջ երկրի կլիմայական պայմանների խփությանը: Այսպիսիք են կապիտալիզմի կողմից բնությունն «օգտագործելու» արդյունքները:

Սոցիալիզմը վճռականապես փոխում է մարդու վերաբերմունքը գեղի բնության ուժեղը: Ամբողջ բնությունը, սոցիալիստական շինարարության պահանջներին համապատասխան փոխում է իր դեմքը: Մեր երկրի ժողովուրդը անտեսորեն է անօրինում բնության բոլոր հարստությունները՝ օվկիանոսների

և գետերի ջրերը, հողի լնդերքը, բերրի հողերը, բույսերը և
կենդանիները:

Կապիտալիստական կարգերի ոչնչացմամբ հողն ազատա-
գրված է մասնավոր անվականությունից: Վերացված են բնու-
թյան վրա ներազգելու խոչնդուսները: Այդ պայմաններում,
բնությունը դառնում է սոցիալիստական ամբողջ հասարակու-
թյան հարստացման միջոց: Սոցիալիստական գիտությունը
բնության վրա ներազգելու ուղիներ է նշում: Այդ ազգեցու-
թյան համար արդյունաբերությունը մեղ զինում է անհրաժեշտ
միջոցներով: Հսկայական տարածությունների վրա գիշատիչ
կերպով ոչնչացված անտառներն ու խոտերը նորից կըրավեն
իրենց հատկացված տեղը:

Տափաստանային տարածությունները կծածկվեն անտառա-
չերտերով և պտղատու տունկերով:

ԵՐԿՐԱԴՈՒԹՅՈՒՆ ԽՈՏԱԴԱՇՏԱԾԻՆ ՍԻՄՑԵՄԸ ՈՐՊԵՍ
ՈՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՁԱԿԱՑՈՒ

Երկրագործության խոտադաշտային սիստեմն իրագործվում
է խոտադաշտային ճիշտ ցանքաշրջանառությունների ձևով, ո-
րոնց կիրառումը սովորական ու կոլխոզների դաշտերում հո-
ղերի ճիշտ օգտագործում կնշանակի: Մեր մեծ երկրի հողերը
կկերածվեն բարձր կուլտուրականության, բարձր արտադրողա-
կանության հողերի: Արտադրության միջոցների մասնավոր սե-
փականության կապանքներից աղատադրված սոցիալիստական
հասարակությունը վճռականորեն փոխում է ամբողջ երկրի
բնույթը:

Ստրուկտուրային կուլտուրական հողերի վրա տեղացող
անձրեալյին և հալչող ձյան բոլոր ջրերը լրիվ կերպով թափան-
ցում են հողի մեջ: Այն ամբողջությամբ պահպանվում է հողի
մեջ՝ բույսերի կարիքների համար: Իսկ երբ հողի մեջ չառ
ջուր և միաժամանակ յուրացվող առաստ սնունդ կա, բույսերը
երբեք չեն տուժի հողի չորությունից, այրվելուց, լիսկելուց և
փափուց: Վերանում է այն դրությունը, երբ բարձր բերքն ու
նրա կայունությունը կախված էր գարնան և ամռան անձրե-
ների հաճախականությունից:

Բարձր բերքն ու նրա կայունությունը կախված է առաջա-

վոր ազրոտեխնիկայի կիրառումից, աշխատանքային պլոցեսների մեքենայացումից և կատարվող աշխատանքի որակից :

Հողի մեջ ստեղծելով այնպիսի պայմաններ, երբ անձրեւյին ու ձյան ամբողջ ջրերն անցնում են ստրոկատուրային հողի մասսայի մեջ, դրանով մենք վերացնում ենք նրա մակերեսով ջրի հոսելու հնարավորությունը:

Այդ հանգամանքը երբեք չի կարելի թերապեատել:

Կանխելով ստրոկատուրային հողի մակերեսով անձրեւյին ձյան ջրի հոսելը, դրանով իսկ վերջ կտրվի հողի բերքի վարելաշերտի լվացմանը և մատղաշ ծիւերի ոչնչացմանը: Կղաղարի հողերի ողողումը և խոր հեղեղատաների գոյացումը, որոնք չափազանց դժվարացնում են մեքենայացված հողամակման աշխատանքները և իջեցնում են արանապորտի աշխատանքի արտադրողականությունը: Երբ հողի մակերեսով ջրի հոսանք չկա, կամ նա շատ թույլ է, գետերը չեն կարող արագ կերպով հորդանալ: Նրանք չեն լցվում հորդ և հեղեղային անձրեների ժամանակ ուժեղ հոսող ջրի հակայական հոսանքով: Դրանով իսկ հողերի կուլտուրական դրությունը կանխում է մեր երկրի տնտեսությունը անխուսափելով տարերային աղետներից, որոնք սովորական երեսությ են գետերի անզուսալ հորդացման դեպքում:

Երբ ջրի մակերեսային հոսանքը թուլացած է, գետերի հունը ավաղով չի լցվում, նրանք չեն կորցնում իրենց նավազնացության հատկությունները: Ջրալիցք մարդագետինները նույնպես ավազով ու փոշեով չեն ողողվում, հետեւապես, չի իջնում նրանց բարձր բերրիության բնական պայմանները:

Ստրոկատուրային հողերը քամիների բացասական աղղեցությանը չեն ենթարկվում: Նրանց վրա անհնարին են դառնում փուչոտ և, «սև» փոթորկիները:

Այդպիսով, սոցիալիստական դաշտերում երկրագործության խոտագաշտային սիստեմի կիրառումը ուժեղ կերպով ազլում է բնության վերափոխման վրա:

Սակայն ճիշտ չէր լինի սահմանափակել բնության վրա ներազելու միայն նման եղանակով:

Երկրագործության խոտագաշտային սիստեմի կիրառումը բնության վերափոխությունն ընդդրկում է հարաբերականորեն՝ միայն վարելահողի տարածությունով:

Երկրագործության խոտագաշտային սիստեմի անմիջական

աղղեցությունը բնական պայմանների վրա, ի հարկե, չի սահմանափակվում այդ տարածությամբ: Այդ աղղեցությունն ավելի լայն է: Իսկ մեր երկրի ամբողջ ժողովրդական տնտեսության և մասնավորապես գյուղատնտեսական արտադրության շահերից ենելով, բնության վերափոխումն աստիճանաբար պետք է ընդդրկի մեր պետության ամբողջ տերիտորիան:

ՆԱԽԱԳՈՅԵՆԱԿՈՒՄՆԵՐԻ ՆՇԱՆԱՌԱՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԱԾԻ
ՓՈՓՈԽԱՎՈՅԱՆ ՎՐԱ.

Բնության վերափոխելու խոչը միջոց է հանդիսանում նույնպես ծառատնկումը: Առանց ծառատնկման անհնարին է օգտագործել միշտ ցանքաշրջանառության և ընդհանրապես կուլտուրական երկրագործության ամբողջ սիստեմի բոլոր առավելությունները: Ծառատնկումները որոշ պայմաններում՝ կարող են լինել որպես անտառներ, այլ պայմաններում՝ որպես անտառային, կամ պտղատու տունկերի շերտեր: Երկրի ամբողջ ժողովրդական տնտեսության համար ինչպես բնական, նույնպես և արհեստական ծառատնկումների նշանակությունը չափազանց մեծ է:

Անտառի միջոցով մենք կարող ենք փոխել և կարգավորել գաշտերի խոնավությունը և ամբողջ երկրի ջրային տնտեսությունը: Ծառատնկումների աղղեցությունը գաշտերի խոնավության երկրի և ջրային տնտեսության վրա արտահայտվում է ծառերի սաղարթի և անտառային ցամքարի միաժամանակյա աղղեցությամբ:

Ինչպիս են ազգում ծառերի սաղարթները անտառում ջուր կուտակելու վրա.— Ծառատնկումները բաղմայած ծառաբույսեր են՝ ուժեղ զարգացած վերերկրյա սաղարթով: Երբ անձրև է զայխ, սաղարթնի իրեն սոստափայտերի, տերեների և ճյուղերի վրա պահում է տեղած ամբողջ անձրևների մոտավորապես 25%-ը: Այլ ջուրը չհասնելով հողին, գոլորչեանում է սաղարթի մակերեսից:

Հետեաբար հողի մեջ ներթափանցում է ամբողջ անձրևացը մոտավորապես 75%-ը:

Այլ կերպ է անդրադառնում ծառերի սաղարթի աղղեցությունը ձմեռային տեղումների վրա: Քամու հոսանքն անտառում հանդիպելով առաձգական, կենդանի սաղարթին՝ թուլա-

նում՝ է։ Այդ պատճառով անտառում և նրա մոտակայքում ձյունը ոչ միայն քամատար չի լինում այլ կուտակվում է, հասնելով մեծ խորության։ Զյան հաստ և հավասարաչափ ծածկոցը տաքացնում է անտառային հողը և պակասեցնում նրա սառչելու խորությունը։ Այդ հանդամանքն իր հերթին արագցնում է նրա հալչումը։

Անտառային հողի հալչելու արագացման վրա մեծ ազդեցություն է ունենում նաև ծառերի սաղարթը։ Նա տաքանում է ձմռան արեով։ Արեւի տաքությունը կենդանի խոնավ բնով անցնում է հողին։ Նա տաքացնում է բնի մոտ եղած ձյունը։ Դեռ ձմռանը բնի շուրջը հալվող ձյան վրա գոյանում է ձագարաձև գողավորություն։ Միաժամանակ արեւի տաքությունն անցնում է ծառի հաստ արմատներին, որոնց շուրջը գտնված հողը նույնպես հալչում է։

Զյան հալչումը աստիճանաբար ուժեղանում է։ Յուրաքանչյուր ծառի շրջապատի հողն օղակաձև մերկանում է ձյունից։ Այդ բոլորի արդյունքը լինում է այն, որ անտառներում ձյունը սկսում է հալչել 10—20 օր առաջ, քանի բացատներում։

Բայց ծառերի սաղարթը միաժամանակ ստվեր է արձակում ձյան վրա։ Այդ պատճառով ձյունը անտառում հալչում է դանդաղորեն և ավելի երկար ժամանակամիջոցում, քանի դաշտերում, մարդագետիններում, կամ տափաստաններում (10—15 օրով)։

Գոյացած ձյան ջուրն ամրողացնին ներթափանցում է անտառային հողի մակերեսը ծածկող փափուկ անտառային ցամքարի մեջ, իսկ վերջինից անտառի հալչող հողի մեջ։ Մինչդեռ դաշտերում և մարդագետիններում հալչող ձյան ջուրը սովորաբար հոսում է դեպի հեղեղատներն ու հովիտները, հողի մեջ թափանցելով չչին քանակությամբ։

Այս տարբերության մեջ է արտահայտվում անտառի՝ իր ծածկոցի տակ, հողի վրա ջրի պահպանման հսկայական ազդեցությունը։

Անտառային ցամքարի ազդեցությունը անտառում ջուր պահելու և դաշտերի ու գետերի խնամավացման վրա։ Անտառային ցամքարը վերևից միշտ փափուկ է լինում։ Անձրեւ և ձյան ջուրն ամրողացնելությամբ թափանցում է նրա մեջ և պաշտպանվում է գոլորշիացումից։ Թափանցած ջրի մեծ մասը ծծվում է անտառային ցամքար կաղմող՝ մեռած շվերի, փշատերմների,

տերեների և կեղմէի կտորների մեջ։ Իսկ նրանց մեջ ազատ մնացած ջուրը շատ դանդաղ (մի կիլոմետր 2 ամսում) հոսում է վայրի թեքությամբ, դրանով իսկ բարձրացնելով շրջապատող դաշտերի և մարդագետինների խոնավությունը։

Զուրն անտառային հողի մեռած ծածկոցից դուրս հոսելուց բացի, նա անտառային ցամքարից թափանցում է ցած։ Այդ ըրի մի մասն օգտագործում են ծառերի արժատները։ Մյուս մասն ավելի խորն է հոսում և կազմում է սոտրերկիյա ջրերի մի քանի շերտ։ Վերջինս բատ տեղի թեքության, դանդաղ հոսում է ավելի խոր շերտեր և աստիճանաբար սնուցում գետերը։ Զյան չուտ սկսվող և ուշ վերջացող դանդաղ հալչումն անտառներում անզուտպ հեղեղումներ չեն առաջացնում։ Զրալիցք մարդագետինների վրա անբերրի ավաղի և փոշու շերտ չեն ըստում։ Ընդհակառակը դանդաղ տարածվելով, ջուրը՝ ջրալիցք մարդագետինների վրա թողնում է հողի բերրիության բարձր պայմաններ ստեղծելու համար ամենաթանկարժեք, ամենամասն մասնիկները—տիզմը։ Վերջինս բազկացած է լինում՝ կիսով չափ օրդանական նյութից և կլոսով չափ հանքային կավից։ Զուրն իջնելուց հետո, այլ լորձնային նստավածքը չորանում, ճաքճքում է և կազմում է հողի չափազանց կայուն կնձկային ստրուկտուրա։ Ջրալիցք մարդագետինների այդպիսի հատիկավոր հողերը աշքի են ընկնում բացառիկ բարձր բերրիությամբ։ Այսպես օրինակ հյուսիսային ոչ մեահողային գոտու այդպիսի մարդագետինները յուրաքանչյուր 1 հեկտար խոտի 2 հնձից մինչև 160 ցենտներ բարձրորակ բերք են տալիս։ Դրանք ամենալավ հողերն են ցորենի համար, իսկ արդյունաբերական ձեռնարկություններին և քաղաքներին մոտ շրջաններում՝ բանջարանոցային կուլտուրաների համար։

Նման հողերի կնձկային ստրուկտուրայի յուրաքանչյուր տարվա մասնակի կորուստն ամեն տարի վերականգնվում է նոր տիրմով, եթե անտառները դանվում են գետերի շրջակայրում։ Ծառատնկումների բարձրապահնակն և դաշտապահների հոսում շրջաններում՝ բանջարանոցային կուլտուրաների համար։

Ծառատնկումների պահպանակն և դաշտապահնակն դեմքը— Ծառերի սաղարթի և անտառային ցամքարի միասնական ազգեցությունը ձյան հալչելու և ջրի հոսանքի վրա ուժեղ միջոց է հանդիսանում հողը լվացումից ու հեղեղումներից պաշտպաննելու, ինչպես նաև պայքարի միջոց՝ հեղեղատների գոյացման և լեռնալանջերի լվացման դեմ։

Մառատնկումները մեղմացնում են քամու ուժը։ Դրանով

իսկ նրանք հոգը պաշտպանում են չօրացումից և նրա մանր մասնիկների քամատար լինելուց: Վերջապես, ծառատնկումներն օդի չորության դեմ պայքարելու ամենալավ միջոցն են հանդիսանում: Երբ արևելքից չոր և տաք քամիներ են փչում (խորչակ), դյուղանտեսական բույսերն ինտենսիվ կերպով ջուր են գոլորշիացնում: Խիստ ուժեղ քամիների ժամանակ բույսի ջրի ծախսումը չի լրացվում նրա մուտքով: Այդ թերություններն ավելի ուժեղ է արտահայտվում հերձանքների կաթված սկսվելիս, երբ ամենաչոր ժամանակ հերցանքները բաց են մոււմ: Այդ պայմաններում բաւյսը կամ բուրովին ունչանում է, չորանալով արժատի վրա, կամ ենթարկվում է «քամաքաշի», ինչպես այդ աեղի է ունենում հացարույսերի մոտ:

Երբ չոր և տաք քամիները հանդիպում են ծառերի առաճգական սաղարթներին, կանգ են առնում և գեղի վեր են բարձրանում: Այսպիսով գաշտային բույսերը պաշտպանվում են քամու ազդեցությունից:

Պարտիան և կառավարությունը հետևողականորեն անց են կացնում հետեւյալ քաղաքականությունը. — անտառների օգտագործման կարգավորումը, ջրապահապահն զոնաներում անտառների պահպանումը, նրանց վերականգնումն այդ զոնաների այն հատվածներում, որտեղ կատարվել են անսխատեք և երբեմն էլ գիշատիչ, վնասարարական անտառահատումներ և վերջապես՝ բուրու տափաստանային մաքրերում այսպես կոչված դաշտապաշտպան անտառային շերտերի պլանային ծառատնկումներ կատարելը:

Այդ աշխատանքների կարգն, ըստ դաշտերի ջրային ոեժինի, ամբողջ երկրի ջրային տնտեսության վրա վորովման և ըստ երաշտի դեմ պայքարի՝ արթելու է, նայած հանրապետությունների, մարզերի և երկրամասերի տեղադրության:

Գյուղատնտեսական նշանակություն ունեցող անտառներ. — Անտառամարդագետնային զոնայում միշտ կարելի է հանդիպել տարբեր բարձրությունների վրա գտնվող վայրերի: Հասկանալի է, որ ամենաբարձր վայրերի հողերը միշտ էլ սակալ չափով են ապահովված ջրով և ընդհակառակը գետերի, գետակների ցածրադիր հովիտները և այն միշտ ջրի մեջ քանակության պաշար ունեն: Տարբեր բարձրության վրա դտնվող հոգամասերի խոնավության այդ բնական անհամաչափությունը

Հաճախ խոշմղում է հանդիսանում նրանց նպատակահարմար օգտագործելու խնդրում:

Ցուրաքանչյուր ըրջանում հողի խոնավության այդ բնական անհամաշափության վերաբաշխման վրա աղքելու գլխավոր ժիջոց են հանդիսանում անտառները: Այդ նպատակի համար դյուրատնտեսական նշանակություն ունեցող անտառները պետք է տնկվեն ամենաբարձր տեղերում՝ ջրբաժան գծերի սահմաներում: Ծառերն ավելի լավ են օգտագործում ջրբաժան վայրերի ջրի և անդի խիստ սահմանափակ պաշարը:

Եթե ջրբաժան վայրերն անտառապատված են, ապա հողի ջուրը անտառային ցամքարով դանդաղորեն հոսում է գեղեցիկ լանջերը: Այդ հոսանքն այնքան դանդաղ է, որ մի անձրեխց մինչեւ մյուս անձրել չի դադարում: Նա անբնդհատ հոսում է դեպի լանջերի վրա մշակված դաշտերը: Գյուղատնտեսական նշանակություն ունեցող ջրբաժան անտառը պետք է օգտագործվի մշակված անտառի սխտեմով: Այդ սխտեմի ժամանակ համարած անտառահատումն արգելվում է:

Անտառահատումն անց է կացվում միայն ընտրովի կերպով, անտառի ինամքի կարգով: Երա ժամանակ արհեստական անտառանորոգմամբ զբաղվելու ոչ մի անհրաժեշտություն չկա, որովհետև անտառը բարձրանում է ինքնացանությամբ, բնական ձանապարհով: Բայց որպեսզի անտառի այլպիսի բնական նորոգումը նորմալ ընթանա, դյուղատնտեսական նշանակություն ունեցող ջրբաժան անտառներում պետք է արգելել անտառուներ արածացնելը:

Ծառանկումների դաշտապաշտպան շերտերը.— Տափառանային մարզերում շատ հաճախ չկան որոշակի արտահայտված ջրբաժան գծեր: Տափառանի մակերեսը հավասարեցված է: Այդ պատճառով անտառատնկումների ձեռքն այսուեղ այլ են:

Տափառանային մարզերում անտառապատումն անց է կացվում անտառային պտղատու և ընկուղապտղային ծառատեսակների շերտերի ձեռով, քամիներին դիմադրով անտառանդրերի պաշտպանությամբ:

Անտառային և պտղատու ծառատեսակների շերտերի անկման գլխավոր կանոնն այն է, որ տնկումներն անպայման կատարվեն ամառային դիմավոր քամու ուղղության լայնքով: Այդ շերտերը տնկվում են 9—11 և ավելի չարքով, 15—30 մետր ընդհանուր լայնությամբ: Երանք անպայման հատվում են լայնությամբ կտրող ավելի նեղ, մինչև 10—25 մետր շերտերով:

Յուրաքանչյուր կոլխոզում և սովորում դաշտապահուան
անտառաշերտերի սխառմը զգալիորեն փոխում է դաշտերի բո-
նավությունը և դաշտային բույսերը պաշտպանում է օդի չո-
րությունից : Տափաստանային պայմաններում նրանք միաժամա-
նակ տալիս են անհրաժեշտ չափով վառելիք, ինչպես նաև
տնայնագործական շնչածքների համար՝ շնչանյութ : Վերջա-
պես, ամենապլիսալորը՝ անտառային այդ շերտերը կարող են
վերածվել պաղատու (ընկույզի, և հատապտղային) շերտերի :
Օրինակ, երանողարի երկրամասի Ստարումինսկու շրջանի ա-
ռաջավոր կոլխոզները դաշտապահուան անտառաշերտերի
տնիքան աշխատանքներն անց են կացել 1933 թվից, ցորենը
մշակելով ծիբանի ու տանձի ծառերի պաշտպանության տակ :

Ստալինդրագի մարզի Բուլգարինսկու ՄՏԿայանը նույնպես
վաղուց արդեն կոլխոզներում անց է կացնում պաղատու ծառա-
շերտերի տնկման սխառմը : Քամուց պաշտպանող անտառաշեր-
տերի արտադրական նշանակությունը լավ երեսում է Կրասնոգա-
րի երկրամասի Վաննովսկու շրջանի «Կուբան» սովորվի փոր-
ձից, որտեղ դաշտապահուան շերտերը 1935 թվին հացահա-
տիկների բերքատվությունը բարձրացրին մեկ հեկտարից, մե-
ջին հաշվով, 8 ցենաներով (600 հեկտար տարածության վրա) :

Մեր մեծ երկրի աշխատավորները բարձրաթիվ եղանակներով
ու միջոցներով փոփոխում են երկրի գեմքը, բնույթը, կլիման :
Այդ միջոցների թվում երկրագործության խոտապահուային սիս-
տեմին և ծառատանկությունների սխառմին անկարած խոչը նշա-
նակություն է արվում :

Երբ ՄՄՌ բոլոր տափաստանային մարզերը, ընդհուպ նրա
սիստական սահմանները հծածկվեն ծառաշերտերի ցանցով, իսկ
նրանց մեջ կլիմեն միաժյա բարձր բերքատու բույսերով և բար-
ձրամայա խոտարույսերով մշակված կուլտուրական դաշտեր, այն
ժամանակ մեր ժողովրդական անտեսությունը բույրովին կդա-
դարի բնական աղետների ազդեցությունը զգացնուց : Միայն
պատճաղրույցներում հիշողություններ կմնան բնույթան
տարերային աղետների մասին :

Արեի ճառագայթների էներգիան կկանվի կանաչ բույսե-
րի կողմից և հատիկի, սպիռուակ բամբակի և չյութալի պտուղ-
ների կվերածվի : Անպատուզ անապատները կվերածվեն ծաղկող
անսահման այդիների : Բնությունն ամբողջությամբ ի սպա-
կդրվի սոցիալիզմին :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԶԱՐԱՆ	հջ
ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ	3
ԱՐԵՒ է ՆԵՐԳԻՄՅԻ կազումը գյուղատնտեսության արտադրության խնդիրն է	5
Բույսի կյանքի պայմանները	5
Բուսաբուծությունը որպես գյուղատնտեսության արտադրության առա- ջին «ցեխ»	6
Անասնապահությունը որպես գյուղատնտեսության արտադրության երկրորդ «ցեխ»	9
Երկրագործությունը որպես գյուղատնտեսության արտադրության եր- րորդ «ցեխ»	13
Գյուղատնտեսության արտադրության երեք «ցեխների» անխղելիու- թյունը	16
ԳԼՈՒԽ—ԲԱՌԱՋԻՆ—ԲՈՂԵՄԻՐԵՎԻ ջրի և սննդի փոխարարելուրյունը հօդում	17
Բուսաբուծության հիմնական օրինաբը	19
«Հողի բերրիության անկման» բուրժուական «օրենքի» անանկությունը	21
Բույսերի կյանքի պայմանների երկու խումբը	23
Հողի բերրիությունը	23
Հողի բերրիության կախումը նրա ստրուկտուրայից	24
Կնձկային ստրուկտուրայի քայլայման և հողի կայունության կորցնելու պատճառները	31
Ի՞նչ է երկրագործության սիստեմը	32
ԳԼՈՒԽ ԵՐԻՐՈՒԹԻՒՆ.— Երկրագործության սիստեմը	33
Երկրագործության հին սիստեմները	33
Երկրագործության խամային սիստեմը	33
Երկրագործության խոպանային սիստեմը	33
Երկրագործության երեային սիստեմը և հողի ստրուկտուրան	36
Երկրագործության պատափակային սիստեմը	40
ՑԵԼ որպես մոլախոսերի գեր պայքարի միջոց	43
Դաշտային խոտացանություն	44
Երկրագործության խոտացանություն սիստեմը	45
ԷԼՈՒԽ ԵՐԻՐՈՒԹԻՒՆ.— Խոտացանություն կազմակերպումը ցանեացանառուրյան և զարգացման համար	48
Միամյա և բազմամյա խոտաբույսերի զարգացման կենսաբանական առանձնահատակությունները	48
Խառն բազմամյա խոտաբույսերի մշակության նշանակությունը	55
Բազմամյա խոտաբույսերը ցանելու եղանակները	62
Բազմամյա խոտաբույսերի ցանելու ժամանակը	63
Խոտացաշտը խնամելու եղանակները	64
Խոտանձի ժամանակը	69
Բազմամյա խոտաբույսերի փոշխումը և սնուցումը	72
Խոտացաշտը որպես արտավայր օգտագործելը	73
Խոտացաշտը վարելու ժամանակը	74
ԳԼՈՒԽ ԶԵՐԻՐՈՒԹԻՒՆ.— Հողի մշակման սիստեմները	76
Հողի մշակման հին սիստեմները	77

Հողի մշակման հիմունքները նախախոփիկ ունեցող գութաններով	85
Հողի մշակման հիմնական կամ ցրտահերկի սիստեմը	88
Հիմնական վարը գարնանը կատարելու վնասը	99
Գարնանացան կուլտուրաներին արամագրվող հողի գարնանային նախացանքային մշակման սիստեմը	109
Ցրտահերկի վաղ գարնանային քառշակումը	100
Աշնանացանի հողի մշակման սիստեմը	104
ԳԼՈՒԽ ՀԽՆԴՅՈՒԹ.—Հողի բերդուրյան հիմնական պայմանները	115
Հողի առավել բարձր թթվության և հիմքայնության փոփոխությունները	115
Հանքային և օրգանական պարարտանյութերի միատեղ կիրառման նպատակահարմարությունները	120
Օրգանական պարարտանյութերի պարաստումը և նըանց կիրառումը	122
Խոսադաշտային ցանքաշրջանառություններում	122
Խոսադաշտային ցանքաշրջանառություններում կալիումի պարարտանյութեր մտցնելու մասին	126
ԳԼՈՒԽ ՎԵՃԵՐՈՒԹԻՒ. —Խոտաղաւային ցանքաշրջանառուրյունների ազրուելու հիմական ճիշտությունները	128
Խոտադաշտային ցանքաշրջանառության բույսերի երեք խուժ մը	130
Գյուղատնտեսական միամյա բույսերի երկու արտադրական խուժ մը	130
Երկրագործության խոտադաշտային սիստեմի դաշտային ցանքաշրջանառությունը	132
Երկրագործության խոտադաշտային սիստեմի կերի ցանքաշրջանառությունը	139
Մերձֆերմային ցանքաշրջանառություն	142
ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՒԹԻՒ. —Ենուրյան սոցիալիստական վերափոխումը	146
Երկրագործության խոտադաշտային սիստեմը որպես բնության կերպարություն Փակուրը	147
Ծառատնկումների նշանակությունը կլիմայի փոփոխության վրա	149

Թարգմանեց՝ Ա. Տ. Անտոնյան
Թարգմ. խմբագիր՝ Վ. Ս. Մկրտչյան

Վ.Յ. 1629. Պատկեր 22. Տիրաժ 1500.

Տպագրական 10 մամ. Հեղին. 8,5 մամ. Մեկ
մամուլում 37440 նշան. Ստորագրված է
տպագրության 28/II 1942

Հայոց Հայութ տպարան, Երևան, Լենինի 85

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008885

ԳԻՆԸ 3 Ռ. 25 ԿՈՊ.

A ⁱⁱ 17925

17925